# ՆՈՐ ՋՈՒՂԱ

ՏԵՂԵԿԱՏՈՒ ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ   ԺԵ ՏԱՐԻ   ԹԻՒ 122-123   ՍԵՊՏԵՄԲԵՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ 2017

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԱՐԱՆ՝ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ



Երեքշաբթի՝ 2017 թւականի սեպտեմբերի 12-ին, Նոր Ջուղայի հայոց ազգ. կրթահամալիրի «Ալենուշ Տէրեան» դահլիճում, նախաձեռնութեամբ Սպահանի հայոց թեմի Թեմական խորհրդի եւ կազմակերպութեամբ Առաջնորդարանի դիւանատան ու հանրային կապի գրասենեակի տեղի ունեցաւ պաշտօնական նամակագրութիւնների ուսուցման դասարան:

Ծրագրին որպէս ունկնդիրներ մասնակցել էին՝ Ս. Ամենափրկիչ վանքի պաշտօնէութիւնը, հայոց ազգ. դպրոցների տեսչութիւններն ու ուսուցչական կազմերը եւ միութիւնների վարչութիւններից ներկայացուցիչներ: Շուրջ երեք ժամ տեւողութեամբ այս դասարանում պարսկերէն լեզւի եւ գրականութեան դոկտ. Մեհդի Սալմանին դիւրըմբռնելի բացատրութեամբ ներկաներին մանրամասնութեամբ ուսուցանեց պաշտօնական նամակագրութեան հիմունքները:



## ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ ՄԵԾ ՇՈՒՔՈՎ ՆՇՒԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ 26-ԱՄԵԱԿԸ



Սպահանի հայոց թեմի Թեմական խորհրդի նախաձեռնութեամբ, չորեքշաբթի՝ 2017 թւականի սեպտեմբերի 27-ի երեկոյեան, Ն. Ջ. Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան սրահում, նշւեց Հայաստանի Հանրապետութեան վերանկախացման 26-րդ տարեդարձը: Ծրագրին ներկայ էին՝ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը, Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանը, օրւայ բանախօս, Հայաստանից ժամանած ազգային-քաղաքական գործիչ Սիմոն Սիմոնեանը, հոգեւորականաց դասի, ազգային մարմինների ու շրջանի Հայ Դատի յանձնախմբի ներկայացուցիչները եւ հոծ թւով ժողովուրդ:



Տօնակատարութիւնն սկիզբ առաւ Իրանի Իսլ. ու Հայաստանի Հանրապետութիւնների դրօշների ծածանմամբ եւ օրհներգերի հնչեցմամբ: Դրօշակի արարողութիւնը կատարեց Նոր Ջուղայի Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան Սկաուտական միաւորի անդամների միջոցով:



Յաջորդիւ ողջոյնի եւ շնորհաւորանքի խօսքերով ելոյթ ունեցաւ երեկոյի հանդիսավար Մեղրի Ղուկասեանը, ով ընթերցեց նաեւ Իրանում ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան Արտաշէս Թումանեանի ուղերձը սոյն տօնի առթիւ: Ուղերձում պրն. դեսպանը շնորհաւորելով առիթի կապակցութեամբ եւ նշելով, որ Հայաստանի երիտասարդ պետութեան համար կարեւոր է ժողովրդի բարեկեցութիւնը, երկրի սոցիալ-տնտեսական զարգացումը, պաշտպանունակութեան ամրապնդումը եւ հարեւան երկրների հետ բարիդրացիական յարաբերութիւնների հաստատումը՝ առաջնահերթ նշանակութիւն էր տւել Հայաստան-Իրան միջպետական յարաբերութիւնների բարձր մակարդակի պահպանմանը: Արտաշէս Թումանեանն աւելացնելով նաեւ, որ Հայաստանի համար կարեւոր է այս բարդ տարածաշրջանի անվտանգութիւնը եւ պետութիւնը դեմ է ահաբեկչութեանն ու ծայրայեղականութեանը, դրւատանքի խօսք էր ուղղել իրանահայութեանը՝ ի մասնաւորի Սպահանի հայոց թեմի հայութեանը՝ ընդգծելով նրանց դերը հայապահպանութեան, հայրենիք-սփիւռք կապերի ամրապնդման եւ Իրանում հայ ազգի վարկը, պատիւն ու արժանապատւութիւնը բարձր պահելու ուղղութեամբ:

Այնուհետեւ բանախօսութեամբ ելոյթ ծաւալեց ազգային-քաղաքական գործիչ Սիմոն Սիմոնեանը, ով անկախ պետականութիւն ունենալն ազգերի յաւերժութեան երաշխիքը համարելով, անդրադարձ ունեցաւ Հայաստանի քաղաքականութեան, տնտեսութեան, անվտանգութեան եւ հասարակութեան վրայ ազդեցութիւն ունեցած կարեւորագոյն իրադարձութիւններին, ընդգծելով վերանկախացման առաջին տարիների ընթացքում պետութեան կառավարման ղեկը ստանձնած

քաղաքական ուժերի գործած ծանր սխալների պատճառով առաջացած վնասները, որոնցից են՝ հայրենիքից ժողովրդի արտագաղթը, ինչը շարունակւում է առ այսօր, Սփիւռք-Հայաստան յարաբերութիւնների մէջ սեպի խրումը եւ սեփականաշնորհման գործընթացի արդիւնքում ազգի ու պետութեան ունեցւածքի թալանումը: Նա նշելով նաեւ անկախութեան վերականգնման երկրորդ տասնամեակից մինչեւ այսօր ունեցած մի շարք ձեռքբերումներ, յատկապէս շեշտեց Դաշնակցութեան նախաձեռնութեամբ, Հայաստանում առաջին անգամայ համար, տարբեր քաղաքական ուժերի մասնակցութեամբ կոալիցիոն կառավարութեան կազմաւորումը եւ աշխարհասփիւռ հայութեանը երկքաղաքացիութիւն շնորհող օրէնքի ընդունումը:





Բանախօսն իր խօսքի շարունակութեան մէջ անդրադառնալով Հայաստանի ներկայ վիճակին՝ առանձնաբար ներկայացրեց առկայ խնդիրներն ու ձեռքբերումները. խնդիրների շրջագծում թւարկեց ներքին դժւարութիւնները, ինչու չէ նաեւ հարեւան երկրների հետ եւ աշխարհաքաղաքական ու տարածաշրջանային հարցերի շրջագծում առաջացած հարցերը, իսկ որպէս ձեռքբերումներ ընդգծեց Հայաստանի անկախութեան կերտումը, Արցախի ազատագրումը, մարտունակ բանակի կազմաւորումը, Սփիւռք-Հայաստան համատեղ աշխատանքների իրագործումը եւ անկախութեան սերունդը:

Ահա մի բաժին մէջբերում բանախօսական նիւթի եզրափակիչ հատւածից. «Կազմակերպւած Սփիւռքը Հայաստանի ամուր թիկունքն է, իսկ Արցախը՝ մեր գոյութեան պահպանող զարկերակը: Անկախութիւնը մեր փառքն է, Արցախը՝ մեր հպարտութիւնը… Հայ ժողովուրդն իր հայրենի ու սփիւռքեան հայութեամբ, միասնաբար լծւած է անփոխարինելի մեր անկախութեան ամրապնդման գործին: Այսօրւայ հզօր Հայաստանը հիմքն է ապագայի միացեալ Հայաստանի»:

Պաշտօնական բաժնի աւարտին ներկաներին իր հայրական պատգամը փոխանցեց գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը: Թեմակալ առաջնորդն իր խօսքում շնորհաւորելով պանծալի առիթի կապակցութեամբ եւ յատկապէս գնահատելով օրւայ բանախօսի բովանդակալից նիւթը, որի շնորհիւ առաւել լուսաբանւեցին Հայաստանի Հանրապետութեան ներկայ վիճակն ու առկայ դժւարութիւնների փարատման միջոցները, պատգամեց, թէ այսօր ունեցած ազատ եւ անկախ հայրենիքը պահպանելու եւ ամուր պահելու համար պէտք է շարունակ վերյիշել եւ մտաբերել այս ուղղութեամբ անհրաժեշտ բոլոր գործօնները եւ չմոռանալ, որ այս ճանապարհին դրական արդիւնք կարելի է արձանագրել միայն լաւատեսութեամբ շաղախւած վճռական կամքով:

Տօնախմբութեան գեղարւեստական բաժինը յագեցած էր ազգային-յեղափոխական երգերի կենդանի կատարումներով, որն իրականացւեց Հայաստանից հրաւիրւած երգիչներ՝ Եւա Եգանեանի ու Մաւր Մկրտչեանի անզուգական նիւթերով:



## ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՏՕՆԸ ՆՇՒԵՑ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ

Շաբաթ՝ 2017 թւականի հոկտեմբերի 14-ի առաւօտեան, նախագահութեամբ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանի, Սրբոց Թարգմանչաց տօնի առթիւ ս. եւ անմահ պատարագ



մատուցւեց Նոր Ջուղայի «Ս. Յովհաննու» եկեղեցում:

Օրւայ պատարագիչ եւ քարոզիչ հայրն էր Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանը: Պատարագին մասնակցում էր թեմիս եկեղեցական դասը, իսկ երգեցողութիւնը կատարեց Ս. Ամենափրկիչ վանքի «Կոմիտաս» երգչախումբը՝ Արմէն Ամիրխանեանի ղեկավարութեամբ:

Հոգեպարար արարողութեանը ներկայ էին ազգային մարմինների ներկայացուցիչները, Նոր Ջուղայի հայոց ազգ. դպրոցների աշակերտութիւնն ու պատասխանատուները եւ հոծ թւով ժողովուրդ:

Պատարագիչ Հայր Սուրբն իր քարոզում անդրադառնալով հայերէն այբուբենի յօրինման ուղղութեամբ Ս. Մեսրոպ Մաշտոցի կատարած տքնաջան աշխատանքին, աւելացրեց՝ քանի որ հայոց տառերի գիւտը

տեղի ունեցաւ Աստծոյ կամքով ու տեսիլքի շնորհիւ, այն կատարեալ է ինչպէս Աստուած եւ այսքան տարիներ անց նոյնիսկ որեւէ փոփոխութիւն չի կրել:

Հայր Սուրբն իր խօսքի շարունակութեան մէջ յիշելով թարգմանիչ վարդապետներին եւ նրանց գործունէութիւնը, ընդգծեց նրանց գործի արդիւնքը, որը կենսական նշանակութիւն է ունեցել հայ ժողովրդի համար: Նա վերջում աշակերտութեանը յորդորեց՝ սիրել հայոց լեզուն ու հայ մշակոյթը, ապրել հային հարիր ապրելակերպով, անաղարտ պահել ու զարգացնել լեզուն ու մշակոյթը եւ առաջնորդուել ուսուցիչների ու մեծերի ցուցումների համաձայն, իսկ ուսուցիչներին ու ծնողներին կոչ արեց՝ աշակերտութեանը առաջնորդել դէպի Աստծոյ տուն՝ եկեղեցի՝ նրանց մէջ առաւել ամրապնդելով աղօթքի եւ եկեղեցու նկատմամբ սէրն ու հաւատքը:



Պատարագի աւարտին առաջնորդ Հայր Սուրբի գլխաւորութեամբ բոլորը քայլեցին դէպի եկեղեցու մօտակայքում գտնւող հայոց ազգ. կրթահամալիր, ուր «Ալենուշ Տէրեան» դահլիճում կայացաւ գեղարւեստական ամենամեայ ծրագիրը՝ աշակերտների կատարմամբ: Այստեղ ծրագիրն սկիզբ առաւ Կրթական խորհրդի կողմից կեանքի կոչւած Թարգմանչած տօնի միջոցառումների կազմակերպիչ յանձնախմբի անդամ Սոնիա Դիլանչեանի հաղորդավարութեամբ եւ առիթին նւիրւած խօսքով:







Աշակերտական ելոյթների բաժնում օրւան պատշաճ երգերով, ասմունքներով ու խօսքերով, առանձնաբար հանդէս եկան Նոր Ջուղայի հայոց ազգ. նախակրթարանի եւ «Արմէն» երկսեռ տարրական կրթահամալիրի 6-րդ դասարանի սաները, իսկ ասմունքեցին «Քանանեան» աղջկանց եւ «Կատարինեան» տղայոց միջնակարգ դպրոցների ներկայացուցիչներ Լիլիթ Գէորգեանն ու Արթուր Քամարզարեանը:



Ծրագրում Ս. Ամենափրկիչ վանքի «Ս. Ներսէս Շնորհալի» եւ «Արմէն», «Քանանեան» ու «Կատարինեան» դպրոցների գրադարանների ամենաընթերցասէր անդամ-աշակերտները, ինչու չէ նաեւ Հայագիտական համահայկական 8-րդ օլիմպիադային մասնակցած եւ սոյն աշակերտական մրցոյթի յաղթող խումբը ճանաչւած Նոր Ջուղայի պատւիրակութեան աշակերտներն ու պատասխանատուն գնահատւեցին՝ թեմակալ առաջնորդի, Թեմական եւ Կրթական խորհուրդների ներկայացուցիչների, օլիմպիադային մասնակցած աշակերտների ուսուցման գործն իրականացրած պատասխանատու ուսուցիչների եւ պատկան գրադարանավարուհիների ձեռամբ:



Յատկանշական է, որ նախորդ տարեշրջանում «Ս. Ներսէս Շնորհալի» գրադարանի աշխոյժ ընթերցասէր անդամ-աշակերտների թիւը հասաւ շուրջ 40-ի՝ աննախադէպ աճ արձանագրելով նախորդ տարիների համեմատութեամբ:

Վերջում գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանն իր հայրական պատգամը ուղղեց ներկաներին, ուր շնորհաւորելով առիթի կապակցութեամբ՝ մեծապէս գնահատեց հայ ուսուցչին՝ որպէս իր սրբազան առաքելութեանը նւիրւած առաքինի եւ յանձնառու էակ: Հայր Սուրբն աւելացրեց նաեւ, որ երբ մեր ազգի նորօրեայ սերունդը խօսում եւ գրում է հայերէն, սովորում է հայ գրականութիւնը եւ հաւատարիմ է հայ մշակոյթին, արժանանում է Մեսրոպ Մաշտոցի եւ Սահակ Պարթեւ Հայրապետի օրհնութեանը:

Միջոցառումից յետոյ, կրթահամալիրի բակում, վերջին տարիների ընթացքում Ս. Ամենափրկիչ վանքի «Ս. Ներսէս Շնորհալի» գրադարանում հաւաքւած նոյնանուն գրքերի յաւելեալ օրինակները անվճար բաշխեցին ընթերցասէր աշակերտներին ու ներկաներին:

## ԻՐԱՆԱՀԱՅ ԹԵՄԵՐԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻՆ ԸՆԴԱՌԱՋ՝ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ

Անսալով Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետի յանձնարարութեանը, 2017 թուականի հոկտեմբերի 26 եւ 27-ին, կայանալու է «Երիտասարդութիւնը յանձնառութեան եւ նորացման ուղիներում» խորագրով խորհրդաժողովը՝ իրանահայ երեք թեմերի երիտասարդների մասնակցութեամբ: Սոյն երիտասարդական խորհրդաժողովը հիւրընկալելու է Նոր Ջուղայում:



Վերոնշեալ միջոցառումը լաւապէս կազմակերպելու նպատակով, Սպահանի հայոց թեմի Թեմական խորհրդի կողմից կեանքի է կոչուել կազմակերպիչ յանձնախումբ, ուր ընդգրկուած են թեմիս երիտասարդներից. սոյն կազմում ներառուած են նաեւ Թեհրանի եւ Ատրպատականի հայոց թեմերից մէկական ներկայացուցիչներ, ովքեր ներկայացուել են պատկան Թեմական խորհուրդների կողմից եւ աշխատում են հեռակայ կարգով: Կազմակերպիչ յանձնախմբի նախաձեռնութեամբ, բուն ծրագրին ընդառաջ, Նոր Ջուղայում կազմակերպուեց երիտասարդական հանդիպում, չորեքշաբթի՝ հոկտեմբերի 18-ի երեկոյեան ժամը 8:00-ին, Ն. Ջ. Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան շրջափակում, որտեղ Նոր Ջուղայի եւ Շահինշահրի 18-ից 30 տարեկան երիտասարդ-ուհիների մասնակցութեամբ քննարկումներ տեղի ունեցան «Ազգային եւ հոգեւոր կեանքը ներհամայնքային սովորութիւնների եւ պահանջների նկատառումով» թեմայի շուրջ:



Երկժամեայ այս ծրագրին ներկայ էին նաեւ Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ եւ խորհրդաժողովի կազմակերպիչ յանձնախմբի նախագահ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանը եւ Թեմական խորհրդի կողմից սոյն յանձնախմբի հետ կապ Սոնիկ Բաղումեանը: Երեկոյին մասնակցութիւն բերած շուրջ 50 երիտասարդների շարքում՝ աչքի էին ընկնում թէ միութիւնների ու երգչախմբերի կողմից ներկայացուցիչներ եւ թէ ազատ ունկնդիրներ:



Հանդիպումը վարեցին Մանիա Ղուկասեանն ու Թովմա Գալստանեանը: Ստացուած բանաձեւը ներկայացուելու է Միջթեմական երիտասարդական խորհրդաժողովին:

## «ԱՐՄԵՆՊՐԵՍ» ԵՒ «ԻՌՆԱ» ԼՐԱՏՈՒԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ՝ Ս. Ա. ՎԱՆՔՈՒՄ



Կիրակի՝ հոկտեմբերի 22-ի առաւօտեան, Ս. Ա. Վանք այցելեցին Հայաստանի «Արմենպրես» եւ Իրանի «ԻՌՆԱ» լրատուական գործակալութիւնների ներկայացուցիչները:

Ծաղկեայ դահլիճում հիւրերին ընդունեցին Սպահանի հայոց Թեմի առաջնորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը եւ Նոր Ջուղայի Հայ Դատի յանձնախմբի ներկայացուցիչ Վահէ Թորոսեանը:

Ողջոյնի եւ բարի գալստեան խօսքերից յետոյ, «Արմէնպրես»-ի տնօրէն Արամ Անանեանը, բացատրութիւն տալով պատուիրակութեան Իրան այցի նպատակի մասին, տեղեկացրեց, թէ համագործակցութեան համաձայնագիր է ստորագրել զոյգ լրատուական գործակալութիւնների միջեւ, որն իր մէջ է ընդգրկում տեղեկատուութեան բոլոր ոլորտները եւ որի արդիւնքում շուտով Հայաստանն իր ներկայացուցչութիւնն է ունենալու Իրանում:

Այնուհետեւ արտայայտուեց Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը, ով ներկայացնելով Նոր Ջուղայի ազգային կառոյցը, շեշտեց Իրանի պատասխանատու այրերի բարեացակամ մօտեցումը իրանահայութեան նկատմամբ: Անդրադառնալով կնքուած համաձայնագրին, Հայր Սուրբը յոյս յայտնեց, որ դա բացելու է նոր հորիզոններ երկու երկրներին միմեանց եւ աշխարհին առաւել ծանօթացնելու նպատակով:

Հայ Դատի յանձնախմբի ներկայացուցիչ Վահէ Թորոսեանը եւս իր հերթին շնորհաւորելով այս ձեռքբերումը, խոստացաւ լրատուութեան բնագաւառում աջակցել գործակալութեանը եւ ցուցաբերել ցանկացած համագործակցութիւն:

# Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆ՝ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ Ս. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔԻ «Ս. ՅՈՎՍԷՓ ԱՐԵՄԱԹԱՑԻ» ԵԿԵՂԵՑՈՒ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՏՕՆԻ ԱՌԹԻՒ



Սպահանի հայոց թեմի Կրօնական խորհրդի նախաձեռնութեամբ եւ Ն.Ջ. Հայոց Առաքելական Եկեղեցեաց վարչութեան կազմակերպութեամբ, երկուշաբթի՝ 2017 թուականի հոկտեմբերի 23-ի երեկոյեան, Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքում, հոծ թւով ժողովրդի ներկայութեամբ նշուեց նոյն վանքի «Ս. Յովսէփ Արեմաթացի» եկեղեցու անուանակոչութեան տօնը, որն ընդունուած է որպէս Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի տօն:

Սուրբ եւ անմահ պատարագն սկիզբ առաւ երեկոյեան ժամը 5:30-ին, Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանի ձեռամբ: Արարողութեանը մասնակցում էին եկեղեցական դասը, իսկ ս. պատարագի երգեցողութիւնը կատարեց Ս. Ա. վանքի «Կոմիտաս» երգչախումբը՝ խմբավար Արմէն Ամիրխանեանի ղեկավարութեամբ:





Օրուան պատշաճ քարոզի սկզբնական բաժնում պատարագիչ Հայր Սուրբը նշելով, որ «Ս. Յովսէփ Արեմաթացի» աշխարհահռչակ եկեղեցին Սփիւռքում յայտնի է իր գեղեցկութեամբ, հնութեամբ, անուանումով ու արժէքով, ընդգծեց, թէ այս սրբավայրի քառադարեան պատմութիւնը վկայում է, որ այն եղել է թեմի մշակոյթի ու հոգեմտաւոր արժէքների կենտրոնն ու ողնասիւնը: Այնուհետեւ նա անդրադարձ ունենալով աւետարանական այն դրուագին, ուր պատմում է, թէ Սուրբը Պիղատոսից ստանալով Քրիստոսի մարմինը խաչից իջեցնելու իրաւունքը, դին ամփոփում է մի ժայռափոր գերեզմանում, Արեմաթացիի այս արարքը գնահատեց որպէս անձնազոհութիւն, նւիրաբերում եւ բարեգործութիւն:



Գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը ներկաներին յորդորեց՝ տօնը յարմարագոյն առիթը դարձնել՝ Քրիստոսի աստուածային պատուիրանները լսելու եւ ներաշխարհում եղած մարդկային ու քրիստոնէական ազնւագոյն արարքը՝ բարեգործութիւնը վերականգնելու համար:

Ս. եւ անմահ պատարագի աւարտին, ս. խորան բարձրացան նաեւ հոգեւորականաց ու դպրաց դասերը, ուր Ս. Յովսէփ Արեմաթացու աչօվ կատարւեց Ջրօրհնէքի կարգը, իսկ բակում, եկեղեցու արեւմտեան մասում, հոգեհանգստեան պաշտօն տեղի ունեցաւ սոյն վանքում պաշտօնավարած հոգեւորական ու աշխարհական ննջեցեալ սպասաւորների եւ եկեղեցու բարերարների հոգիների խաղաղութեան համար:



Ծարունակութեան մէջ, շրջափակում իրականացւեց նաեւ գեղարւեստական յայտագրով ծրագիր, որտեղ ներկաներին մեծ խանդավառութիւն պարգեւեց ազգային-ժողովրդական երգերի կատարող, Հայաստանից հրաւիրուած երգիչ Անդրանիկ Մանուկեանի (Անդրանիկ սարկաւագ) ելոյթը:



Աւարտին թեմակալ առաջնորդն իր եզրափակիչ խօսքում գնահատեց հոգեպարար արարողութիւնների եւ տօնախմբութեան իրականացման գործում դերակատարներին. նա տօնի կապակցութեամբ շնորհաւորանքի խօսք ուղղելով՝ սէր ու խաղաղութիւն մաղթեց բոլորին, ապա ընդգծեց, որ խաղաղութիւնը դրսից ընտանիքի մէջ չի մտնում եւ այն բխելով իւրաքանչիւրի սրտից ու մտքից, տարածւում է ամբողջ աշխարհում:

Տօնախմբութիւնը հանդիսավարեց Մարինէ Մկրտչեանը:

# «ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ ՅԱՆՁՆԱՌՈՒԹԵԱՆ ԵՒ ՆՈՐԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐՈՒՄ» ԽՈՐԱԳՐՈՎ ԻՐԱՆԱՀԱՅ ԹԵՄԵՐԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ՝ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետի յանձնարարութեան համաձայն, իրանահայ թեմերի «Երիտասարդութիւնը յանձնառութեան եւ նորացման ուղիներում» խորագիրը կրող երիտասարդական խորհրդաժողովը տեղի ունեցաւ հինգշաբթի եւ ուրբաթ՝ 2017 թուականի հոկտեմբերի 26-ին եւ 27-ին, Նոր Ջուղայում՝ մասնակցութեամբ 18-ից 30 տարեկան շուրջ 80 երիտասարդների՝ Թաւրիզից, Ուրմիայից, Թեհրանից, Շահինշահրից եւ Նոր Ջուղայից:

Խորհրդաժողովի մեկնարկը տրուեց հինգշաբթի՝ կէսօրից յետոյ ժամը 4:45-ին, Ս. Բեթղեհէմ եկեղեցում, Ատրպատականի եւ Սպահանի հայոց թեմերի առաջնորդներ գերշ. Տ. Գրիգոր եպս. Չիֆթճեանի եւ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանի գլխաւորութեամբ հաւաքական աղօթքով ու մայեստրո Համիկ Ալեքսանդրեանի ղեկավարութեամբ Ս. Ամենափրկիչ վանքի «Տաթեւ» երգչախմբի համերգով:



Այնուհետեւ բոլորը մեկնեցին Նոր Ջուղայի Հայ Մ. Մ. «Արարատ» միութիւն, ուր երեկոյեան ժամը 6:00-ին, տեղի ունեցաւ խորհրդաժողովի պաշտօնական բացումը՝ ներկայութեամբ Ատրպատականի եւ Սպահանի հայոց թեմերի առաջնորդ հոգեւոր հայրերի, Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ եւ սոյն խորհրդաժողովի կազմակերպիչ յանձնախմբի նախագահ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանի, վերոնշեալ զոյգ թեմերի Թեմական խորհուրդների ատենապետեր Ռուբիկ Ջանանեանի ու Վարուժ Մինասեանի, թեմիս ազգային մարմինների եւ շրջանիս Հայ Դատի յանձնախմբի ներկայացուցիչների ու խորհրդաժողովի մասնակիցների:







Միջթեմական երիտասարդական խորհրդաժողովի կազմակերպիչ յանձնախմբի անունից բացման խօսքով հանդէս եկաւ Սօսէ Ասատրեանը, ով կարեւորութեամբ ընդգծեց, որ սոյն խորհրդաժողովի նպատակն է՝ օգնել երիտասարդներին, որպէսզի նրանք մտածելով մի շարք հարցերի շուրջ, արդիւնքում կարողանան իրենց մտքերը վերածել գործի ու առաքելութեան: Նա յառաջիկայ երկու օրերի ընթացքում երիտասարդներին մտածելու տեղիք տուող հարցերը նշեց հետեւեալ կարգով՝ որտե՞ղ է երիտասարդի յանձնառութիւնը, ինչպէ՞ս է նրա ներկան ու ապագան, ո՞րն է եկեղեցու եւ կրօնի տեղը նրա կեանքում, ի՞նչ է պահանջում երիտասարդը եկեղեցուց, նա ինչպէ՞ս է կարող իր լուման ներդնել հայ ազգի գանձանակում, եւ ինչո՞վ կարելի է արժեւորել հայ ազգի մշակոյթն ու հայրենիքը:

Բացման խօսքից յետոյ ներկաների յոտնկայս ունկնդրութեամբ հնչեց խորհրդաժողովի հիմնը, ապա յանուն Սպահանի հայոց թեմի Թեմական խորհրդի արտայայտուեց նոյն խորհրդի անդամուհի եւ խորհրդաժողովի կազմակերպիչ յանձնախմբի հետ կապ Սոնիկ Բաղումեանը: Նա նշելով, որ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետի յանձնարարութեամբ իրականացուած այս համագումարը կազմակերպականօրէն ամբողջութեամբ երիտասարդների աշխատանքի արդիւնքն է, ցանկացաւ, որ ծրագրի արդիւնաւորման համար՝ ներկաներն իրենց աշխոյժ մասնակցութիւնը ցուցաբերեն ընթացող քննարկումներին: Տկն. Բաղումեանն իր խօսքի աւարտին ուժ, եռանդ եւ յաջողութիւն մաղթելով ժողովականներին՝ յոյս յայտնեց, որ երիտասարդութիւնը միշտ ամուր դիրքերից եւ առանց վարանումների արտայայտելու է իր միտքը եւ իր ձայնը լսելի է դարձնելու հոգեւոր առաջնորդներին, ազգայիններին ու ժողովրդին:

Ելոյթների շարանում ներկաներին իր հայրական օրհնանքը փոխանցեց Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Գրիգոր եպս. Չիֆթճեանը, ով նշելով, որ Ն.Ս.Օ.Տ.Տ Արամ Ա Վեհափառ Հայրապետի անօրեայ աշխատատետրի առաջին գծի վրայ միշտ արձանագրուած են երիտասարդների հիմնախնդիրները, ընդգծեց, թէ ազգի անցեալով հետաքրքրուած, ներկայի կեանքով տագնապող եւ ապագայով մտահոգուած իւրաքանչիւր անձ, իր զոյգ ականջները լայն պէտք է բացի երիտասարդների առաջարկած իւրաքանչիւր տրամաբանուած խօսքի դիմաց, որովհետեւ որեւէ հաւաքականութիւն առանց իր նոր սերնդի, ի սկզբանէ կորցրած է լինում գոյատեւելու ամէն յոյս եւ հնարաւորութիւն:

Գերշ. Սրբազան Հայրն իր խօսքի վերջին բաժնում կոչ արեց մասնակիցներին՝ բարձրաձայն եւ յանդուգն մօտեցումների ներքոյ իրենց մտածումների մէջ նկատի առնեն հետեւեալ կէտերը.

ա.Ի՞նչ է սպասում ինձանից իմ ազգը, իմ եկեղեցին եւ իմ հայրենիքը:

բ.Եթէ ոչ ես, եւ ոչ հիմա, ապա ո՞վ եւ ե՞րբ օժանդակելու է խնդիրների լուծմանը:

գ.Քանդելը հեշտ է, իսկ կառուցելը դժւար: Եղածի

վերանորոգելը հեշտ չի, բայց շատ աւելի ձեռնտու է, քան հինը հիմնովին քանդելը՝ հաւանական նորը կառուցելու յոյսով:



Ելոյթների աւարտին խորհրդաժողովն անցաւ իր աշխատանքին: Սոյն օրուայ նիստերի համանախագահներն էին՝ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանն ու Վեհանուշ Խուդաբախշեանը՝ Նոր Ջուղայից:

Որպէս առաջին զեկուցաբեր տեսակապով (Skype) ելոյթ ծաւալեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Երիտասարդական բաժանմունքի վարիչ հոգշ. Տ. Նշան վրդ. Լախոյեանը՝ «Քրիստոնէութիւնը եւ Հայ Առաքելական եկեղեցու պատմութիւնն ու հոլովոյթը. ժամանակի թելադրանքներ եւ անհրաժեշտութիւններ» նիւթով, ապա Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանը խօսեց «Հոգեւոր կեանքի եւ հոգեբանութեան կապը» թեմայի շրջագծում: Իւրաքանչիւր զեկոյցի աւարտին տեղի ունեցան համապատասխան քննարկումներ: Նոյն օրը զրոյց-քննարկում կատարւեց «21-րդ դարի արագընթաց զարգացող աշխարհը եւ հայ եկեղեցին. աւանդոյթ եւ նորարարութիւն...» նիւթի շուրջ՝ երիտասարդների աշխոյժ մասնակցութեամբ:



Յատկանշական է, որ երեկոյի ընթացքում Ասպետ Սիմոնեանը սաքսոֆոն նւագարանի մենակատարմամբ, իսկ հիւրաբար Նոր Ջուղայում գտնւող երգիչ Անդրանիկ Մանուկեանն՝ ազգային-ժողովրդական երգերի կատարումներով մեծ խանդավառութիւն պարգեւեցին բոլորին:

Առաջին նիստի աւարտին ներկաները ընթրեցին, ապա այցելեցին Սպահան քաղաքի մի շարք տեսարժան վայրեր:

Ուրբաթ առաւօտեան ժամը 9:30-ին մասնակիցները նախ այցելեցին Ս. Ամենափրկիչ վանքի «Ս. Յովսէփ Արիմաթացի», այնուհետեւ Ս. Աստւածածին եկեղեցիներ, որից յետոյ Նոր Ջուղայի հայոց ազգ. կրթահամալիրի կենտրոնական դահլիճում խորհրդաժողովը շարունակեց իր աշխատանքը:

Աշխատանքային երկրորդ օրը մեկնարկեց գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանի գլխաւորութեամբ հաւաքական աղօթքով ու թեմերի ներկայացուցիչների զեկոյցով՝ պատկան թեմերի պատմական անցեալի ու ներկայ պատկերի ներկայացմամբ: Սպահանի հայոց թեմի զեկոյցը տրւեց Վանանդ Իսաղուլեանի, իսկ Ատրպատականինը՝ Շաքէ Մարգարեանի միջոցով: Այնուհետեւ «Ալիք» օրաթերթի կայքի խմբագիր Արամ Շահնազարեանն իր զեկոյցը ծաւալեց «Երիտասարդների մասնակցութեան պատկերը ազգային աշխատանքներում. համաշխարհայնացման ազդեցութիւնը՝ այդ մասնակցութեան վրայ» թեմայի շուրջ: Ընկալեալ ձեւի համաձայն այս զեկոյցին նոյնպէս յաջորդեց քննարկման բաժինը:




Յատկանշական է, որ ուրբաթ՝ առաւօտեան եւ կէսօրից յետոյ զրոյց-քննարկումներ տեղի ունեցան «Ես պատրաստ եմ յանձնառութիւն ստանձնել, դու պատրա՞ստ ես ինձ վստահել» եւ «Ազգային ու հոգեւոր կեանքի արտացոլումը սոցիալ կայքերում եւ այդ ուղղութեամբ տարւող աշխատանքների ազդեցութիւնը երիտասարդութեան մասնակցութեան եւ տեղեկացւածութեան վրայ» նիւթերի շուրջ, իսկ խմբական քննարկումներ կատարւեցին «Ազգային եւ հոգեւոր կեանքը ներհամայնքային սովորութիւնների եւ պահանջների նկատառումով» թեմայի կապակցութեամբ: Իրականացւած բոլոր զրոյցների եւ քննարկումների համար գրի են առնւել համապատասխան բանաձեւեր:

Խորհրդաժողովի քննարկումները հմտօրէն վարեց Հայաստանի Հանրային հեռուստատեսութեան արտաքին կապերի բաժնի ղեկավար եւ հեռուստահաղորդավար Էրիկ Անթառանեանը, ով Նոր Ջուղա էր ժամանել կազմակերպիչ յանձնախմբի հրաւէրով: Երիտասարդների բուռն մասնակցութեան եւ Էրիկ Անթառանեանի ու զեկուցաբերների տւած ուղղութիւնների ու ճշգրիտ հարցադրումների շնորհիւ բոլոր քննարկումներն ընթացան թէժ եւ բովանդակալից:

Երկրորդ օրւայ առաջին նիստը համանախագահեցին՝ Արմօ Մինասեանը՝ Նոր Ջուղայից եւ Շաքէ Մարգարեանը՝ Թաւրիզից, իսկ երկրորդ նիստը վարեցին՝ Վահէ Թահմազեանն ու Մարիա Խուդավերդեանը՝ Շահինշահրից:

Ուրբաթ՝ կէսօրից յետոյ, իրականացւեց նաեւ մրցոյթ-խաղ, որը մեծ խանդավառութիւն առաջացրեց երիտասարդների մօտ: Մրցոյթը ծրագրաւորւել էր Արփի եւ Րաֆֆի Դիլանչեանների միջոցով, իսկ այն վարեց Վանա Ծիրւանեանը:

Երեկոյեան ժամը 7-ին, հայոց ազգ. կրթահամալիրի

«Ալենուշ Տէրեան» դահլիճում երիտասարդներին միացան Սպահանի եւ Ատրպատականի հայոց թեմերի առաջնորդները եւ թեմիս ազգային մարմինների ու շրջանի Հայ Դատի յանձնախմբի ներկայացուցիչները, ուր սկիզբ առաւ համագումարի փակման հանդիսութիւնը: Սկզբում իրականացուեց գեղարուեստական յայտագրով յագեցած ծրագիր: Այս բաժնում երգերի կատարմամբ հանդէս եկան Հարմա Կարապետեանը, Վանանդ Իսաղուլեանը, Վանա Ծիրուանեանն ու Մարալ Քեշիշեանը, իսկ ասմունքով՝ Նազէ Ասատրեանը եւ Արփա Մարգարեանը:

Այնուհետեւ միջոցառման եզրափակիչ խօսքն ասաց Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը: Առաջնորդ Հայր Սուրբն իր ելոյթում նշեց, որ երիտասարդները երկու տեսակ են, ոմանք կտրուած լինելով համայնքային եւ միութենական կեանքից անտարբեր են գտնւում ազգի եւ համայնքի ճակատագրի նկատմամբ, իսկ միւս մասը հայեցի դաստիարակութեամբ թրծուած լինելով, շարունակ իրենց հարց են տալիս, թէ որպէս հայ ազգի փոքր մասնիկ, ի՞նչ պարտականութիւն ունեն համայնքի, եկեղեցու եւ հայրենիքի նկատմամբ: Նա յոյս յայտնելով, որ այս խորհրդաժողովը կարողացել է օգնել երիտասարդներին՝ գտնելու իրենց պարտականութիւնն ու պատասխանատւութիւնը, թէ որպէս հայորդի եւ թէ որպէս պատկան թեմի երիտասարդ ներկայացուցիչներ, ցանկացաւ, որ նրանք այսուհետ իրենց համայնքներն ու թեմերը դէպի լուսաշող ապագայ առաջնորդող ծրագրերը կազմակերպեն նոր քայլերով ու յանձնառութեամբ:

Հայր Սուրբի հայրական օրհնանքից յետոյ տեղի ունեցաւ հաւաքական լուսանկարում, իսկ հաճելի ու ընկերական մթնոլորտի ներքոյ ընթրիք երեկոյ եւ խրախճանք:

Հարկ է նշել, որ սոյն խորհրդաժողովի կազմակերպիչ յանձնախումբը կեանքի էր կոչւել Սպահանի հայոց թեմի Թեմական խորհրդի կողմից՝ իր կազմում ունենալով թեմիս երիտասարդներից, իսկ միւս թեմերի Թեմական խորհուրդների կողմից ներկայացւել էին մէկական ներկայացուցիչներ, ովքեր հեռակայ կարգով համագործակցեցին սոյն յանձնախմբի հետ:








# ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԿՐԹԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԵԱՄԲ, ՀԱՅ ՈՒՍՈՒՑՉԻ ՏՕՆԻ ԱՌԹԻՒ ՄԵԾԱՐՒԵՑԻՆ ԹԵՄԻ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՈՒ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՄՇԱԿՆԵՐԸ

Հայ ուսուցչին գնահատելու նպատակով, Սպահանի հայոց թեմի Կրթական խորհրդի նախաձեռնութեամբ, երեքշաբթի՝ 2017 թւականի հոկտեմբերի 31-ի երեկոյեան, Նոր Ջուղայի Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան սրահում տեղի ունեցաւ մեծարման երեկոյ: Ծրագրին ներկայ էին՝ թեմի առաջնորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը, Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գումաճեանը, քահանայից դասի, ազգային մարմինների, շրջանի Հայ Դատի յանձնախմբի եւ դպրոցների Ծնողական խորհուրդների ներկայացուցիչներն ու Նոր Ջուղայի եւ Շահինշահրի հայոց ազգ. դպրոցների հանգստի կոչւած ու աշխատող հայ տնօրէնները, ուսուցիչները եւ գրասենեակների պատասխանատուները՝ իրենց պարագաներով:



Միջոցառման հանդիսավարն էր երեկոյի կազմակերպիչ յանձնախմբի անդամ Սոնիա Դիլանչեանը, ով բացման խօսքում հանդէս եկաւ օրւայ առթիւ շնորհաւորանքի եւ ուսուցչի մեծ վաստակի առջեւ երախտիքի խօսքերով: Հանդիսավարը յատուկ շնորհաւորանքի խօսք ուղղեց յատկապէս հայոց ազգ. դպրոցների նորանշանակ տնօրէններին՝ իրենց նոր պարտականութեան ստանձնման առթիւ. նորանշանակ տնօրէններն են՝ «Արմէն» տարրական երկսեռ կրթահամալիր՝ Արսինէ Դաւթեան, «Քանանեան» միջնակարգ դպրոցի աղջկանց բաժին՝ Կարինէ Մինասեան, իսկ նոյն օղակի «Կատարինեան» տղայոց բաժին՝ դոկտ. Վաչիկ Հայրապետեան:



Այնուհետեւ հիւրընկալ Կրթական խորհրդի անունից շնորհաւորանքի խօսքով եւ բարի մաղթանքներով հանդէս եկաւ նոյն խորհրդի ատենապետ Մարգարիտ Դաւթեանը: Նա ընդգծեց, որ հայ ուսուցչի դերակատարութիւնը ազգապահպանման գործում առանցքային է ու անփոխարինելի եւ անշուշտ դա է այն առանձնայատկութիւնը, որով փայլում է հայ ուսուցիչը եւ արժանի է մշտական գովասանքի:

Տկն. Դաւթեանն իր խօսքի մի այլ բաժնում յիշեցնելով, որ շուտով Հայաստանի անկախ Հանրապետութիւնը բոլորելու է իր 100-ամեակը, կրթութեան եւ լուսաւորութեան մշակներին կոչ արեց չմոռանալով, որ հայրենիքի գոյատեւման գրաւականը առողջ սերունդներ դաստիարակելու հիմքում է, առաւել ջերմեռանդ ու միասնական աշխատանքով լծել մատաղ սերնդի ժամանակակից կրթութեան ու հայեցի դաստիարակութեան գործին:

Յանուն Սպահանի հայոց թեմի ազգային մարմինների արտայայտուեց թեմի Պատգամաւորական ժողովի ատենապետ Թաթուլ Օհանեանը: Նա առանձնաբար անդրադառնալով գենետիկ փոխանցումներով եւ ձեռք բերւած մարդկային յատկանիշներին, նշեց, որ իւրաքանչիւր անհատի էութիւնը ձեւաւորւում է նախ ընտանիքում, ապա դպրոցում ու հասարակութեան մէջ: Պրն. Օհանեանն իր խօսքի մի այլ բաժնում համեմատութիւններ անցկացնելով Հայաստանի եւ Սփիւռքի ուսուցիչների աշխատանքների միջեւ՝ կարեւորութեամբ ընդգծեց, որ Սփիւռքում աշխատող ուսուցչի պարտականութիւններն աւելի ծանր են, քանի որ այնտեղ օտարի գիրկն ընկնելու վտանգի պատճառով, ուսուցիչն առաքելութիւն է ստանձնում յատկապէս՝ մայրենի լեզւի անաղարտ պահպանման եւ ազգային դաստիարակութեան փոխանցման ուղղութեամբ:





Ծրագրում արտայայտուեց նաեւ Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ եւ հայոց ազգ. դպրոցների ուսուցիչ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գումաճեանը, ով հայ ուսուցչին համարելով որպէս հայ մարդու տեսակի լաւագոյն օրինակ, առաքելութեան ու ծառայութեան տիպար եւ նւիրումի խորհրդանիշ, ի մասնաւորի գնահատանքի խօսք ուղղեց թեմիս ուսուցիչներին, ովքեր սաներին կրթելու եւ նրանց մէջ ազգային ու հոգեւոր արժէքներ սերմանելու կողքին, նրանց հոգում ու սրտում իւրայատուկ կապւածութիւն են սերմանում նաեւ թեմի դարաւոր եւ ամուր մաշկոյթի նկատմամբ:

Շնորհակալական խօսքով ու օրւան պատշաճ արտայայտութիւններով ելոյթ ունեցան Նոր Ջուղայի հայոց ազգային մանկապարտէզ-նախակրթարանի տնօրինուհի Քառոլին Դիլանչեանը, «Արմէն» երկսեռ կրթահամալիրի տնօրէն Վրէժ Շիրւանեանը, «Քանանեան» աղջկանց միջնակարգ դպրոցի փոխ-տնօրէն Ռիմա Սիմոնեանը, եւ Շահինշահրի «Նարեկ» մանկապարտէզ-նախակրթարանի տնօրինուհի Կարինէ Միասքանեանը:

Ջեռամբ թեմակալ առաջնորդ Հայր Սուրբի, Թեմական խորհրդի ատենապետ Վարուժ Մինասեանի եւ

Կրթական խորհրդի ատենապետուհի Մարգարիտ Դաւթեանի պատուոգրեր շնորհեցին նախորդ տարեշրջանում հանգստի կոչուած Շահինշահրի «Նարեկ» մանկապարտէզ-նախակրթարանի ուսուցչուհի Էմմա Օրդուբէգեանին եւ «Կատարինեան» տղայոց միջնակարգ դպրոցի տարիների փոխ-տնօրէն Ռուբէն Գրիգորեանին, որն այս տարեշրջանից աշխատանքի բերումով տեղափոխուել է այլ կրթական միջավայր: Պատուոգրի արժանացաւ նաեւ «Արմէն» երկսեռ տարրական կրթահամալիրի նախկին տնօրինուհի Լիոնթին Աբրահամեանն, ով երկար տարիներ ուսուցչութեան ծառայութիւնից հանգստի կոչւելուց յետոյ, Կրթական խորհրդի խնդրանքով 11 տարիներ շարունակ ստանձնեց տնօրէնի պատասխանատու պարտականութիւնը: Պատուոգրերի բաշխման աւարտին իր սրտի խօսքով ու շնորհակալական արտայայտութիւններով հանդէս եկաւ Էմմա Օրդուբէգեանը:



Ծրագրի պաշտօնական բաժինը մերթ ընդ մերթ ընդմիջուեց գեղարուեստական կատարումներով: Դաշնամուրի կատարմամբ հանդէս եկան Ելենա Մանուկեանն ու Էմիլի Նաւասարդեանը, ասմունքեց Լիլիթ Գէորգեանը, երգերի կատարմամբ ելոյթ ունեցան Վեդի Յարութիւնեանն ու Մարտին Թերմաղօ. վերջինիս դաշնամուրի նւագակցութեամբ ընկերակցեց Ելենա Մանուկեանը. սաքսոֆոնի կատարմամբ հանդէս եկաւ Աւետ Սիմոնեանը, իսկ պարային ներկայացմամբ բեմը ողողեցին Ն. Ջ. Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան Մշակութային միաւորի «Կռունկ» պարախմբի կրտսեր խմբերը:





Եզրափակիչ խօսքն արտայայտեց թեմակալ առաջնորդ Հայր Սուրբը, ով իր օրհնանքի սկզբնական բաժնում շնորհաւորելով առիթի կապակցութեամբ, գնահատանքի խօսք ասաց հանգստի կոչուած ուսուցիչներին ու տնօրէններին, իսկ բարի գալուստ՝ նորանշանակներին: Գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանն մի այլ բաժնում ուսուցչական պաշտօնը կոչում եւ ազգակերտման սրբազան առաքելութիւն համարելով՝ դրւատանքի յատուկ խօսք ուղղեց Սփիւռքի եւ ի մասնաւորի թեմիս ուսուցիչներին, ովքեր իրենց նիւրական աշխատանքի կողքին՝ գնդապետի տիպար ընդունելով, իրենց աշակերտներին դաստիարակում են այնպիսի մարտունակ հոգեբանութեամբ, որի շնորհիւ նրանց յաջողւում է յաղթական դուրս գալ օտար ձուլման վտանգից:

Երեկոն ընթացաւ բուռն խանդավառ եւ յուզական մթնոլորտում, ինչու չէ նաեւ հիւրասիրութեամբ:

Հարկ է նշել, որ ընթացքում փոքրիկ աշակերտների միջոցով բոլոր ուսուցիչներին յանձնուեցին Կրթական խորհրդի կողմից նախատեսուած յուշանուէրները, իսկ աւարտին գեղեցիկ մտայղացմամբ հիւրերին նւիրուեցին Նոր Ջուղայի եւ Շահինշահրի հայոց դպրոցների հին եւ նոր շէնքերից լուսանկարներ:













## ԱՒՍՏՐԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԵՒ ԻՐԱՆՈՒՄ ԱՒՍՏՐԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԻ ԱՅՑԸ Ս. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔ

Պետական հրաւէրով Իրան ժամանած Աւստրիայի Արտաքին գործերի նախարարի տեղակալ Միշայիլ Լին Հարթը, Իրանում Աւստրիայի դեսպան Շտեֆան Շոլթզը եւ դեսպանատան աշխատակիցները, չորեքշաբթի՝ նոյեմբերի 1-ի կէսօրին՝ ժամը 2-ին, այցելեցին Ս. Ամենափրկիչ վանք: Պատուիրակութեանը Ս. Ա. Վանքի մուտքի մօտ դիմաւորեց Թեմական խորհրդի ատենապետ Վարուժ Մինասեանը, որից յետոյ հիւրերն այցելեցին «Ս. Յովսէփ Արիմաթացի» եկեղեցի եւ «Խաչատուր վրդ. Կեսարացի» թանգարան, այնուհետեւ «Ծաղկեայ դահլիճ»-ում հիւրընկալուեցին Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանի եւ Կրօնական խորհրդի ատենապետ Վարուժ Մովսիսեանի կողմից:

Արտաքին գործերի նախարարի տեղակալ Միշայիլ Լին Հարթը հակիրճ տեղեկութիւն փոխանցելով պատուիրակութեան Իրան այցի նպատակի մասին, ընդգծեց Սիրիայի անվտանգութիւնն ու կայունութիւնը վերականգնելու կարեւորութիւնը, նշելով, թէ անհրաժեշտ է հնարաւոր բոլոր միջոցներով օգնել Սիրիայի ժողովրդին՝ յաղթահարելու իր առջեւ ծառացած դժւարութիւնները եւ վերահաստատելու խաղաղութիւնը այդ երկրամասում:

Իրանահայութեան իրավիճակի մասին նախարարի տեղակալի հարցադրմանը պատասխանեց Հայր Սուրբը, ով ընդհանուր տեղեկութիւններ փոխանցելով Իրանի հայկական կառոյցի դրւածքի մասին, յայտնեց, որ Իրանում բնակւող հայերը ունեն կրօնական եւ մշակութային լայն իրաւասութիւններ եւ այդ առումով որեւէ արգելք չկայ: Անդրադառնալով Սիրիային օժանդակելու Պրն. Լին Հարթի արծարծած թեմային, թեմիս Առաջնորդը եւս կարեւորեց այս հարցը եւ տեղեկացրեց, որ Հայաստանի իշխանութիւնները անտարբեր չլինելով սոյն խնդրի նկատմամբ, անցնող տարիների ընթացքում ընդունել են մեծ թւով սիրիահայ գաղթականներ:



Հանդիպման աւարտին պատուիրակութեան անդամներն այցելեցին «Ս. Ներսէս Շնորհալի» գրադարան, որտեղ ծանօթացան գրադարանի կառուցւածքին ու գործունէութեանը:

## ԻՍԼ. ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ ՍՊԱՀԱՆԻ ԵՒ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԻՐԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐ ԺՈՐԺԻԿ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ ԱՅՑԸ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՑ ԱԶԳ. ԴՊՐՈՑՆԵՐ՝ ԱՇԱԿԵՐՏՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՅ ԱՌԹԻՒ



Աշակերտութեան օրւայ առթիւ, շաբաթ՝ 2017 թւականի նոյեմբերի 4-ի առաւօտեան, Իսլ. խորհրդարանում Սպահանի եւ հարաւային իրանահայութեան պատգամաւոր Ժորժիկ Աբրահամեանը ընկերակցութեամբ Սպահանի հայոց թեմի Թեմական խորհրդի ատենապետ Վարուժ Մինասեանի եւ անդամ Նապիկ Մելիքեանի առանձնաբար այցելեց Նոր Ջուղայի հայոց ազգային մանկապարտէզ-նախակրթարան, «Արմէն» երկսեռ տարրական կրթահամալիր եւ «Քանանեան» աղջկանց ու «Կատարինեան» տղայոց միջնակարգ դպրոցներ:

Օրւայ առթիւ աշակերտներին շնորհաւորանքի խօսք փոխանցեց Պրն. Աբրահամեանը, այնուհետեւ հանդիպելով դպրոցների տնօրէններին ունկնդրեց նրանց մտահոգութիւններն ու տեսակէտները:

## ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԻ ԱՌԱՋԻՆ ԱՅՑԸ ՇԻՐԱԶ

Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանն իր հովւական առաջին այցելութիւնը տւեց շիրազահայութեանը: Երկօրեայ ճամբորդութեան ընթացքում Թեմակալ առաջնորդին ընկերակցում էին Սպահանի հայոց թեմի Կրօնական խորհրդի ատենապետ Վարուժ Մովսիսեանն ու անդամ արժ. Տ. Մեսրոպ ա. քհնյ. Գալստանեանը. վերջինս հանդիսանում է նաեւ՝ որպէս Շիրազի հայ համայնքի այցելու հոգեւոր հովիւ:

Այցելութիւնների մեկնարկը տրւեց երկուշաբթի՝ 2017 թւականի նոյեմբերի 6-ի առաւօտեան, համայնքի Ս. Աստուածածին եկեղեցուց, որտեղ պատուիրակութիւնը մօտիկից ծանօթացաւ եկեղեցու շէնքի իրավիճակին ու հնարաւորութիւններին, ինչու չէ նաեւ պահանջւող նորոգութիւններին, ապա երեկոյեան, «Հայ տուն» կենտրոնում, հանդիպեց տեղի հայ համայնքի վարչութեան հետ: Սոյն հանդիպման ընթացքում վարչութեան անդամները զեկոյցով հանդէս եկան համայնքային

կեանքի եւ մարմնի գործունէութեան շուրջ, այնուհետեւ արծարծեցին իրենց դժւարութիւններն ու մտահոգութիւնները, իսկ թեմակալ առաջնորդ Հայր Սուրբը գնահատեց վարչութեան գործունէութիւնը եւ այն փաստը, որ համայնքը փոքրաթիւ լինելով հանդերձ գտնւում է աշխոյժ ու կազմակերպւած վիճակում: Նա յատկապէս դրւատեց համայնքում ազգային եւ եկեղեցական տօների ու առիթների նշումը:

Օրւայ աւարտին ջերմ ու մտերմիկ մթնոլորտի ներքոյ ընթրիք երեկոյ տեղի ունեցաւ «Հայ տուն»-ում՝ հիւրերի եւ շիրազահայութեան մասնակցութեամբ:



Այցելութեան երկրորդ օրն ընթացաւ պաշտօնական հանդիպումներով: Երեքշաբթի՝ նոյեմբերի 7-ի առաւօտեան, սկզբում «Հայ տուն»-ում գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանի գլխաւորութեամբ պատւիրակութիւնը հանդիպեց Իսլամական մշակոյթի եւ առաջնորդութեան Ֆարս նահանգի գերատեսչութեան Կրօնական փոքրամասնութիւնների գծով պատասխանատու պրն. Միրդեհղանին, ապա վերջինիս ուղեկցութեամբ նոյն գերատեսչութեան շէնքում՝ գլխաւոր տնօրէն պրն. Մոռիդիին: Երկու հանդիպումներում էլ հիմնականում զրոյցներ ընթացան Շիրազի եկեղեցու նորոգութեան եւ տեղի հայ համայնքին յուզող հարցերի շուրջ: Յատկանշական է, որ եկեղեցու նորոգութիւններն իրականացնելու համար, Իսլամական մշակոյթի եւ առաջնորդութեան Ֆարս նահանգի գերատեսչութիւնը լայն համագործակցութիւն է ցուցաբերել համայնքային վարչութեան հետ՝ պատկան կազմակերպութիւններից մի շարք օժանդակութիւններ ստանալու եւ հարկ եղած համադրութիւնները կատարելու ուղղութեամբ:

Վերոնշեալ բոլոր այցելութիւնների ու հանդիպումների ընթացքում պատւիրակութեանն ընկերակցեց Շիրազի հայ համայնքի վարչութեան ատենապետ եւ միեւնոյն ժամանակ Սպահանի հայոց թեմի Պատգամաւորական ժողովում շիրազահայութեան պատգամաւոր Հերմոնդ Յարութիւնեանը:

## ԱՐԵՒԵԼՔԻ ԱՍՈՐԻ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԻ ԵՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԱՅՑԸ ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ



Ուրբաթ՝ նոյեմբերի 10-ի առաւօտեան, Ս. Ա. Վանք այցելեցին Արեւելքի Ասորի եկեղեցու առաջնորդ Մար Բենեամին եպիսկոպոսը եւ Շահինշահրի Ասորի համայնքի խորհրդի ատենապետը, փոխ-ատենապետը եւ քարտուղարուհին:

Ս. Ա. Վանքի «Ծաղկեայ» դահլիճում հիւրերին ընդունեցին Սպահանի հայոց թեմի առաջնորդ՝ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը, Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ՝ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանը, Տ. Մեսրոպ աւ. քհնյ. Գալստանեանը, Թեմական խորհրդի ներկայացուցիչ՝ Վահիկ Թորոսեանը եւ Շահինշահրի հայ համայնքի վարչութեան ատենապետ՝ Մելքոն Շիրւանեանը:

Սկզբում Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը բարի գալստեան խօսք ուղղեց հիւրերին, ապա տեղի ունեցաւ երկկողմ ծանօթութիւն, որից յետոյ Ասորի համայնքի խորհրդի ատենապետը իր շնորհակալութիւնը յայտնեց Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչին, քահանայ հօրը եւ Համայնքային վարչութեանը՝ մշտապէս իրենց աջակցելու համար:

Շարունակութեան մէջ Արեւելքի Ասորի եկեղեցու առաջնորդ Մար Բենեամին եպիսկոպոսը զեկոյց ներկայացրեց Թեհրանի առաջնորդարանում Տ. Սեպուհ արք. Սարգսեանի հրաւէրով եւ հոգեւորականաց դասի ներկայութեամբ տեղի ունեցած հանդիպման վերաբերեալ, որտեղ քննարկւել է միջ-եկեղեցական խորհրդի ձեւաւորման պարագան:

Հանդիպումն աւարտւեց վերոնշեալ խնդրի շուրջ քննարկում անցկացնելուց յետոյ:

## ՍՊԱՀԱՆ ՆԱՀԱՆԳԻ ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹԵԱՆ ՏՆՕՐԷՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԱԶԳԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՀԵՏ

2017 թւականի նոյեմբերի 13-ի առաւօտեան Ուսումնա-դաստիարակութեան Սպահանի գերատեսուչ պրն. Ղաէդիհան գերատեսչութեան զանազան բնագաւառների տեղակալների ընկերակցութեամբ այցելեց Ս. Ամենափրկչեան Վանք: Պատւիրակութեանն Առաջնորդարանի Ծաղկեայ դահլիճում ընդունեցին թեմակալ ա-

առաջնորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը, Թեմական եւ Կրթական Խորհուրդների ատենապետերն ու անդամները եւ Կրօնական խորհրդի ներկայացուցիչները:

Հանդիպման հիմնական նպատակն էր թեմակալ առաջնորդին շնորհաւորանքներ փոխանցել՝ Սպահանի հայոց թեմի առաջնորդ ընտրուելու կապակցութեամբ: Հանդիպման ընթացքում շօշափուեցին հայոց դպրոցներին եւ ուսումնա-դաստիարակչական գործին ու հաստատութեանն առնչուող այլ հարցեր եւս:



Սկզբում թեմակալ առաջնորդը բարի գալուստ մաղթեց հիւրերին եւ բարձր գնահատելով նոր սերնդի դաստիարակութեան եւ կրթութեան գործում նրանց դերակատարութիւնը՝ շեշտեց, որ Ազգային առաջնորդարանն եւս իր գործունէութեան կարեւորագոյն բաժինն է համարում նոյն նպատակին ծառայելը:



Գերատեսուչ պրն Ղաէիդհան համապարփակ բացատրութիւն ներկայացրեց նահանգի ուսումնա-դաստիարակչական աշխատանքների եւ կացութեան մասին, շեշտելով, որ հայ աշակերտներն եւս, համահաւասար երկրի բոլոր աշակերտների, գտնւում են իրենց ուշադրութեան կենտրոնում:

Թեմական խորհրդի ատենապետ պրն. Վարուժ Մինասեանը շնորհակալութիւն յայտնեց Նոր Ջուղայի հայոց դպրոցների մէջ տեղի ունեցած վերջին փոփոխութիւնների ուղղութեամբ գերատեսչութեան կողմից բարիացակամ եւ դրական մօտեցման եւ համագործակցութեան համար, որը նպաստելու է դրանց ուսումնական եւ դաստիարակչական իրավիճակի դրական փոփոխութեանը եւ աւելի արդիւնաւէտ է դարձնելու կառավարման գործը, նաեւ ակնարկեց Ուսումնա-դաստիարակութեան հիմնարկին առնչուող կալւածական մի շարք խնդիրներ:

Թեմական խորհրդի անդամ տկն. Սոնիկ Բաղումեանը ուսումնա-դաստիարակութեան խնդիրների առնչութեամբ ակնարկեց ժամանակին որդեգրուած այն մօտեցման եւ որոշումին, որի հիմամբ Ուսումնա-դաստիարակութեան հիմնարկը աշխատանքի է ընդունում համապատասխան մարդուժ՝ հաշւի առնելով տեղական ուժերը, ինչպէս օրինակ Նոր Ջուղայից հայ ուսուցիչների ներգրաւումը, որոնք համալրում են հայոց ազգային դպրոցներին անհրաժեշտ տնօրէնների կամ ուսուցիչների կազմը՝ յատկապէս կրօն առարկայի դասաւանդման համար: Սոյն առաջարկը եւս պատուիրակութեան կողմից դրական ընկալւեց, եւ որոշւեց գործնական քայլեր առնելու համար ուսումնասիրել հնարաւորութիւնները:

Հանդիպման աւարտին Առաջնորդարանի կողմից յուշանուէրներ փոխանցուեցին պատուիրակութեան անդամներին եւ հիւրասիրութեան մտերիմ պահին շարունակուեցին քննարկել արծարծուած խնդիրները:

## ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՄՇԱԿՈՅԹԻ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ՍՊԱՀԱՆԻ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹԻՒՆ

Շաբաթ՝ 25 Նոյեմբեր 2017 թուականի միջօրէին, Սպահանի հայոց թեմի Ազգային առաջնորդարանի պատուիրակութիւնը, գլխաւորութեամբ թեմի առաջնորդ՝ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանի, այցելեց Իսլամական մշակոյթի եւ առաջնորդութեան Սպահանի գերատեսչութիւն՝ հոջ. Մոհամմադ Ալի Անսարիին՝ գերատեսչի պաշտօնում նշանակուելու առթիւ շնորհաւորանքներ փոխանցելու նպատակով:



Պատուիրակութեանը մաս էին կազմում Պատգ. ժողովի ատենապետ՝ Թաթուլ Օհանեանը, Թեմական խորհրդի ատենապետ՝ Վարուժ Մինասեանը, Կրօնական խորհրդի ատենապետ՝ Վարուժ Մովսիսեանը եւ Նոր Ջուղայի Հայ Դատի յանձնախմբի ներկայացուցիչ՝ Վահէ Թորոսեանը:

Առաջնորդարանի պատուիրակութեանն ընդունեց պարոն գերատեսուչը, ով ողջունելով ներկաներին մատնանշեց միաստուածեան կրօնների ընդհանրութիւնները եւ այն, որ Իսլամը եւ մուսուլմանները յարգում են բոլոր մարգարէներին, յատկապէս շեշտեց իրենց յարգանքը Յիսուս Քրիստոսի նկատմամբ: Նա անդրադառնալով տարածաշրջանում «ԴԱԷՇ» ահաբեկչական խմբաւորման գործողութիւններին, շնորհաւորեց Սիրիայում եւ Իրաքում սոյն խմբաւորման պարտութեան առիթով, նշելով, որ քրիստոնեաները ինչպէս ի-

րենց մուսուլման եղբայրները պայքարել են այս ծայրայեղական խմբաւորման դէմ:



Այնուհետեւ արտայայտուեց Գերապատիւ Հայր Սուրբը. նա փոխանցեց ազգային իշխանութեան եւ թեմի ժողովրդի շնորհաւորանքի խօսքը ուղղուած նորանշանակ գերատեսչին եւ յաջողութիւն մաղթեց նրան` իր ստանձնած նոր յանձնառութեան գործում: Հայր Սուրբը եւս շնորհաւորեց այսպէս կոչւող «Իսլամական պետութիւն» ծայրայեղական եւ ահաբեկչական խմբաւորման պարտութիւնը Իրաքում ու Սիրիայում եւ ընդգծեց Իրանի իսլամական հանրապետութեան դերակատարութիւնը այս յաջողութեան մէջ` յուսալով, որ տարածաշրջանում լինելու է խաղաղութիւն եւ կայունութիւն:

Հանդիպման ընթացքում պրն. Օհանեանն առ ի տեղեկութիւն բացատրութիւններ տուեց Սպահանի հայոց թեմի դրուածքի վերաբերեալ:

## ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՅՑԸ` ՍՊԱՀԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

Երեքշաբթի` 28 նոյեմբեր 2017 թուականի առաւօտեան, ՍՀԹ Ազգային առաջնորդարանի պատուիրակութիւնը, որին մաս էին կազմում թեմիս առաջնորդ` գերպ. տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը, Պատգ. Ժողովի, Թեմական եւ Կրօնական խորհուրդների ատենապետեր` Թաթուլ Օհանեանը, Վարուժ Մինասեանը, Վարուժ Մովսիսեանը եւ Նոր Ջուղայի Հայ Դատի յանձնախմբի ներկայացուցիչ` Վահէ Թորոսեանը, այցելեց Սպահանի քաղաքապետարան` շնորհաւորելու Ղոդրաթօլլահ Նոուզիին` Սպահանի քաղաքապետի պաշտօնում ընտրուելու կապակցութեամբ:

Սպահանի քաղաքապետ` Ղոդրաթօլլահ Նոուզին ողջունելով ներկաներին նշեց. «Մեզ համար Սպահանի բոլոր քաղաքացիները, անկախ իրենց կրօնից ու հաւատամքից, հաւասար են եւ հաւասարապէս օգտւում են բոլոր հնարաւորութիւններից: Սպահանում ապրող մուսուլմանները եւ քրիստոնեաները առանձնայատուկ կապուածութիւն ունեն այս քաղաքի հետ եւ երկու կրօնների հետեւողներն էլ Սպահանը գնահատում են որպէս կրօնների երկխօսութեան դարպաս»:



Քաղաքապետը յաւելեց. «Հայերը երկրում տիրող դժւարին պահերին եղել են իրենց մուսուլման եղբայրների կողքին եւ դրա վառ ապացոյցն է Իրան-Իրաք պարտադրեալ պատերազմի ընթացքում տուած նահատակները»:



Պրն. Նոուզին նշելով, թէ Ազգային առաջնորդարանը արտերկրի հետ կապեր հաստատելու լայն հնարաւորութիւններ ունի, ցանկացաւ օգտւելով առիթից, նպաստել առաւել մեծ թւով հայ եւ քրիստոնեայ զբօսաշրջիկներ ընդունելու եւ զբօսաշրջութեան բնագաւառին զարկ տալու գործին:

Թեմիս առաջնորդ գերպ. տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը, յանուն թեմի ազգային մարմինների եւ հայ համայնքի շնորհաւորեց նորընտիր քաղաքապետին եւ յոյս տածեց, որ առաւել ամուր յարաբերութիւններ եւ սերտ համագործակցութիւններ են ծաւալելու երկու կողմերի միջեւ: Նա նշեց, որ հայերը դարեր ի վեր ապրում են Սպահանում եւ երբեւէ իրենց ներքին աշխատանքների կազմակերպման գործում պետական խոչընդոտի չեն հանդիպել եւ դա փաստն է այն իրողութեան, որ Իրանում հայերը ապրում են ազատօրէն:

Պատգ. ժողովի ատենապետ Պրն. Օհանեանն եւս իր հերթին փոխանցեց շնորհաւորանքի խօսքեր եւ ներկայացրեց պատուիրակութեան կազմը:

# ՆՇՈՒԵՑ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԹԱՏՐՈՆԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 130-ԱՄԵԱԿԸ



Հինգշաբթի՝ 2017 թւականի նոյեմբերի 30-ին, հանդիսութեամբ նշւեց Նոր Ջուղայի թատրոնի հիմնադրման 130-ամեակը, Ն. Ջ. Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան դահլիճում:

Սպահանի հայոց թեմի Պատգ. ժողովի որոշմամբ ու հովանաւորութեամբ եւ Թեմական խորհրդի կողմից կեանքի կոչւած յոբելեանական յանձնախմբի կազմակերպմամբ իրականացւած այս ծրագրին ներկայ էին՝ Ծահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գունձանեանը, քահանայից դասի, թեմի ազգային մարմինների, Հայ Դատի յանձնախմբի, միութիւնների ու հայոց դպրոցների ներկայացուցիչներ եւ ժողովուրդ:





Երեկոն բացւած յայտարարւեց հաղորդավարուհի Ալինա Տէր-Սուքիասեանի ողջոյնի խօսքով, որից յետոյ արտայայտւեց կազմակերպիչ յանձնախմբի նախագահ Նիկիտ Միրզայեանցը: Նա նշեց. «Նոր Ջուղայում Բեգլար Աղայեանն ու Յովսէփ Միրզայեանը, տեղացի մի քանի արւեստասէր երիտասարդների հետ, 1887-ի փետրւարի 9-ին, ուսուցչական կազմի եւ աշակերտութեան համար տւել են հենց առաջին ներկայացումը՝ «Խեչոյի թուզը» եւ «Երկուսս էլ քաղցած ենք, երկուսս էլ փող չունենք» պիեսները, որը տեղի է ունեցել «Սիմոնենց» կոչւող տան դահլիճում»: Այնուհետեւ պրն. Միրզայեանցն իր խօսքը ծաւալեց՝ ակնարկ ունենալով Նոր Ջուղայի թատրոնի պատմութեանն ու յիշելով այս ճանապարհին դերակատար անձանց. կարեւորութեամբ ընդգծեց յատկապէս՝ ներկայացումներում կանանց դերակատարութիւնը, որը նկատի ունենալով ժամանակաշրջանի սուղ մտածելակերպը՝ ինքնին հերոսութիւն էր համարւում:

Յաջորդիւ ցուցադրւեց տեսաֆիլմ, որտեղ արտացոլւած էր Նոր Ջուղայի թատրոնի պատմութիւնը՝ համապատասխան լուսանկարներով:

Ընթացքում նորջուղայեցու գեղեցիկ բարբառով «Կարօտի երգը» կատարեցին՝ Վահէ Ակոնը եւ Արամազդ Մկրտչեանը, որը հանդիսատեսի մօտ ստեղծեց խանդավառ մթնոլորտ եւ արժանացաւ բարձր ծափողջոյնների:



Ն. Ջ. Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան Մշակութային միաւորի «Լեւոն Շանթ» թատերախումբը ղեկավարութեամբ Գաբրիէլ Թիքիդչեանի, երեք արարով վարպետօրէն ներկայացրեց ֆրանսահպատակ Բելգիացի դրամատուրգ Մորիս Հէննեկինի «Բեբեկս» (Ախ այս ստախօս կանայք) կատակերգութիւնը: Հանդիսատեսի բարձր գնահատանքին արժանացած այս ներկայացումը պատմում էր մի կնոջ ստախօսութեան մասին, որի պատճառով էլ ընտանիքում առաջանում են անհամաձայնութիւններ ու վէճեր: Հերոսուհու ստերին վերջ չկայ, քանի որ նա իր նախորդ սուտը քողարկելու համար ստիպւած է անընդհատ նորն ասել, ինչի պատճառով էլ ստախօսի համար առաջանում են մեծ բարդութիւններ:





Դերերում հանդէս եկան Վաղօ Տէր-Սուքիասեանը, Հայդուկ Վարդեւանեանը, Զարենուշ Աղուրեանը, Կարէն Խանլարեանը, Հրաչ Տէր-Յովհաննիսեանը, Յասմիկ Յովսէփեանը, Անասիկ Ծառուկեանը, Մարինէ Հայրապետեանը եւ Էդմոնդ Օրդուբէգեանը:

Երեկոն եզրափակւեց Սպահանի հայոց թեմի Պատգ. ժողովի ատենապետ Թաթուլ Օհանեանի խօսքով, ով ակնարկ նետեց թատրոնի հետ կապւած իր յուշերին եւ անցեալ տարիների ընթացքում ներկայացւած ներկայացումներին: Ահա մի հատւած պրն. Օհանեանի

խօսքից. «Գեղեցկօրէն ներկայացւեց «Բեբեկս»-ը եւ Նոր Ջուղայի բարբառը, որոնք մեզ տարան դէպի մեր փառաւոր անցեալն ու ակունքները… Թատրոնը բացի այն, որ վեր է հանում եւ խարազանում համայնքի տկար կողմերը, միեւնոյն ժամանակ գնահատելով բարոյական կողմերը՝ այն ներկայացնում է ժողովրդին: Կեանքի իրական կրթիչ ու դաստիարակիչ տեղն է բեմը եւ թատրոնը: Հայկական թատրոնը վաղեմի անցեալ ունի. Քրիստոսից 70-80 տարիներ առաջ, պատմական Հայաստանի Տիգրանակերտ եւ Արտաշատ քաղաքներում բեմադրուել են յունական ողբերգութիւններ: Անցեալ ունի մեր ժողովուրդը թատրոնի հետ, ինչպէս նաեւ մենք ջուղայեցիներս անցեալ ունենք թատրոնի հետ»:



## ՅՈՒՆԱՀՌՈՄԷԱԿԱՆ ԸՆՄԲՇԱՄԱՐՏԻ ԱՇԽԱՐՀԻ ՉԵՄՊԻՈՆԻ ԱՅՑԸ՝ Ս. Ա. ՎԱՆՔ

Չորեքշաբթի՝ դեկտեմբերի 13-ի առաւօտեան, Ս. Ա. Վանք այցելեցին ըմբշամարտի հայ չեմպիոններ՝ Կարէն Ասլանեանը եւ Մաքսիմ Մանուկեանը, որոնք Իրանի «Սիմա Սանաթ» խմբի կողմից մասնակցում են աշխարհի ակումբների լիգայի մրցոյթներին: Խմբին դիմաւորեցին Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ՝ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանը, Թեմական խորհրդի ատենապետ՝ Վարուժ Մինասեանը, նոյն խորհրդի անդամ՝ Վահիկ Թորոսեանը եւ Ն. Ջ. Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան Կենտ. վարչութեան անդամ՝ Ժորժ Ղազարեանը:

Խմբի անունից պրն. Դոլաթ Խահը, որպէս խմբի թարգմանիչ եւ նաեւ Հայաստանը ներկայացնող միջազգային կարգի մրցավար, շնորհակալութիւն յայտնեց իրենց ընդունելու համար եւ ներկայացրեց պատուիրակութեան անդամներին:

Այնուհետեւ արտայայտուեց գերպ. Հայր Սուրբը, ով ողջունելով հիւրերին՝ բացատրեց Առաջնորդարանի դրւածքը եւ նշեց. «Դուք հայ ազգի պարծանքն էք, քանի որ երբ աշխարհում դառնում էք չեմպիոն, Ձեր միջոցով աշխարհը ճանաչում է նաեւ հայ ազգին»,  ապա յաջողութիւն մաղթելով տղաներին, վստահեցրեց, որ Սպահանի հայոց թեմի զաւակները միշտ հետեւում են տեղի ունեցած մրցոյթներին եւ բարձր գնահատում նրանց:



Հանդիպման ժամանակ ընթացաւ մտերմիկ զրոյց եւ մարզիկները ու պատասխանատուները կիսեցին իրենց յոյզերը եւ մտորումները:

Վերջում հիւրերն այցելեցին «Ս. Յովսէփ Արիմաթացի» եկեղեցի եւ «Խաչատուր վրդ. Կեսարացի» թանգարան:

## ԽԱՉՎԵՐԱՑ ՏՕՆԻ ԱՌԹԻՒ Ս. ԵՒ ԱՆՄԱՀ ՊԱՏԱՐԱԳ՝ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ ՊԱՏԱՐԱԳԻՆ ՆԱԽԱԳԱՀԵՑ ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՆԱԽԿԻՆ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐՇ. Տ. ԲԱԲԳԷՆ ԱՐՔ. ՉԱՐԵԱՆԸ



Հայաստանեայց Առաքելական սուրբ եկեղեցու հինգ տաղաւար տօներից վերջինը՝ Խաչվերացը, ս. եւ անմահ պատարագի մատուցմամբ նշւեց Նոր Ջուղայի Ս. Ստեփանոս եկեղեցում, կիրակի՝ 2017 թւականի սեպտեմբերի 17-ի առաւօտեան: Պատարագին նախագահեց Սպահանի հայոց թեմի նախկին առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանը, ով ներկայիս առաջնորդում է Կանադայի հայոց թեմը:

Պատարագը մատուցեց Շահինշահրի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանը, որին մասնակցում էին եկեղեցական ու դպրաց դասերը. երգեցողութիւնը կատարեց Ս. Ա. Վանքի «Կոմիտաս» երգչախումբը:



Ընթացքում յաւուր պատշաճի քարոզեց գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանը, ով սկզբում իր ուրախութիւնը յայտնեց դարձեալ Նոր Ջուղայում գտնուելու առթիւ:

Նա բնաբան ունենալով Պօղոս առաքեալի հետեւեալ խօսքը՝ «Պարծենում եմ Յիսուս Քրիստոսի խաչով», անդրադարձաւ նրա կեանքին ու գործունէութեանը, նշելով, թէ ինչպէս առաքեալը աստուածային լոյսով լուսաւորուեց, դարձի եկաւ եւ միանգամից քրիստոնեաներին հալածողից վերածուեց քրիստոնէութեան ու ճշմարիտ հաւատի տարածողը՝ իր ամբողջ կեանքը նուիրելով Յիսուս Քրիստոսին:

Սրբազան Հայրը աւելացրեց. «Եթէ չլինէին խաչն ու խաչելութիւնը, չէր լինելու նաեւ ողջ մարդկութեան փրկութիւնը: Աստծոյ որդին աշխարհ եկաւ, որպէսզի մարդուն առաջնորդի դէպի Աստուած: Եթէ խաչը չլինէր, ապա չէին լինելու խաչի խորհրդանիշը եղած զօրութիւնը, նւիրումը, զոհողութիւնը, սէրը եւ ինքնընծայումը»:

Գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանն շեշտեց, թէ իւրաքանչիւր անհատ ունի իր խաչը, որը պիտի կրի իր ուսերի վրայ՝ ամբողջ ծանրութեամբ հանդերձ, սակայն դա լինելու է որպէս քաղցր լուծ:

Պատարագին ներկայ էին նաեւ թեմիս ազգային մարմինների ներկայացուցիչները, Սրբազան Հօր գլխաւորութեամբ Իրան այցելութիւն կատարած կանադահայ ուխտաւորները եւ Նոր Ջուղայի ու Շահինշահրի հայ համայնքների անդամները:

Վերջում, եկեղեցու շրջափակում կազմակերպւած ընդունելութեան ընթացքում, ժողովուրդն առիթ ունեցան մօտենալու իր նախկին առաջնորդին եւ մտերմիկ զրոյց ունենալու նրա հետ:

## ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ ՆՇՈՒԵՑ Ս. ԳԷՈՐԳ ԶՕՐԱՎԱՐԻ ՏՕՆԸ՝ ԵՐԿՕՐԵԱՅ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ

Ուրբաթ եւ շաբաթ՝ 2017 թւականի հոկտեմբերի 6-ին եւ 7-ին, Ս. Գէորգ զօրավարի տօնի առթիւ երկօրեայ արարողութիւններ տեղի ունեցան Նոր Ջուղայի Ս. Գէորգ եկեղեցում:

Նախատօնակի օրը՝ ուրբաթ, կէսօրից անց ժամը 3:00-ին, եկեղեցու շրջափակում, Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանի միջոցով եւ թեմիս եկեղեցական ու դպրաց դասերի մասնակցութեամբ կատարուեց աղօրհնէքը, իսկ երեկոյեան ժամը 6:00-ին, եկեղեցում, Հսկման արարողակարգը: Նոյն երեկոյի ընթացքում տեղի ունեցաւ նաեւ ոչխարների զենման արարողութիւնը:

Շաբաթ առաւօտեան, տօնի առթիւ սուրբ եւ անմահ պատարագը մատուցեց ձեռամբ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանի ու մասնակցութեամբ Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանի եւ եկեղեցական ու դպրաց դասերի: Ընթացքում երգեցողութեամբ հանդէս եկաւ Ս. Ամենափրկիչ վանքի «Կոմիտաս» երգչախումբը՝ ղեկավարութեամբ Արմէն Ամիրխանեանի: Այդ օրը նշուեց նաեւ եկեղեցու անւանակոչութեան տօնը:



Պատարգիչ Հայր Սուրբն օրւան պատշաճ իր քարոզում անդրադառնալով զօրավարի կեանքին ու գործունէութեանը եւ ի մասնաւորի ընդգծելով, որ Սուրբը որպէս տիպար է հանդէս գալիս՝ անաբարոյ աշխարհի, մոլութիւնների եւ մոլորութիւնների դէմ քաջութեամբ պատերազմելու համար, յորդորեց՝ աղօթել առ բարձրեալն Աստուած, որպէսզի ուժ, հոգեկան կորով եւ կարողութիւն պարգեւի բոլորին՝ սուրբ Գէորգ զօրավարի նման մեղքի շղթաները փշրելու եւ նորոգւած մտքով, սրտով ու հոգով, անկոտրուն կամքով ու հաստատ հաւատքով՝ Աստծուց հեռացնող եւ չարի ու սատանայի գիրկը նետող մերօրեայ բոլոր կուռքերը կործանելու համար:



Ս. պատարագից յետոյ երգեցիկ խմբի եւ եկեղեցական դասի կազմած թափօրի ուղեկցութեամբ առաջնորդ Հայր Սուրբն այցելեց եկեղեցու բակ, որտեղ մատաղօրհնէքի արարողութեամբ օրհնեց Նոր Ջուղայի Հայոց Առաքելական Եկեղեցեաց վարչութեան կազմակերպութեամբ եւ Հարիսայի յանձնախմբի միջոցով պատրաստւած հարիսան ու բաժանեց հաւատացեալների միջեւ:

Արարողութիւններին ներկայ էին հոծ թւով ժողովուրդ: Ս. եւ անմահ պատարագին ներկայ գտնուեցին նաեւ Նոր Ջուղայի հայոց ազգ. «Արմէն» երկսեռ տարրական կրթահամալիրի աւագ դասարանների աշակերտներն ու պատասխանատուները:

# ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒՄ ՆՇՈՒԵՑ ԱԲԳԱՐ ԹԱԳԱՒՈՐԻ ՏՕՆԸ



Երեքշաբթի՝ 2017 թուականի դեկտեմբերի 5-ի առաւօտեան, ի յիշատակ Աբգար նախավկայ թագաւորի, ս. եւ անմահ պատարագ մատուցեց Նոր Ջուղայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցում՝ նախագահութեամբ Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանի:

Պատարագիչ հայրն էր արժ. Տ. Խաչատուր քհնյ. Զարգարեանը: Արարողութեանը ներկայ էին նաեւ եկեղեցական դասը, հաւատացեալ ժողովուրդ եւ գեղեցիկ աւանդոյթի համաձայն՝ հայոց ազգ. մանկապարտէզ-նախակրթարանի սաները՝ դպրոցի տնօրինութեան, ուսուցչական կազմի ու ծնողական խորհրդի անդամների ուղեկցութեամբ: Պատարագի ընթացքում երգեցողութեամբ հանդէս եկաւ Ս. Ա. Վանքի «Կոմիտաս» երգչախումբը:



Օրուայ քարոզը տուեց գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանի միջոցով, ով սկզբում մանուկներին դիւրըմբռնելի ձեւով բացատրեց Աբգար թագաւորի կեանքի ու գործունէութեան մասին: Այնուհետեւ Հայր Սուրբն իր խօսքն ուղղեց բոլոր ներկաներին եւ ասաց. «Երբեմն մանուկների լեզուն, որը բխում է մարդու սրտից ու հոգուց, նոր ճանապարհ է բացում մեր կեանքում եւ փոքրիկները կարողանում են մեզ առաջնորդել դէպի այն ճանապարհը, որը գնաց Աբգար թագաւորն՝ իր անմեղութեան շնորհիւ: Մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոսը, Աբգար թագաւորի միջոցով մեզ սովորեցրեց, որ անգամ եթէ Քրիստոսը հեռու լինի մեզանից հաւատքի միջոցով Նա կը մօտենայ մեզ»:



Քարոզի աւարտին հաւատացեալները ստացան հաղորդութիւն, իսկ եկեղեցու բակում՝ Նոր Ջուղայի Հայոց Առաքելական Եկեղեցեաց վարչութեան նախաձեռնութեամբ եւ մանկապարտէզ-նախակրթարանի ծնողական խորհրդի միջոցով պատրաստուած մրգերն ու եկեղեցու Տիկնանց յանձնախմբի նախատեսած քաղցրաւենիքները բաժանեցին փոքրիկներին:

# ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԶԱՆԳԸ՝ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՑ ԱԶԳ. ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ



Շաբաթ՝ 2017 թուականի սեպտեմբերի 23-ի առաւօտեան ժամը 8-ին, Նոր Ջուղայի հայոց ազգ. կրթահամալիրում տիրում էր իւրայատուկ եռուզեռ: Ուսումնական տարեշրջանի վերամուտի առթիւ դպրոցի բակում համախմբուել էին Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը, քահանայից դասի, ազգային մարմինների եւ շրջանի Հայ Դատի յանձնախմբի ներկայացուցիչները, Նոր Ջուղայի «Արմէն» տարրական եւ «Քանանեան» ու «Կատարինեան» միջնակարգ դպրոցների տեսչութիւնները, ուսուցչական կազմերը, աշակերտ-ուհիներն ու ծնողները:

Սկզբում ողջոյնի եւ շնորհաւորանքի խօսքով հանդէս եկաւ «Արմէն» երկսեռ տարրական դպրոցի տնօրէն Վրէժ Շիրւանեանը, այնուհետեւ յանուն թեմի Կրթական խորհրդի արտայայտուեց նոյն խորհրդի ատենապետուհի Մարգարիտ Դաւթեանը, որը շնորհաւորելով դպրոցական տարեմուտի առթիւ եւ ուժ ու կորով մաղթելով աշակերտներին ու պատասխանատուներին, նշեց, թէ այսօր՝ դպրոցի ու աշակերտի գարունն է. գարնանամուտ, որը ծաղկում է աշակերտի ժրաջանութեամբ, ուսուցման ծանր պարտականութիւնը ստանձ-

նած կրթական մշակների ջանքերով, ծնողների անսահման հոգատարութեամբ ու ազգային մարմինների ամենօրեայ ուշադրութեան շնորհիւ:



Իր հայրական օրհնանքը փոխանցեց գերշ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը: Թեմակալ առաջնորդը նախ փոխանցեց իր սրտագին բարեմաղթանքներն ու շնորհաւորանքները, ապա մատնանշելով, որ ուսումնական տարեշրջանը ոչ միայն կրթական, այլեւ դաստիարակչական տարեշրջան է, աւելացրեց՝ շատ գեղեցիկ եւ ճշգրիտ կերպով է ասւած, թէ տունը առաջին դպրոցն է եւ դպրոցը՝ երկրորդ տունը: Նա շարունակեց նաեւ, որ հայկական դպրոցում աշակերտին փոխանցւում է հայեցի դաստիարակութիւն եւ այստեղ է, որ թրծւում է հայ աշակերտը, սակայն չպէտք է մոռանալ՝ մատաղ սերնդի մարդկային կերպարի կերտման գործում մեծ դերակատարութիւն ունի յատկապէս իր ընտանիքը:

Վերջում բոլորը միասնաբար արտասանեցին Տէրունական եւ «Զգործս ձեռաց Մերոց ...» աղօթքները, որից յետոյ Հայր Սուրբը հնչեցրեց ուսումնական տարեշրջանի առաջին զանգը:

Հայր Սուրբի գլխաւորած պատուիրակութիւնը ներկայ գտնւեց նաեւ կրթահամալիրին կից դպրոցում՝ Նոր Ջուղայի հայոց ազգ. մանկապարտէզ-նախակրթարանում, ուր նոյնպէս տարեմուտի առթիւ տեղի ունեցաւ հանդիսութիւն: Սկզբում սաներն ու ծնողները ունկնդրեցին դպրոցի տնօրինուհի Քառոլին Դիլանչեանի ողջոյնի խօսքը, ապա գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը փոխանցեց շնորհաւորանքի խօսքեր ու յաջողութեան մաղթանքներ:

Արտայայտութիւնների աւարտին կատարւեց Տէրունական աղօթք, որից յետոյ Հայր Սուրբի ձեռամբ հնչեց դպրոցական առաջին զանգը:



## ՋԱՒԱԽՔԻՆ ՆՈՒԻՐՒԱԾ ԵՐԵԿՈՅ՝ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ

Շրջանի Հայ Դատի «Արձագանք» քարոզչական յանձնախումբը Ջաւախքին նւիրւած իր միջոցառումների շրջագծում, ուրբաթ՝ 2017 թւականի հոկտեմբերի 13-ին, Նոր Ջուղայի Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան սրահում կազմակերպեց բանախօսական-գեղարւեստական երեկոյ: Միջոցառմանը ներկայ էին Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը, քահանայից դասի, շրջանի Հայ Դատի յանձնախմբի, ազգային մարմինների, միութիւնների ու հայոց ազգ. դպրոցների ներկայացուցիչներն ու ժողովուրդ:



Որպէս սկիզբ՝ երեկոյի բացման խօսքում հաղորդավարուհի Մանիա Ղուկասեանն ընդգծեց ջաւախքահայութեան իրաւունքների վերականգնման հարցը՝ շեշտելով յատկապէս երկար տարիների ընթացքում Վրաստանի իշխանութիւնների կողմից կիրառւած խտրականութեան քաղաքականութիւնը սոյն շրջանի հայութեան նկատմամբ: Նա նաեւ զեկոյցով հանդէս եկաւ շրջանիս Հայ Դատի յանձնախմբի ստեղծած՝ Ջաւախքի օժանդակութեան հիմնադրամի գումարներով մինչեւ օրս կատարւած աշխատանքների շուրջ:



Այնուհետեւ երեկոյի բանախօսութիւնն իրականացրեց ազգային-հասարակական գործիչ, պատմաբան Վարուժ Մովսիսեանը: Նա իր խօսքի սկզբնական բաժնում անդրադառնալով Ջաւախքի պատմականին, յատկապէս մատնանշեց Խորհրդային կարգերի՝ ազգային հարցերի լուծման քաղաքականութեան շրջագծում, 1921 թւականին Թիֆլիսում կնքւած հայ-վրացական պայմանագիրը, որի արդիւնքում Ջաւախքը կցւեց Վրաստանի խորհրդային սոցիալիստական հանրապետութեան կազմին, ինչու չէ նաեւ 1929 եւ 1936 թւականներին, Խորհրդային միութեան առաջին եւ երկրորդ սահմանադրութիւնների ընդունման ժամանակ, տարածքների վերադարձման

ուղղութեամբ հայ քաղաքական այրերի ու մտաւորականութեան ջանքերի ապարդիւն աւարտը:

Բանախօսական ելոյթի երկրորդ բաժնում զրոյցը ծաւալուեց Ջաւախքի ներկայ իրավիճակի շուրջ, ուր ընդգծուեց սոյն շրջանում հայերէն լեզւի իրաւական կարգավիճակի բացակայութիւնը, իշխանութիւնների կողմից ստեղծուած խոչընդոտները հոգեւոր եւ մշակութային հարցերում, հայկական եկեղեցիների ու յուշակոթողների իւրացումը եւ ջաւախքահայութեան նկատմամբ կիրառուած խտրականութեան քաղաքականութիւնը, որի առաջացման մէջիրուրոյն դերն է ունեցել յատկապէս սոյն երկրումաշխատող թուրք-ադրբեջանական գործօնը:

Վարուժ Մովսիսեանն նշելով, որ Ջաւախքը ազգային ինքնակառավարման կարգավիճակ չունենալու պատճառով, չի կարողացել իր դերակատարութիւնն ունենալ շրջանում եւ երկրում, աւելացրեց, թէ միջազգային բեմերից շարունակ պէտք է յիշեցնել՝ Վրաստանում վտանգը ոչ թէ հայկական, այլ թուրանական է, ինչի փարատման համար անհրաժեշտ է տարածաշրջանի երկրների՝ Իրանի, Հայաստանի, Վրաստանի եւ Ռուսաստանի միջեւ համագործակցութեան կայացումը: Նա իրավիճակի բարելաւման ուղղութեամբ ելքերի շարանում կարեւորեց յատկապէս շրջանում Հայ Առաքելական եկեղեցու գործունէութեան ընդլայնումն ու Սփիւռք-Հայաստան ջանքերի համատեղումը:

Բանախօսական ելոյթից յետոյ ցուցադրուեց ՀՕՄ-ի Ջաւախքի օժանդակութեան ծրագրերի յանձնախմբի միջոցով պատրաստուած տեսանիւթը, ուր արտացոլուած էին տարածաշրջանի մասին աշխարհագրական ու հասարակական տեղեկութիւններ, ջաւախքահայութեան դժւարութիւններն ու սոյն յանձնախմբի նախաձեռնութեամբ իրագործուած բարեսիրական աշխատանքները:

Ծրագրի գեղարւեստական բաժնում մենակատարումներով հանդէս եկան Ս. Ամենափրկիչ վանքի «Կոմիտաս» երգչախմբի երիտասարդ մեներգիչները. Վահանդ Իսաղուլեանը կատարեց «Հայի զաւակ»-ը, Հարմա Կարապետեանի եւ Արպիկ Սիմոնեանի կենդանի նւագակցութեամբ Վանա Ծիրւանեանը մեներգեց «Մօր երգը զինուորին»-ը, «Մեր էրգիր»-ը հնչեց Հարմա Կարապետեանի միջոցով, իսկ Նարբէ Գրիգորեանը ելոյթ ունեցաւ «Ջաւախեցին քէֆ կընէ» երգով:



Որպէս եզրափակիչ խօսք իր հայրական օրհնանքը փոխանցեց թեմակալ առաջնորդ Հայր Սուրբը, ուր ամենասկզբում գնահատանքի խօսք ուղղեց երեկոյի բանախօսին՝ իր ծաւալած բովանդակալից ելոյթի եւ միջոցառման կազմակերպիչներին ու շրջանի Հայ Դատի յանձնախմբին՝ Ջաւախքին զօրավիգ կանգնելու ուղղութեամբ իրականացրած գործունէութեան համար: Նա իր խօսքի շարունակութեան մէջ անդրադառնալով «Քաղաքականութեան մէջ բարոյականութիւն չկայ» խօսքին, նշեց՝ այսօր անձնական շահերի հիման վրայ վրացիները մոռացել են իրենց վաղեմի հարեւան՝ հայ ազգի բարեկամութիւնը եւ խլում են ջաւախքահայութեան իրաւունքները: Թեմակալ առաջնորդն ընդգծեց նաեւ Սփիւռք-Հայաստան համատեղուած ուժերով ջաւախքին զօրավիգ հանդիսանալու կարեւոր հրամայականը:

Երեկոյի ընթացքում ընդունուեցին ազգային մարմինների ու հաստատութիւնների, ինչու չէ նաեւ ժողովրդի սրտաբուխ նւիրատուութիւնները՝ յօգուտ ջաւախքահայութեան օժանդակութեան հիմնադրամին:









## «ԲԵՐՔԱՌԱՏ ԱՐՑԱԽ» ՆՇԱՆԱԲԱՆՈՎ ՀԵՌՈՒՍՏԱՄԱՐԱԹՈՆԻ ԾՐՋԱԳԾՈՒՄ ՆԻՒՐԱՀԱՒԱՔ՝ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ ԵՒ ՇԱՀԻՆՇԱՀՐՈՒՄ

Շրջանի Հայ Դատի յանձնախմբի նախաձեռնութեամբ եւ Հ.Յ.Դ. «Ռուբէն» երիտասարդական միութեան կազմակերպութեամբ, հինգշաբթի՝ 2017 թւականի նոյեմբերի 23-ի երեկոյեան ժամը 7:30-ից, Նոր Ջուղայում եւ առաջին անգամը լինելով Շահինշահրում, Հայաստան համահայկական հիմնադրամի հեռուստամարաթոնի ծիրում կազմակերպւեց թելեթոն-նւիրահաւաք: Որպէս նւիրահաւաքի վայր նկատի էին առնւել Նոր Ջուղայի Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան եւ նոյն միութեան Շահինշահրի մասնաճիւղի կենտրոնատեղիները:

Միջոցառմանը մօտիկից ծանօթանալու, երիտասարդ կազմակերպիչներին խրախուսելու, ինչու չէ նաեւ իրենց նւիրատւութիւնները կատարելու համար՝ Նոր Ջուղայի կենտրոն այցելեց Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը, իսկ Շահինշահրի կենտրոն՝ սոյն համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանը. վերոնշեալներին ընկերակցում էին թեմի ազգային մարմինների եւ շրջանի Հայ Դատի յանձնախմբի ներկայացուցիչները:

Երեկոյի ընթացքում նւիրատւութիւն կատարեցին՝ թեմիս ազգային մարմինները, Իրանի Իսլ. խորհրդարանում Սպահանի եւ հարաւային իրանահայութեան պատգամաւորը, շրջանի Հայ Դատի յանձնախումբը, Նոր Ջուղայի եւ Շահինշահրի հայոց ազգային դպրոցների աշակերտութիւնը, միութիւններն ու ժողովուրդը:

Ինչպէս նախորդ տարիները՝ այս տարի եւ նւիրահաւաքից գոյացած գումարը փոխանցւելու է Հայաստան համահայկական հիմնադրամին:





## ՋԱՒԱԽՔԻՆ ՆՒԻՐՒԱԾ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՄՐՑՈՅԹ՝ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ,ԱՐՄԷՆԷ ՏԱՐՐԱԿԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ

Նախաձեռնութեամբ Հայ Դատի «Արձագանք» քարոզչական յանձնախմբի ու համագործակցութեամբ Նոր Ջուղայի «Արմէնէ» երկսեռ տարրական կրթահամալիրի տնօրինութեան եւ ուսուցչական կազմի, չորեքշաբթի՝ դեկտեմբերի 13-ի երեկոյեան, Նոր Ջուղայի հայոց ազգ. կրթահամալիրի «Ալենուշ Տէրեան» դահլիճում կայացաւ Ջաւախքին նւիրւած գիտելիքների մրցոյթ՝ «Արմէն» կրթահամալիրի 4-րդ, 5-րդ եւ 6-րդ դասարանների աշակերտութեան մասնակցութեամբ: Որպէս հանդիսատես աշակերտներին խրախուսեցին շրջանի Հայ Դատի յանձնախմբի անդամները եւ մասնակից դպրոցի տնօրինութիւնը, ուսուցչական կազմն ու ծնողները:



Իրաւարար կազմի պատասխանատու աշխատանքն ստանձնել էին՝ Նոր Ջուղայի մանկապարտէզ-նախակրթարանի տնօրէն Քառոլին Դիլանչեանն ու «Արմէն» կրթահամալիրի հայերէն առարկաներ դասաւանդող ուսուցչուհի Սքարլետ Հայրապետեանը: Մրցոյթը վարեց Վանա Ծիրանեանը:



Ծրագրին մասնակցող 74 աշակերտները բաժանւել էին 12 խմբերի միջեւ: Սկզբում խմբերի ներկայացուցիչների ներկայութեամբ տեղի ունեցաւ վիճակահանութիւն, ուր ճշտւեց մրցոյթում խմբերի մասնակցութեան հերթականութիւնը: Առաջին նախնական փուլում միմեանց հետ մրցակցեցին «Աստղիկ», «Արծիւ», «Արարատ», «Մասիս», «Արագած» եւ «Ասպետ», իսկ երկրորդի ընթացքում՝ «Երեւան», «Սասուն», «Նեմրութ», «Անի», «Ջաւախք» եւ «Արցախ» խմբերը: Նախնական

փուլերի աւարտին քանի որ «Ասպետ», «Նեմրութ» եւ «Զաւախք» խմբերը համահաւասար նիշեր հաւաքելով միասնաբար հանդիսացել էին որպէս լաւագոյններ, իրաւարար կազմը յիշեալների համար հնչեցրեց լրացուցիչ հարցեր՝ ճանաչելու եզրափակչի երկու մասնակիցներին: Արդիւնքում «Նեմրութ» եւ «Ասպետ» խմբերը յաջողեցին թեւակոխել եզրափակիչ փուլ, ուր առաւելագոյն նիշերը հաւաքեց «Նեմրութ»-ը եւ հանդիսացաւ մրցոյթի յաղթողը: «Նեմրութ»-ին անդամակցում էին՝ Լուսին Տէր-Մկրտչեանը, Անայի Խաչեանը, Լեմուէլ Թահմազեանը, Սերինէ Յակոբեանը, Ադելինա Յարութիւնեանը եւ Դաւիթ Արքա Պօղոսեանը:



Հարցերի շարանում ընդգրկուած էին Զաւախքի աշխարհագրականից եւ պատմականից, անւանի ջաւախքցիների կենսագրականից, ընդհանուր գիտելիքներից ու տարրական բաժնի մայրենի գրքերից հարցեր. նախատեսւել էին նաեւ սուդոքու խաղի, փազլի եւ հայրենասիրական երգի կատարման բաժինները: Զաւախքին առնչւող հարցերը կազմել էին Կազմակերպիչ յանձնախմբի կողմից աշակերտներին տրամադրուած՝ սոյն շրջանը ծանօթացնող գրքոյկից: Անցկացւած բոլոր փուլերի ընթացքում ակնյայտ էին մասնակիցների միջեւ տիրող ընկերական, առողջ մրցակցութեան եւ խանդավառ մթնոլորտն ու նրանց պատրաստւածութիւնը:



Վերջում Հայ Դատի յանձնախմբի ներկայացուցիչ Վահէ Թորոսեանի, «Արմէն» կրթահամալիրի տնօրէններ՝ Վրէժ Շիրւանեանի ու Արսինէ Դաւթեանի եւ «Արձագանք» քարոզչական յանձնախմբի պատասխանատուներ՝ Միգանուշ Տէր-Մարտիրոսեանի ու Անդրանիկ Զաւահիրեանի միջոցով գնահատագրեր շնորհւեցին բոլոր մասնակիցներին, իսկ պարգեւատրւեց յաղթող խումբը:

Յատկանշական է, որ հարցաշարի կազմելու գործում իրավարար կազմի հետ համագործակցել էր «Արմէն» կրթահամալիրի հայերէնի ուսուցչուհի Անահիտ Օհանեանը, իսկ մրցոյթի համակարգչային ձեւաւորումները իրականացրել էր Վերգինէ Միրզախանեանը:

## ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՄԲ ՆՇԱՆԱՒՈՐՈՒԵՑ Հ.Յ.ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 127-ԱՄԵԱԿԸ՝ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ ԵՒ ՇԱՀԻՆՇԱՀՐՈՒՄ ՍՈՅՆ ԱՌԻԹԻՆ ՆԻՒՐՈՒԱԾ ՇՐՋԱՆԻ ՀԱՅ ԴԱՏԻ ՅԱՆՁՆԱԽՄԲԻ ՇԱՀԻՆՇԱՀՐԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԲԱՑՈՒՄ

Շրջանի Հայ Դատի «Արձագանք» քարոզչական յանձնախմբի նախաձեռնութեամբ, յանուն հայ ժողովրդի ու հայրենիքի ծնունդ առած կուսակցութեան՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան 127-ամեայ յոբելեանի առթիւ, հինգշաբթի՝ 2017 թւականի դեկտեմբերի 14-ին, Նոր Ջուղայում, իսկ ուրբաթ՝ դեկտեմբերի 15-ին, Շահինշահրում տեղի ունեցաւ տօնակատարութիւն:



Հինգշաբթի երեկոյի ձեռնարկն իրականացւեց Նոր Ջուղայի Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան սրահում՝ սկիզբ առնելով Հ.Յ.Դ. քայլերգ «Մշակ Բանւոր»-ի յոտնկայս ունկնդրութեամբ ու օրւայ հանդիսավար Կարէն Խանլարեանի ողջոյնի եւ առիթին նւիրուած խօսքերով:

Իր բանախօսական ելոյթը ծաւալեց Հայաստանից ժամանած, Հ.Յ.Դ. Բիւրոյի Տնտեսական հետազօտութիւնների գրասենեակի ղեկավար Սուրէն Պարսեանը: Նա իր խօսքում նշելով, որ վերջին 27 տարիները Դաշնակցութեան համար եղել է հայրենաշինութեան ժամանակաշրջան, որի շրջագծում՝ յանուն այսօրւայ Ազատ, Անկախ եւ վաղւայ Միացեալ Հայաստանի կերտմանն ու հզօրացմանը իրականացւել է հայաստանակենտրոն քաղաքականութիւն, եւ ընդգծելով, որ այս ընթացքում Դաշնակցութեան օրակարգի գլխաւոր հարցը եղել է Արցախի եւ արցախահայութեան ազատագրութիւնը, պաշտպանութիւնը եւ ինքնորոշման իրաւունքի իրացումը, աւելացրեց. «Հայ ժողովուրդը միասնական է Արցախի հարցում… Ապրիլեան քառօրեայ հերոսամարտը ի ցոյց ամբողջ աշխարհի, մեր թշնամիներին ապացուցեց, որ մեզ համար ազատ Արցախը գերագոյն արժէք է, որի պաշտպանութեան բագինին իր կեանքը դրեց նաեւ այսօրւայ սերունդը… Մենք զիջելու հող չունենք: Սա մեր կարմիր գիծն է»:

Այնուհետեւ Սուրէն Պարսեանն անդրադառնալով 2015 թւականի դեկտեմբերի 6-ին, Հ.Հ. Սահմանադրութեան փոփոխութիւնների հանրաքւէով ամրագրուած խորհրդարանական կառավարման Հ.Յ.Դ. տեսլականին, ասաց, որ «Հայաստանեան սոցիալ-

տնտեսական իրականութեան պայմաններում «Ոչ» ասելը շատ դիւրին էր, սակայն «Այո» ասողների ուսերին էր դրուած մի մեծ պատասխանատուութիւն՝ ապահովել անձնակենտրոն կառավարումից անցումը կոլեկտիւ կառավարմանը եւ հաշուետուողականութեանը: Դաշնակցութիւնն ստանձնեց այդ պատասխանատուութիւնը՝ լինելով ընդդիմութիւն, ինչը հայ իրականութեան պայմաններում աննախադէպ էր, ոմանց համար անհասկանալի»:







Ելոյթի մի այլ բաժնում նա աւելացնելով, որ Հ.Հ. օրէնսդիր եւ գործադիր մարմիններում աշխատող դաշնակցականների առջեւ խնդիր է դրուել՝ իրենց գործունէութեան ընթացքում իրականացնել Հ.Յ.Դ. քաղաքական եւ սոցիալ-տնտեսական ծրագրերից բխող ինքնուրոյն մարտավարութիւն, որի մշակման աշխատանքներին աջակցութեան համար՝ ստեղծուել է Հ.Յ.Դ. Բիւրոյի Տնտեսական հետազօտութիւնների գրասենեակը, ընդգծեց, որ 2017 թուականի 10 ամիսների ընթացքում գրանցուել է վերջին տարիների համեմատ բարձր տնտեսական ակտիւութիւն՝ շուրջ 7 տոկոս, ինչը պայմանաւորուած է արդիւնաբերութեան, առեւտրի եւ ծառայութեան ոլորտների աճով ու ստուերի կրճատմամբ:

Բանախօսն իր խօսքի աւարտին շեշտելով, որ Հայաստանը եւ Սփիւռքը մէկ ամբողջութեան երկու մասն են եւ միայն ուժերի համատեղմամբ կարելի է հասնել համահայկական նպատակների իրականացմանը, կարեւորեց, թէ միմեանց եւ ընդհանուր նպատակներին հաւատալով ընդունակ ենք իրականութեան վերածելու անգամ անհաւանական թւացող երազանքները:

Ծրագրի գեղարուեստական բաժնում ազգային-յեղափոխական երգերի կատարմամբ ներկաների մօտ մեծ ոգեւորութիւն առաջացրեց Հայաստանից հրաւիրուած երգիչ Ռուբէն Սասունցին:

Հ.Յ.Դ. 127-ամեակը տօնակատարութեամբ նշանաւորուեց նաեւ Ծահինշահրում, ուրբաթ՝ երեկոյեան, Ն. Ջ. Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան Ծահինշահրի մասնաճիւղի կենտրոնատեղիի սրահում:

Տօնակատարութիւնից առաջ, նոյն կենտրոնատեղիի երկրորդ յարկում, ազգային մարմինների ու միութիւնների ներկայացուցիչների ու գաղափարակից ընկերների ներկայութեամբ տեղի ունեցաւ շրջանի Հայ Դատի յանձնախմբի Ծահինշահրի գրասենեակի պաշտօնական բացումը: Մուտքի ժապաւէնը հատեցին Ծահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանը, շրջանի Հայ Դատի յանձնախմբի ներկայացուցիչ Վահէ Թորոսեանը եւ նոյն յանձնախմբի Ծահինշահրի գրասենեակի անդամ Վարդան Փանոսեանը: Այնուհետեւ Հայր Սուրբն այս առիթով փոխանցեց իր հայրական օրհնանքը, ուր գնահատելով Հայ Դատի գրասենեակների իրականացրած ծաւալուն աշխատանքները եւ շնորհաւորելով նոր գրասենեակի բացման կապակցութեամբ, յոյս յայտնեց, որ այն ոչ միայն ծառայելու է իր գլխաւոր առաքելութեանը՝ Հայ Դատի պաշտպանման գործին, այլեւ իր աշխատանքով համայնքի ժողովրդի, ի մասնաւորի երիտասարդութեան մէջ, առաւել զարգացնելու է ազգային եւ գաղափարական ոգին:



Տօնակատարութեան ծրագրում «Մշակ բանւոր»-ի յոտնկայս ունկնդրութեանը յաջորդեց Հայ Դատի յանձնախմբի Ծահինշահրի գրասենեակի խօսքը, որն արտայայտեց Այիդա Մուրադեանը: Ահա մի հատուածի մէջբերում սոյն խօսքից. «127 տարի է անցել այն կուսակցութեան ծնունդից, ով լինելով հայ ժողովրդի ամուր բազուկը, իսկ ծանր եւ դժւար պայմաններում դառնալով նրա թիկունքը, ապրել ու գոյատեւել է ազգի համար եւ եղել է ոգի ու եռանդ ներշնչողը յուսալքուած հայի: Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնն իր էութեամբ եւ աշխարհայեացքով ազգային, ընկերվարական, ժողովրդավարական եւ յեղափոխական կուսակցութիւն է. այն իր բոլոր ուժերով պայքարում է հայ ժողովրդի շահերի պաշտպանութեան համար եւ ազգային-ազատագրական պայքարը հիմնաւորում է իր գաղափարախօսութեամբ»:



Այնուհետեւ ինչպէս նախորդ օրը, այս ծրագրին նոյնպէս Սուրէն Պարսեանը ծաւալեց իր բանախօսական ելոյթը, իսկ ազգային-յեղափոխական երգերի կատարմամբ ներկաներին ոգեշնչեց Ռուբէն Սասունցին:

Երեկոն հանդիսավարեց Մարիա Խուդավերդեանը:

Զոյգ տօնակատարութիւններին ներկայ էին՝ Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանը, Հայ Դատի յանձնախմբի անդամները, քահանայից դասի, ազգային մարմինների եւ միութիւնների ներկայացուցիչներ, գաղափարակից ընկերներ ու հոծ թւով ժողովուրդ:

## Ս. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔԻ 18-ԱՄԵԱՅ «ՏԱԹԵՒ» ԵՐԳՉԱԽՄԲԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՄԵՐԳԸ՝ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ

Տարիներ շարունակ բազմաթիւ բեմերից աշխոյժ ելոյթ ծաւալած Ս. Ամենափրկիչ վանքի «Տաթեւ» երգչախումբը բոլորեց իր 18-ամեակը:

Սպահանի հայոց թեմի Կրօնական խորհրդի նախաձեռնութեամբ հիմնադրուած եւ մինչեւ այսօր նոյն խորհրդի հովանաւորութիւնը վայելած այս երգչախումբն անցնող 18 տարիների ընթացքում իր գործունէութեամբ արժանացել է արւեստասէր հանդիսատեսի գովեստին ու համակրանքին՝ ոչ միայն իր երիտասարդ անդամ-ուհիների գերազանց կատարումների, այլեւ նոյնպէս երիտասարդ ղեկավար մայեստրօ Համիկ Ալեքսանդրեանի անվերապահ ջանքերի շնորհիւ:

«Տաթեւ» երգչախմբի հերթական տարեկան համերգը կայացաւ չորեքշաբթի՝ 2017 թւականի դեկտեմբերի 6-ի երեկոյեան, Նոր Ջուղայի Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան սրահում՝ Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանի, ազգային մարմինների, շրջանի Հայ Դատի յանձնախմբի, միութիւնների ու հայոց ազգ. դպրոցների ներկայացուցիչների եւ ժողովրդի ներկայութեամբ:



Համերգն սկիզբ առաւ երգչախմբի վարչութեան խօսքով, որն ընթերցեց Ասպետ Մարգարեանը, ուր հիմնականում արտացոլուած էր խմբի գործունէութիւնը՝ սկսած եկեղեցիներում շարականների ու հոգեւոր երգերի կատարումից մինչեւ երկրի եւ արտերկրի զանազան բեմերից հնչեցրած համերգները:



Երեկոն ողողուած էր հին հոգեւոր, ինչու չէ նաեւ ժողովրդական ու մերօրեայ երգերի խմբական ու անհատական ելոյթներով: Այս շրջագծում հնչեցին հայ երգի մեծանուն վարպետներ՝ Ս. Ներսէս Շնորհալիի, Յակոբ Կլայեցի, Կոմիտասի, Բարսեղ Կանաչեանի, Նիկոլ Գալանդէրեանի, Ռոբերտ Պետրոսեանի, Գուսան Շահէնի եւ Ալեքսանդր Աճեմեանի ստեղծագործութիւններից:



Խումբը հանդէս եկաւ «Նոր Ծաղիկ» (տաղ յարութեան), «Այսօր ցնծան», «Առաւօտ լուսաբեր», «Ել, ել» (սայլի երգ), «Հայրենի կարօտ», «Լուսնակն անուշ», «Ծովափին», «Ֆանտազիա» (Սայեաթ Նովայի երգերի հիման վրայ), «Երանի թէ» եւ «Խռոված էր» երգերով: Ընթացքում հնչեցին նաեւ մենակատարումներ երգչախմբի մեներգիչների միջոցով: Արմէն Թահմազեանը կատարեց «Կանչէ կռունկ»-ը, Արսինէ Մարգարեանը՝ «Ծիծեռնակ»-ը, Ասպետ Մարգարեանը՝ «Եկուր աղջիկ»-ը, իսկ Անասիկ Յովսէփեանը մեներգեց «Նայիրեան դալար բարդի» երգը:

Մի շարք կատարումներին դաշնամուրի կենդանի նւագակցութեամբ ընկերակցեց մայեստրօ Համիկ Ալեքսանդրեանը, ով իրականացրել էր նաեւ միւս երգերի գործիքաւորման աշխատանքը:



Երեկոյի եզրափակիչ խօսքն արտասանեց գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանը, որը համերգը գեղեցիկ պատարագ համարելով ասաց, թէ երեկոյի ելոյթների շնորհիւ այս սրահը մշակութային կենտրոնից վերածւեց մշակութային հոգեւոր կենտրոնի եւ եկեղեցու, որի խորանը կազմեց «Տաթեւ» երգչախումբը: Այնուհետեւ Հայր Սուրբը դրւատելով երգչախմբի անդամների ինչու չէ նաեւ ղեկավարի կատարած ջանադիր աշխատանքը, աւելացրեց, որ խումբն իր գոյութեան 18 տարիներին մշակութային կեանքի հայ հոգու անդաստանի մէջ սնունդ է տւել մեր զաւակներին: Նա յիշելով նաեւ անցնող օրերի ընթացքում Նոր Ջուղայում իրականացւած մշակութային ձեռնարկները, ընդգծեց, որ նման ծրագրերի շնորհիւ ոչ միայն արժեւորւում է թեմը, այլեւ գոյատեւում են հայ ազգն ու մշակոյթը:

## «ԳԻՏՈՒՆԻԿԻ ՏՆԱԿ» ԱՄԱՌԱՅԻՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆ ԻՐ ԱՇԽԱՏԱՆՔՆ ԱՄՓՈՓԵՑ ՄԱՆԿԱԿԱՆ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍՈՎ

Նոր Ջուղայում «Գիտունիկի տնակ» անւանակոչւած ամառային մանկական ծրագիրը՝ այս տարի եւս ամառային արձակուրդների ընթացքում իր շուրջը համախմբեց համայնքի մանուկներին՝ նրանց մատուցելով բազմաբնոյթ եւ հետաքրքիր ձեռնարկներ:



Ծրագիրը, որի նախաձեռնողը Նոր Ջուղայի Հայ Մարզա-Մշակութային «Արարատ» միութեան Մշակութային միաւորի վարչութիւնն էր, իրականացւեց շաբաթական հանդիպումներով, թւականիս յուլիսի 18-ից սեպտեմբերի 8-ը՝ միութեան կենտրոնատեղիում:

Ծրագրի ընթացքում մանուկները ունկնդրեցին հեքիաթ, որը զուգորդւած էր տիկնիկային խաղով, դիտեցին անպարարութիւն, ստեղծագործեցին նկարչութիւններ, խաղացին բազմատեսակ խաղեր եւ այսպէս մանուկները խանդավառ մթնոլորտում հետաքրքիր ժամանակ անցկացնելուց բացի՝ ունեցան ամառային քաղցր յիշողութիւններ:



«Գիտունիկի տնակ»-ը իր աշխատանքն աւարտեց մանկական դաշտահանդէսով: Ամառային այս գեղեցիկ եւ բոլորի կողմից սիրւած ծրագիրը իրականացաւ Մշակութային միաւորի մի շարք տաղանդաշատ անդամուհիների, անհատ մասնագէտների ու ծնողների անվերապահ համագործակցութեամբ:

## ՁԵՌԱԿԵՐՏ ԱՐՒԵՍՏԻ ԵՒ ԿԵՆԴԱՆԻ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ ՊԱՏՐՍԱՏՒԱԾ ԵԶԱԿԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ

Հովանաւորութեամբ Սպահանի հայոց թեմի առաջնորդ՝ գերպ. տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանի եւ կազմակերպութեամբ Նոր Ջուղայի Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան Մշակութային միաւորի վարչութեան, թւականիս հինգշաբթի եւ ուրբաթ՝ հոկտեմբերի 19-ին եւ 20-ին, նոյն միութեան հանդիսութիւնների դահլիճում տեղի ունեցաւ արւեստի զանազան ճիւղերի բացառիկ նմուշների ցուցահանդէս, ինչը զուգորդւած էր նոյն աշխատանքների պատրաստման կենդանի ցուցադրութեամբ՝ վարպետների միջոցով:



Ձեռնարկը նւիրւած էր Սրբոց Թարգմանչաց եւ Հայ մշակոյթի օրւան, որի բացումը կատարւեց թեմակալ առաջնորդի ձեռամբ: Ցուցահանդէսի բացման ծրագրին ներկայ էին Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ՝ գերպ. տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանը, քահանայից դասի, ազգային մարմինների ու Հայ Դատի յանձնախմբի ներկայացուցիչները, միութենականներ եւ մեծ թւով ժողովուրդ:



Ներկաներին ողջունեց հաղորդավարուհի Մեղրի Ղուկասեանը, ով հակիրճ բնութագրեց ազգերի ու ժողովուրդների մշակոյթի եւ քաղաքակրթութեան զարգացմանը նպաստող արւեստի անգնահատելի դերը, կենտրոնացաւ հայկական գաղթօջախներում, ի մասնաւորի Նոր Ջուղայում, հայ մշակոյթի եւ արւեստի պահպանման եւ զարգացման գործընթացին եւ բացատրեց ցուցահանդէսում ներկայացւած աւանդական ու նորաձեւ արւեստների մասին, որից յետոյ երիտասարդ-ուհիների միջոցով ներկայացւեց հին ու նորաձեւ աքսեսուարներ եւ հարսանեկան կանաչ-կարմիր:



Բեմային ծրագրի աւարտին, ներկաները շրջեցին ցուցահանդէսով եւ դիտեցին արուեստի գեղեցիկ նմուշներ եւ տուեալ ճիւղի վարպետներից ստացան տեղեկութիւններ՝ պատրաստման եղանակի եւ օգտագործուած նիւթերի մասին: Ցուցահանդէսն իր շքեղութեամբ եւ այն, որ արուեստի զանազան ճիւղերի վարպետներին համախմբել էր միութեան յարկի ներքոյ, ապացոյցն էր կատարուած կազմակերպչական եւ միասնական հսկայական ու դժուարին աշխատանքի, ինչը սփիւռքեան պայմաններում ամենայն վստահութեամբ պիտի որակել եզակի եւ բացառիկ նախաձեռնութիւն իր տեսակի մէջ:



Երկու օր տեւողութեամբ այս ցուցահանդէսը մեծ հետաքրքրութեամբ ընդունուեց ոչ միայն համայնքի անդամների, այլ նաեւ նախապէս համաձայնութեամբ եւ ցուցահանդէս այցելած եւրոպացի զբոսաշրջիկների կողմից, ինչը զարմանք եւ հիացմունք պատճառեց նրանց:



Նշելի է, որ ցուցահանդէսում ներկայացուած էր ուկերչութիւն, արծաթագործութիւն, հարսանեկան զարդանախշած շաքար, կանաչ-կարմիր (ինչը մինչ այսօր լաւապէս պահպանուել է իրանահայութեան մօտ), գորգագործութիւն, մքուքագործութիւն, կեռասեղագործութիւն, մարաշի ասեղնակար եւ ասեղնակար, փայտագործութիւն, գրքի կազմարարութիւն, ձեռքի տպագրութիւն (մետաղէ կաղապարներով), նկարչութիւն, քարագործութիւն, Ջուղայի ֆիլա, ջուղայեցիներին յատուկ Եուխա կոչուող թխուածք եւ ջուղայեցու հարսանիքների անբաժան քաղցրաւենիքներ՝ լովզը եւ թութը, որոնցով հիւրասիրուեցին այցելուները:



## ԱՇՆԱՆԱՅԻՆ ՏՕՆԱՎԱՃԱՌ՝ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ




Կազմակերպութեամբ Նոր Ջուղայի Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան Երէցների միաւորի, ուրբաթ՝ նոյեմբերի 10-ին, սկսեալ ժամը 11:00-ից, միութեան հանդիսութիւնների դահլիճում տեղի ունեցաւ Աշնանային վաճառք, որտեղ վաճառքի էր հանուել միաւորի անդամուհիների ձեռամբ՝ աշնանային մրգերից ու բանջարեղէններից պատրաստուած եւ գեղեցիկ փաթեթաւորած թխուածքեղէն, թթուեղէն, մրգանուշ, ճթնի եւ այլ պահածոներ: Վաճառքին մասնակցել էին նաեւ Նոր Ջուղայի Փերիոյ Կրթասիրաց եւ Հայ Ուսումնասիրաց Չհարմահալ միութիւնները, որոնք նոյնպէս վաճառքի էին հանել միութենականների միասնական աշխատանքի արդիւնքը:

Նշելի է, որ աշնանային գեղեցիկ յարդարանքով ստեղծուած աշխոյժ մթնոլորտը ընդունեց բազմահարիւր այցելուներ, որոնք վայելեցին նաեւ մատուցուած աւանդական ճաշեր ու այլ ուտեստներ եւ մասնակցեցին կազմակերպուած խաղերին:

## ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅ Մ. Մ. «ԱՐԱՐԱՏ» ՄԻՈՒԹԵԱՆ ՍԿԱՈՒՏՆԵՐԸ՝ ԿԱՐՄԻՐ ՄԱՀԻԿԻ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Ուրբաթ՝ թւականիս նոյեմբերի 17-ի առաւօտեան ժամը 9:00-ից, Ն. Ջ. Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան Սկաուտական միաւորի երէց փաղանգի եւ Արի-Արենուշ հատուածների անդամները ներկայանալով Սպահանի «Միր» պողոտայում գտնուող Կարմիր Մահիկի կենտրոնատեղի՝ օժանդակեցին երկրի արեւմտեան հատուածում

երկրաշարժի հետեւանքով տուժածների համար ժողովրդի միջոցով հաւաքուած ուտեստեղէնի, հիգենայի պարագաների եւ հագուստեղէնի փաթեթաւորմանը:










## ԱՍՄՈՒՆՔԻ ՄՐՑՈՅԹ-ՓԱՌԱՏՕՆ՝ ՆՈՒԻՐՈՒԱԾ «ԿՌՈՒՆԿ» ԱՍՄՈՒՆՔԻ ԽՄԲԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 25-ԱՄԵԱԿԻՆ

Հովանաւորութեամբ Սպահանի հայոց թեմի առաջնորդ՝ Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանի եւ նախաձեռնութեամբ Նոր Ջուղայի Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան Մշակութային միաւորի վարչութեան, թւականիս նոյեմբերի 23-ին եւ 24-ին, նոյն միութեան հանդիսութիւնների դահլիճում տեղի ունեցաւ ասմունքի մրցոյթ-փառատօն՝ նւիրուած միութեան Մշակութային միաւորի «Կռունկ» ասմունքի խմբի հիմնադրման եւ գործունէութեան 25-ամեակին:





Երեկոյի մեկնարկը հանդիսացաւ Հայաստանեան եւ իրանահայ անւանի բանաստեղծների ստեղծագործութիւնների, հայ երգի ու պարի մի անզուգական համադրութիւն՝ որը կատարեցին «Կռունկ» համոյթի աւագ անդամներ՝ Կարին Տէր-Մարտիրոսեանը, Լեռնիկ Ծատուրեանը, Մանիա Ղուկասեանը, Լալագէ Իսաղուլեանը, Ալինա Տէր-Սուքիազեանը, Թալին Մովսիսեանը եւ Կարէն Խանլարեանն ու Ս. Ամենափրկիչ վանքի «Կոմիտաս» երգչախմբի երիտասարդ մենակատարներ՝ Վանա Յիրաւնեանը եւ Թանիա Մինասեանը, ինչը սկսւեց «Կռունկ» երգով ու աւարտւեց «Ես իմ անուշ Հայաստանի» երգ ու ասմունքով:

Յաջորդ բաժնում, երեկոյի հաղորդավարուհի Կարին Տէր-Մարտիրոսեանը ողջունելով ներկաներին, գեղեցիկ ակնարկ կատարեց «Կռունկ» ասմունքի խմբի վերաբերեալ, այնուհետեւ ներկայացրեց մրցոյթը դատելու դժւարին պարտականութիւնը ստանձնած իրավարար կազմի անդամներ՝ Թեհրանից ժամանած ասմունքող՝ Արտոյտ Ջոհրաբեանին եւ ,Կռունկե ասմունքի խմբի աւագ անդամներ՝ Լեռնիկ Ծատուրեանին ու Արթին Մուրադեանին:



Մրցոյթին մասնակցութիւն էին բերել Անժել Մինասեանի ղեկավարութեամբ աշխատող՝ Թեհրանի Հայ Մշակութային «Սիփան» եւ Հայ Ուսումնասիրաց Չհարմահալ միութիւնների ասմունքի խմբերի եւ Ռիմա Սիմոնեանի գլխաւորութեամբ աշխատող՝ Նոր Ջուղայի Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան Մշակութային միաւորի «Կռունկ» ասմունքի խմբի ներկայացուցիչները, ովքեր հանդէս եկան հայ գրականութեան գոհարների յաջող կատարումներով:



Նոյմբերի 24-ին, երեկոյի բացումը կատարեց հաղորդավարուհի Մանիա Ղուկասեանը. անդրադառնալով «Կռունկ» ասմունքի խմբի յաջողութիւններով ու մեծ ձեռքբերումներով լի անցած ուղուն, բեմ հրաւիրեց Արտոյտ Ջոհրաբեանին, ով ներկաներին ողջունեց բանաստեղծական կտորի կատարումով, այնուհետեւ բեմը տրամադրուեց մրցոյթի մասնակիցներին:

Երկու երեկոների ընթացքում, մէկը միւսին յաջորդող ասմունքի յաջող ելոյթները ընդմիջեցին Մեղրի Ղուկասեանի ասմունքի կատարմամբ եւ պարախմբի «Յիշողութեան տաւյտաւնք», ,«Տանգօ» եւ «Մանրանկար» պարային համարներով՝ պարուսոյց Նունէ Մկրտչեանի ղեկավարութեամբ: Նշելի է, որ պարախումբը ներկայացնում էին Քրիստինէ Յակոբեանը, Ալինա Տէր-Սուքիասեանը, Արթուր Բաղրամեանը, Լեռնիկ Ղազարեանը, Վանէ Մինասեանը, Աւենիա Բաղրամեանը եւ Սիւնէ Ծահիջանեանը:



Մրցութային փուլի աւարտին Մշակութային միաւորի խօսքով հանդէս եկաւ միաւորի վարչութեան նախագահ՝ Քարմէն Ղեւեանը. Նա անդրադառնալով երկու օրերի ընթացքում իրականացւած հոյակապ ելոյթներին, անդրադարձաւ «Կռունկ» ասմունքի խմբի կազմաւորման նպատակներին, որն է՝ հայ մշակոյթի պահպանումն ու զարգացումը եւ լիարժէք կերպով ներկայացնելու գաղափարը: Ծարունակութեան մէջ նշեց. «Խումբն իր 25-ամեայ բեղուն գործունէութեան ընթացքում դաստիարակել է մի քանի սերունդներ, նրանց մէջ սերմանելով հայկական ինքնութիւնն ու դիմագիծը եւ նպաստել է հայ գրականութեան պահպանմանն ու տարածմանը»: Տկն. Ղեւեանը բարձր գնահատանքով խօսեց «Կռունկ» համոյթի յաջող եւ հանդիսատեսի բարձր գնահատանքին արժանացած համերգների մասին, որոնք իրականացւել են Նոր Ջուղայում, Իրանի հայահոծ քաղաքներում, Հայաստանում եւ սփիւռքի այլ համայնքներում: «Անշուշտ իւրաքանչիւր խմբի յաջողութեան գրաւականը իր ղեկավարն է, որն իր գործունէութեամբ ի զօրու է բարձրացնել խմբի որակն եւ այն առաջնորդել դէպի լաւագոյնը: Ամբողջ 25-տարիների ընթացքում խումբն ամենայն սիրով ու նւիրւածութեամբ ղեկավարել եւ սերունդներ է դաստիրակել խմբի գեղարւեստական ղեկավար եւ պատասխանատու՝ Ռիմա Սիմոնեանը»,- ընդգծեց նա եւ իր խօսքն աւարտեց շնորհաւորանքի եւ բարեմաղթանքների արտայայտութիւններով:

Մինչ իրաւարար կազմի նշանակած գնահատականների ամփոփումը, ներկաները վայելեցին երգչուհիներ՝ Վանա Ծիրանեանի եւ Թանիա Մինասեանի կատարումները՝ խմբավար-երաժիշտ Արմէն Ամիրխանեանի ղեկավարութեամբ:

Այնուհետեւ հայ մշակոյթի պահպանման եւ զարգացման նշանակալի աւանդի համար պարգեւատրուեց խմբի ղեկավար՝ Ռիմա Սիմոնեանը, ով խօսք առնելով, իր հպարտութիւնը յայտնեց առ այն որ ծառայում է հայ լեզւին ու գրականութեանը եւ նշեց, որ ներկայի դժւարին պայմաններում պոէզիայի շուրջ համախմբւելու եւ աշխատելու դժւարութիւնները կը հասկանան այն խմբերը եւ միութիւնները, որոնք աշխատում են այդ բնագաւառներում եւ խումբը պահպանելու խնդիրների առջեւ են կանգնած: Տկն. Սիմոնեանը իր խօսքի շարունակութեան մէջ շնորհակալական խօսք ուղղեց խմբի անդամ-ուհիներին, միութեան Կենտրոնական եւ Մշակութային միաւորի վարչութիւներին, նաեւ ազգային իշխանութեանը՝ խմբին միշտ սատար հանդիսանալու եւ համայնքային կեանքը կանգուն պահելու համար: Առանձնապէս շնորհակալական խօսք ասաց մասնակից միութիւններին եւ իրաւարար կազմի անդամ՝ Արտոյտ Ջոհրաբեանին, որոնք ընդառաջելով հրաւէրին մասնակից դարձան յոբելենական ձեռնարկին: Նա երախտանքի խօսք ուղղեց նաեւ հանդիսատեսին, որ միշտ իր խրախուսիչ ներկայութեամբ պատճառ է հանդիսացել քայլել անւարան:





Գնահատագրերով պարգեւատրուեցին նաեւ «Կռունկ» ասմունքի խմբի աւագ անդամ-ուհիներ՝ Կարին Տէր-Մարտիրոսեանը, ով վերջին տարիներում խմբի գեղարուեստական ղեկավարութեան մաս է կազմում, Արթին Մուրադեանը, Լեռնիկ Ծատուրեանը, Գայիանէ Եղիազարեանը, Թալին Մովսիսեանը, Մանիա Ղուկասեանը, Ալինա Տէր-Սուքիասեանը, Լալագէ Իսաղուլեանը, Կարէն Խանլարեանը, Մեղրի Ղուկասեանը եւ Ալինա Ալեքսանդրեանը, մրցութեանը մասնակից Թեհրանի միութիւնները եւ Արտոյտ Զոհրաբեանը, ով որպէս իրաւարար կազմի անդամ հրաւիրուեց նաեւ մրցութեան արդիւնքները ներկայացնելու համար: Պրն. Զոհրապեանը Մշակութային միաւորին յանձնեց նոր հրատարակուած գրականութիւն, որից յետոյ ըստ արտայայտիչ ելոյթի եւ բեմային կեցուածքի, լաւ, շատ լաւ եւ գերազանց կարգի գնահատագրեր յանձնուեց ասմունքողներին: Գնահատագրերը յանձնեցին՝ Թեմակալ առաջնորդ Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը, թեմի Պատգ. ժողովի ատենապետ եւ միութեան արտօնատէր՝ Թաթուլ Օհանեանը, Թեմական խորհրդի ատենապետ՝ Վարուժ Մինասեանը եւ Միութեանս Կենտրոնական վարչութեան նախագահ՝ Մասիս Մինասեանը:

Որպէս փառատօնի փակում խօսքը տուեց թեմակալ առաջնորդ Հայր Սուրբին, ով բարձր գնահատելով իրականացուած մրցոյթ-փառատօնը, ասաց. ««Կռունկ»-ը իրականում աւելի լայն սիրտ ունի, քան իր համատարած թեւերը, երբ ճախրում եւ վերելք է գործում. մենք տեսանք, որ խտրութիւն չկայ «Կռունկ»-ի մօտ. նա ընդունել է, ոչ միայն իր հարազատ զաւակներին, այլ նաեւ որդեգրել է իրանահայութեան ասմունքող զաւակներին: «Կռունկ»-ի թափահարումը նրա պարախումբն է, իսկ նրա կանչը ասմունքի խումբը»: Հայր Սուրբն իր խօսքն աւարտեց շնորհաւորանքի, շնորհակալութեան եւ գնահատանքի խօսքերով, ուղղուած փառատօնի իրականացմանը աջակցող բոլոր մասնակիցներին:

Ստորեւ ներկայացնում ենք «Կռունկ» ասմունքի 25-ամեակին նուիրուած ասմունքի մրցոյթ-փառատօնի արդիւնքները՝

Գերազանց ելոյթ ունեցան՝ Վանէ Մակարեանը, Նազէ Ասատրեանը, Ծաղիկ Մատթէոսեանը, Վանանդ Իսաղուլեանը, Մինելի Մանուկեանը, Թանիա Մինասեանը, Նարէ Վարդանեանը եւ Արփա Մարգարեանը:

Շատ լաւ անւանակարգին արժանացան՝ Փունիկ Քեշիշեանը, Անի Ղազարեանը, Ալինա Ալեքսանդրեանը, Վանէ Յարութիւնեանը, Լիլիթ Գէորգեանն ու Նարէ Ղազարեանը:

Լաւ գնահատագրերին արժանացան՝ Վանէ Տէր-Ղազարեանը, Ռոդա Բաբախանեանը եւ Էմին Մարտիրոսեանը:

«Հանդիսատեսի համակրանք» մրցանակին արժանացան Նազէ Ասատրեանը եւ Վանանդ Իսաղուլեանը:



## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ՝ ԱՐՑԱԽԻՆ ՈՒ ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹԵԱՆԸ ԶՕՐԱԿՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ



Նոր Ջուղայի Հայ Կանանց Գթութեան եւ Հայ Մ. Մ. «Արարատ» միութիւնների համատեղ նախաձեռնութեամբ, հինգշաբթի՝ 2017 թւականի հոկտեմբերի 5-ի երեկոյեան, «Արարատ» միութեան շրջափակում տեղի ունեցաւ բարեգործական դաշտահանդէս, որի ամբողջ հասոյթը յատկացւելու է Արցախին եւ արցախահայութեանը զօրակցելու աշխատանքներին:



Երեկոյի ընթացքում հայկական շուրջպար իրականացւեց «Արարատ» միութեան Մշակութային միաւորի

«Կռունկ» համոյթի երիտասարդական պարախմբի կատարմամբ ու պարուսոյց Նունէ Մկրտչեանի ղեկավարութեամբ, իսկ Կանանց Գթութեան միութեան անդամուհի Գայիանէ Եղիազարեանի միջոցով բովանդակալից տեղեկութիւններ ընթերցւեցին Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան տեսարժան վայրերի եւ արցախահայութեանը բնորոշ աւանդոյթների մասին:




Խանդավառ մթնոլորտն ապահովելու համար նախատեսւել էին նաեւ` վիճակախաղ, ուրախ երաժշտութիւն, մանկական ձեռարւեստի կրպակ, ուր փոքրիկները ստեղծագործեցին գեղեցիկ ձեռքի աշխատանքներ, ճոխ բուֆէ` անուշաբոյր ուտելիքներով եւ բազմաթիւ այլ խաղեր` մանուկների, պատանիների ու մեծահասակների համար:



Ծրագրի ընթացքում Արցախին զօրակցելու նպատակով նւիրատւութիւններ կատարեցին թեմի ազգային մարմինների, միութիւնների եւ անհատ բարերարների կողմից:

## ԱՐՑԱԽՈՒՄ ԱՐՏԱԴՐՒԱԾ ՄԹԵՐՔԻ ԵՒ ՍԵՂԱՆԻ ԾԱԾԿՈՑՆԵՐԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՎԱՃԱՌՔ` ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ԳԹՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԵԱՄԲ

Նոր Ջուղայի Հայ Կանանց Գթութեան միութեան վարչութիւնը Արցախին զօրակցելու նպատակով կազմակերպւող իր աշխատանքների ծիրում, իրականացրեց Արցախում արտադրւած մթերքի եւ սեղանի ծածկոցների ցուցահանդէս-բարեգործական վաճառք, ուրբաթ` 2017 թւականի հոկտեմբերի 20-ին, Նոր Ջուղայի հայոց ազգ. ծերանոցի յետնաբակում: Վերջին երկու տարիների ընթացքում սա 4-րդ անգամն է, ինչ Կանանց Գթութեան միութիւնը կազմակերպում է Արցախից բերւած մթերքի վաճառքը:



Այս շրջագծում վաճառքի էին դրւել մեղրի, մրգանուշի, չրեղէնի եւ այլ ուտելիքների լայն տեսականի, իսկ առանձին կրպակում` սեղանի ծածկոցներ: Ընթացքում աշխատեց նաեւ բիւֆէ:



Կազմակերպիչներին քաջալերելու նպատակով, կէսօրին, հայոց ազգ. ծերանոց այցելեց Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը, ով ողջունելով հայրենանպաստ աշխատանքների կազմակերպումը, ուժ ու կորով մաղթեց Կանանց Գթութեան միութեան անդամուհիներին: Վաճառքը մեծ ընդառաջում գտաւ հայ եւ պարսիկ հայրենակիցների կողմից: Ամբողջ հասոյթը յատկացւելու է Արցախին զօրակցելու ծրագրերին:

## ՍԲ. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔԻ ՏՕՆԻ ԱՌԹԻՒ` ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԵԱՑ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՅՑԸ ՀԱՅՈՑ ԱԶԳ. ԾԵՐԱՆՈՑ

Ձեւաւորւած գովելի աւանդութեան համաձայն, տարիներ է ինչ Նոր Ջուղայի Հայոց Առաքելական Եկեղեցեաց վարչութիւնը, Ս. Ամենափրկիչ վանքի տօնի առթիւ, տօնին յաջորդող օրը, այցելութիւն է տալիս Նոր Ջուղայի հայոց ազգային ծերանոց, այնտեղ բնակւող տարեց բնակիչներին տեսակցելու եւ ջերմ մթնոլորտի ներքոյ նրանց հետ հաճելի պահեր անցկացնելու նպատակով:



Այս տարի սոյն այցը տեղի ունեցաւ երեքշաբթի՝ 2017 թուականի հոկտեմբերի 24-ի երեկոյեան: Եկեղեցեաց վարչութեան պատուիրակութեանը գլխաւորում էր Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանը:

Հիւրերին ծերանոցի ջերմ յարկի տակ դիմաւորեցին սոյն կենտրոնը կառավարող Նոր Ջուղայի Հայ Կանանց Գթութեան միութեան վարչութեան անդամուհիները, ծերանոցի տարեց բնակիչներն ու աշխատակազմը: Միջոցառմանը ներկայ էր նաեւ Հայաստանից ժամանած ազգային-ժողովրդական երգերի կատարող Անդրանիկ Մանուկեանը (Անդրանիկ սարկաւագ), ով երեկոն առաւել ջերմացրեց իր գեղեցիկ կատարումներով:



Խանդավառ մթնոլորտ առաջացրած այս այցելութեան առթիւ՝ հիւրերին ողջոյնի եւ շնորհակալանքի խօսք ուղղեց Կանանց Գթութեան միութեան վարչութեան նախագահուհի Արմինէ Սիմոնեանը, իսկ գերպ. Հայր Սուրբը դրւատելով միութեան գործունէութիւնը՝ ի մասնաւորի տարեցների այս հանգստի վայրը լաւագոյնս կառավարելու ուղղութեամբ եւ գնահատելով երգիչ Անդրանիկ Մանուկեանի գեղեցիկ քայլը իր անզուգական ելոյթով տարեցներին անմոռանալի պահեր պարգեւելու համար, քաջառողջութիւն մաղթեց ծերանոցի բնակիչներին եւ ցանկացաւ, որ երջանկութեան ժպիտը ընդմիշտ շողայ նրանց դէմքին:

Ծրարգի հիւրասիրութեան բաժինը կազմակերպել էր Եկեղեցեաց վարչութեան միջոցով:

## ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ԳԹՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆԸ՝ ՔԵՐՄԱՆՇԱՀԻ ԱՂԷՏԱԼԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՏՈՒԺԱԾՆԵՐԻՆ



Իրանի Քերմանշահ նահանգում տեղի ունեցած աղէտալի երկրաշարժի տուժածներին մարդասիրական օգնութիւն ցուցաբերելու նպատակով, չորեքշաբթի՝ 2017 թուականի նոյեմբերի 15-ին, Նոր Ջուղայի Հայ Կանանց Գթութեան միութեան կենտրոնատեղիում, նոյն միութեան վարչութեան նախաձեռնութեամբ եւ անդամուհիների միջոցով, փաթեթաւորուեցին մթերքից ու մի շարք անհրաժեշտ իրերից կազմուած կապոցներ՝ 50 ընտանիքների համար նախատեսուած: Սոյն փաթեթները աղէտի գօտի տեղափոխուեցին Սպահանի «Բարեկեցութիւն» կազմակերպութեան միջոցով:

Կապոցները պարունակում են՝ հիգիենայի պարագաներ, վերմակներ, բրդեայ գործուածքներ եւ մթերքի տեսականի:

## ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՄԲ ՆՇԵՑ ԻՐ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 125-ԱՄԵԱԿԸ

Շաբաթ՝ 2017 թուականի հոկտեմբերի 28-ի երեկոյեան, Նոր Ջուղայի Հայուհեաց Բարեգործական ընկերութիւնն իր հիմնադրման 125-ամեակի առթիւ հանդիսաւոր տօնական երեկոյ կազմակերպեց, Ն. Ջ. Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան դահլիճում:

Երեկոյթին ներկայ էին՝ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը, Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանը, քահանայից դասը, ազգային մարմինների, շրջանի Հայ Դատի յանձնախմբի, միութիւնների ու հայոց ազգ. դպրոցների ներկայացուցիչները, ընկերութեան անդամուհիները եւ մի շարք այլ հրաւիրեալներ:

Միջոցառումը բացուած յայտարարուեց ընկերութեան «Փարոս» ասմունքի խմբի անդամուհիներ՝ Վանա Ջոհրաբեանի եւ Վանէ Շահնազարեանի գեղեցիկ ասմունքով, որից յետոյ ներկաներին ջերմօրէն ողջունեցին ծրագրի հանդիսավարներ՝ Վեհանուշ Խուդաբախշեանն ու Մարտունի խաչիկեանը:



Ապա հրաւիրուեց գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը՝ ընթերցելու Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետի օրհնութեան գիրը՝ յոբելեանի կապակցութեամբ, ուր ասւած էր. «Այս առիթով Մեր գնահատանքը կը յայտնենք 125-ամեայ Հայուհեաց Բարեգործական ընկերութեան ճամբով ցարդ գործած եւ այժմ գործող վարչութիւններուն, որոնք ընկերութեան ջահը պահեցին անմար՝ զայն փոխանցելով սերնդէ սերունդ: Մենք վստահ ենք, որ 125-ամեակի նշումը նոր մղում պիտի տայ ձեզի՝ նոր ծրագրեր մշակելու եւ նոր աշխատանքներ ձեռնարկելու, նւիրեալ ծառայութեան ճամբով, նոր յոբելեաններ նւաճելու վճռակամութեամբ»:



Երեկոյի շարունակութեան մէջ բանախօսութեամբ ելոյթ ունեցաւ Վրէժ Շիրւանեանը: Նա իր խօսքում ընդգծելով, թէ հայ ժողովրդի պատմութեան էջերը թերթելիս, մեզ համար ակնյայտ է դառնում այն իրողութիւնը, որ ազգային կազմակերպութիւններն ու խմբակցութիւնները կազմւել են ոչ թէ պատահականութեամբ, այլ ժամանակի հրամայականից եւ մեր ժողովրդի առարկայական պայմաններից ելնելով, կարեւորեց յատկապէս այն փաստը, որ Սփիւռքում ազգային կազմակերպութիւնները հանդիսանում են որպէս առանցքային նշանակութիւն ունեցող կենտրոններ:

Ապա բանախօսն անդրադառնալով նաեւ ընկերութեան հիմնադրման նպատակներին ու որդեգրած ուղուն՝ ակնարկ ունեցաւ 125 տարիների ընթացքում կատարած կարեւորագոյն աշխատանքներին:

Ահա մի հատւածի մէջբերում բանախօսի զրոյցից.

«Նոր Ջուղայի Հայուհեաց Բարեգործական ընկերութիւնը հիմնադրւել է Նոր Ջուղայի ուսուցիչ՝ Յովսէփ Բարսեղեանի ջանքերով: Պրն. Բարսեղեանը ձմռան մի ցուրտ օր տեսնելով չքաւոր աշակերտուհիների թշւառ դրութիւնը որոշում է մի միութիւն ստեղծել՝ չքաւորներին օգտակար հանդիսանալու համար: Այդպիսով հաւաքում է Ս. Կատարինեան օրիորդաց դպրոցի բարձր դասարանի աշակերտներին եւ հրաւիրում նրանց հիմնել միութիւն, որի միջոցներով հնարաւոր կը լինի օգնել նոյն դպրոցի չքաւոր երեխաներին, նրանց դպրոցական պիտոյքներ եւ զգեստներ մատակարարելով»:



Ընթացքում իր հայրական օրհնանքը փոխանցեց թեմի առաջնորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը, ով շնորհաւորելով պանծալի ամեակի կապակցութեամբ եւ շնորհակալութիւն յայտնելով ձեռնարկի կազմակերպիչներին ու դերակատարներին, դրւատեց միութեան գործունէութիւնը եւ հիմնադրման նպատակը: Թեմակալ առաջնորդն իր խօսքում հետաքրքիր ու հպարտառիթ անւանեց յատկապէս այն փաստը, որ Բարեգործական ընկերութեան վերանձն գաղափարներով օժտւած հիմնադիրի կողքին, բարեսիրական ծրագրերի իրագործման համար աշխատել են մատղաշ սերնդի պարզ ներկայացուցիչները՝ աշակերտները:



Յանուն Սպահանի հայոց թեմի ազգային մարմինների շնորհաւորանքի խօսք ուղղեց թեմի Պատգամաւորական ժողովի ատենապետ Թաթուլ Օհանեանը: Նա գնահատելով ընկերութեան ծաւալած գործունէութիւնը, իր մանկութեան յուշերից հետաքրքիր դրւագներ պատմեց՝ յոբելեարի աշխատանքների հետ կապւած:

Յատկանշական է, որ հանդիսավարների միջոցով ծրագրի ընթացքում ընթերցւեցին այս առիթով ստացւած ուղերձները: Ընկերութիւնն ուղերձներ էր ստացել՝ Թեհրանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու խորհրդից, Հայ Ուս. «Չհարմահալ» միութեան Կենտրոնական եւ Նոր Ջուղայի մասնաճիւղի վարչութիւններից, Փերիոյ Կրթ. միութեան Կենտրոնական վարչութիւնից, Ն. Ջ. Հայ Կանանց Գթութեան միութեան վարչութիւնից, Ն. Ջ. հայոց ազգ. «Արմէն» երկսեռ տարրական կրթահամալիրի տեսչութեան, ուսուցչական կազմի, ծնողական խորհրդի եւ աշակերտութեան կողմից, «Շուշանիկ» հնգեւոր երգչախմբից, մի շարք անհատներից ու արտերկրում բնակութիւն հաստատած իր անդամուհիներից:

Միջոցառման ընթացքում իրականացւեց նաեւ գեղարւեստական յայտագրով ծրագիր, ուր ժողովրդական եւ հայրենասիրական երգերի գեղեցիկ կատարմամբ, ծրագրին առաւել խանդավառ եւ հայաշունչ մթնոլորտ հաղորդեց Հայաստանից ժամանած ժողովրդական երգիչ Նարեկ Պօղոսեանը, իսկ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գունճանեանի ղեկավարութեամբ ասմունքեցին ընկերութեան «Փարոս» ասմունքի խմբի անդամուհիներ Մեղրի Կարապետեանն ու Նարեգա Սիմոնեանը:

50-ամեայ վաստակի համար՝ յոբելեար վարչութեան կողմից պարգեւատրւեց վաստակաշատ անդամուհի Ժենետ Դաւթեանը՝ իր յուշանւէրը ստանալով թեմակալ առաջնորդի եւ Բարեգործական ընկերութեան վարչութեան նախագահ Սանդրա Խուդաբախշեանի ձեռամբ, որից յետոյ Հայր Սուրբի, տկն. Խուդաբախշեանի ու մի շարք վաստակաւոր անդամուհիների միջոցով հատւեց յոբելեանական կարկանդակը:

Երեկոն շարունակւեց ուրախ մթնոլորտում եւ հիւրասիրութեամբ:

Հարկ է նշել, որ այս առիթով կից սրահում, կազմակերպուել էր ցուցահանդէս, ուր ցուցադրուել էին ընկերութեան բազմամեայ գործունէութիւնից լուսանկարներ եւ արհեստանոցներից հին իրեր:


















## ՀԱՅ ՈՒՍ. «ՉՀԱՐՄԱՀԱԼ» ՄԻՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՄՍԱՆԱՃԻՒՂԻ «ՄԵՂԵԴԻ» ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԵՐԳՉԱԽՄԲԻ ՀԱՄԵՐԳԸ՝ ՆԻՒԻՐԻՒԱԾ ՆՈՅՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 87-ԱՄԵԱԿԻՆ

Հայ Ուս. «Չհարմահալ» միութեան Նոր Ջուղայի մասնաճիւղի «Մեղեդի» մանկապատանեկան երգչախմբի համերգն իրականացաւ հինգշաբթի՝ 2017 թուականի հոկտեմբերի 5-ի երեկոյեան, Նոր Ջուղայի հայոց ազգ. կրթահամալիրի «Ալենուշ Տէրեան» դահլիճում: Խանդավառ երեկոյին ներկայ էին՝ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէշէճեանը, Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գունճանեանը, ազգային

մարմինների, միութիւնների եւ հայոց ազգ. դպրոցների ներկայացուցիչներն ու ժողովուրդ:



Համերգը, որը նւիրւած էր միութեան հիմնադրման 87-ամեակին, իրականացւեց մայեստրօ Համիկ Ալեքսանդրեանի ղեկավարութեամբ ու երաժշտական գործիքաւորմամբ եւ երգուսոյց Արսինէ Ալեքսանդրեանի ու պարուսոյց Ալինէ Յարութիւնեանի ուսուցումների շնորհիւ:

Ծրագիրն սկիզբ առաւ Վեհանուշ Խուդաբախշեանի ողջոյնի խօսքով եւ 8-ամեայ երգչախմբի անցեալի մասին բացատրութիւններով: Միջոցառումն իրենց գեղեցիկ եւ քաղցր երկխօսութիւններով հանդիսավարեցին պատանիներ՝ Արփինէ Մովսիսեանն ու Արթուր Քամարզարեանը:

Երեկոյի ընթացքում հնչած խմբական երգերով հանդիսատեսին մանկական գեղեցիկ ու անկեղծ աշխարհից անմոռանալի պատկերներ նւիրեցին «Մեղեդի» երգչախմբի սաներ՝ Մարալ Մարկոսեանը, Լիլիթ Մարկոսեանը, Նազելի Փանոսեանը, Նելին Մարուքեանը, Սելինէ Օրդուբէգեանը, Ադելինա Յարութիւնեանը, Միշելիա Մարկոսեանը, Անի Մինասեանը, Սելին Մարուքեանը եւ Սիսիան Մարկոսեանը:

Խումբը կատարեց «Ժպիտ», «Անձրեւ եկաւ», «Իմ քաղաքը», «Գովք մայրիկներին», «Կաքաւի երգը», «Բարութեան ծառ», «Ջօն գրքի», «Ծիտիկի հարսանիքը»,



«Անուշ խաղող» եւ «Երկիր հարազատ» երգերը: Կատարումներին զուգահեռ սաները հանդէս եկան նաեւ պարային համահունչ շարժումներով:

«Ծիտիկի հարսանիքը» երգի ընթացքում բեմ ներկայացան փոքրիկ հարս եւ փեսայ, որոնց դերը մարմնաւորեցին Տաթեւիկ Ալեքսանդրեանն ու Մենուա Մարկոսեանը:



Աւարտին Հայ Ուս. «Զհարմահալ» միութեան Նոր Ջուղայի մասնաճիւղի վարչութեան անունից, ձեռամբ թեմակալ առաջնորդի եւ նոյն մասնաճիւղի վարչութեան նախագահ Վրթանէս Մկրտչեանի, գնահատագրեր շնորհւեցին՝ կատարողներին, հանդիսավարներին եւ ղեկավար անձնակազմին:

Եզրափակիչ խօսքը հանդիսացաւ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանի հայրական օրհնանքը: Առաջնորդ Հայր Սուրբը շնորհաւորանքի խօսք ուղղելով միութեան հիմնադրման 87-ամեակի առթիւ եւ գնահատելով իրականացւած համերգը՝ անդրադարձ ունեցաւ հնչած երգերին՝ յատկապէս մատնանշելով հիասքանչ համերգի շնորհիւ հանդիսատեսի ներաշխարհից արտացոլւած ու դէմքին երեւան եկած գեղեցիկ ժպիտները: Հայր Սուրբը յոյս յայտնեց, որ այս ձեռնարկը լինելու է մշակոյթի ամսւայ՝ հոկտեմբերի, գարնանային առաջին ծաղիկը:

## ՓԵՐԻՈՅ ԿՐԹ. ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵՆՏ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԵԱՄԲ՝ ԵՐԿՕՐԵԱՅ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ՓԵՐԻՈՅ ԳԱՒԱՌԻ ՆԱԽԿԻՆ ԵՒ ՆԵՐԿԱՅ ՀԱՅԱԲՆԱԿ ԳԻՒՂԵՐ



Փերիոյ կրթ. միութեան Կենտր. վարչութեան գեղեցիկ մտայղացմամբ՝ նոյն միութեան հիմնադրման 90-ամեակի շեմին, ծրագրւել են մի շարք ուխտագնացութիւններ դէպի Փերիոյ գաւառի նախկին եւ ներկայ հայաբնակ գիւղեր ու գիւղական համայնքներ՝ հայկական գերեզմանոցներում հանգիստ առած իրենց նախնիների շիրիմներին հոգեհանգստեան կարգ կատարելու եւ գիւղերին ու պատկան աւանդոյթներին առաւել ծանօթանալու նպատակով:

Այս ծիրում առաջին շրջագայութիւնը տեղի ունեցաւ 2017 թուականի նոյեմբերի 2-ին եւ 3-ին, մասնակցութեամբ Նոր Ջուղայից եւ Շահինշահրից ուխտաւորների: Սոյն միջոցառումը նուիրուած էր Հայ մշակոյթի տօնին:

Փերիոյ Կրթ. միութեան Կենտ. վարչութեան եւ նոյն միութեան Շահինշահրի մասնաճիւղի վարչութեան ներկայացուցիչներիուղեկցութեամբ, ուխտաւորները հինգշաբթի՝ նոյեմբերի 2-ի առաւօտեան ժամը 6-ին, ճանապարհուեցին դէպի Փերիոյ գաւառ, ուր հանգրուանեցին Բոլորան գիւղի Ս. Ղուկաս եկեղեցու շրջափակի կացարաններում: Նրանք առաջին օրուայ ընթացքում այցելեցին Մեւրստան, Աղագոլ, Խոջիղալա, Հազարջրիբ եւ Փուննտան գիւղեր, իսկ յաջորդ օրը՝ Ազնաւուլ, Հադան եւ Բոլորան: Ծրագրի համաձայն իւրաքանչիւր գիւղի հայկական գերեզմանատանը կատարւեց հոգեհանգստեան պաշտօն՝ ձեռամբ արժ. Տ. Խաչատուր քհնյ. Զարգարեանի, ներկաները խունկ ծխեցին իրենց նախնիների յիշատակին եւ հաւաքական աղօթք բարձրացրին առ Աստուած, իսկ գիւղի մասին հնչեցին բացատրութիւններ: Առաջին օրուայ այցելութիւնների աւարտին կեցութեան վայրում կազմակերպիչների կողմից ծրագրուել էր խրախճանք, ուր բոլորը հիւրասիրուեցին եւ խանդավառ ու մտերմիկ մթնոլորտի ներքոյ՝ երեկոն անցկացրին հայկական երգերով ու պարերով:

Ուխտագնացութիւնն իր աւարտին հասաւ ուրբաթ՝ նոյեմբերի 3-ի կէսօրից յետոյ եւ մասնակիցները վերադարձան՝ իրենց յուշերում յաւերժացնելով արարողութիւնների խորհրդաւոր պահերը, լաւ ուղեկիցների հետ անցկացրած օրերի բերկրանքը եւ ի մասնաւորի հիասքանչ բնութեան գրկում վայելած ժամանակը:

Յատկանշական է, որ այս ծիրում երկրորդ ուխտագնացութիւնը տեղի կունենայ յառաջիկայ օրերին՝ ծրագրում ունենալով դէպի Վերին Խոյգան եւ շրջակայ գիւղեր այցելութիւնները:

## ԴՊՐՈՑԱԿԱՆ ՎԵՐԱՄՈՒՏԸ ՇԱՀԻՆՇԱՀՐԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

2017 թուականի սեպտեմբերի 23-ի՝ շաբաթ առաւօտեան ժամը 8:00-ին, Շահինշահրի հայոց ազգային «Սրբոց Վարդանանց» դպրոցի աշակերտութիւնը դիմաւորեց ուսումնական նոր տարեշրջանը՝ համայնքի Վարչութեան, դպրոցի անձնակազմի եւ ծնողների ներկայութեամբ:



Ամենասկզբում ողջոյնի խօսքով ելոյթ ունեցաւ դպրոցի նոր հանգստեան կոչւած տեսուչ պրն. Ղօջավանդը, ով շնորհակալութիւն յայտնելով դպրոցի անձնակազմին, ծնողներին եւ համայնքի Վարչութեանը՝ իրենց ցուցաբերած անվերապահ համագործակցութեան առթիւ, մաղթեց բոլորին բարի աշնանամուտ եւ ներկայացրեց դպրոցի նորանշանակ տեսուչ պրն. Ղաջարիին, ով եւս իր հերթին ողջունելով ներկաներին յոյս յայտնեց, որ ուսումնական նոր տարեշրջանի ընթացքում համագործակցաբար կիրագործեն նախատեսւած ուսումնադաստիարակչական ծրագրերը:

Նոյն օրը առաւօտեան ժամը 10:00-ին, դպրոցական վերամուտի առիթով Շահինշահրի հոգեւոր տեսուչ Տ. Անանիա ծ. վրդ. Գունճանեանը, Տ. Սահակ քհնյ. Մինասեանը, Սպահանի հայոց թեմի Թեմական, Կրօնական եւ Կրթական խորհուրդների ներկայացուցիչները՝ համայնքիս Հայոց ազգային «Նարեկ» մանկապարտէզնախակրթարան այցելելուց եւ տարեմուտի առաջին զանգը հնչեցնելուց յետոյ, ներկայացան «Սրբոց Վարդանանց» դպրոց, ուր Կրթական խորհրդի ատենապետուհի Մարգարիտ Դաւթեանը շնորհաւորելով դպրոցական տարեմուտի կապակցութեամբ, այն որակեց որպէս դպրոցական գարնանամուտ, որը ծաղկում է աշակերտի աշխատասիրութեամբ, դպրոցական անձնակազմի եւ ծնողների հոգատարութեամբ ու հետեւողական ջանքերով:



Օրուայ առիթով կազմակերպւած արարողութեան ընթացքում գերպ. Հայր Սուրբի ձեռամբ եւ համայնքի Վարչութեան կողմից՝ պատուոգրով եւ յուշանւէրով մեծարանքի արժանացաւ նոր հանգստեան կոչւած դպրոցի տեսուչ պրն. Ղօջավանդը՝ բազում տարիների ընթացքում հայոց ազգային «Սրբոց Վարդանանց» եւ «Մասիս» դպրոցներին՝ իր մատուցած ծառայութեան համար:

Այնուհետեւ գերպ. Հայր Սուրբն իր սրտագին բարեմաղթանքներն ու շնորհաւորանքները փոխանցելով, յորդորեց սիրասուն աշակերտներին յանձնառութեամբ սկսեն ուսումնական նոր տարեշրջանը եւ արդարացնեն իրենցից ակնկալւած պարտականութիւնները:



Օրուայ առիթով գեղեցիկ խօսքերով եւ ասմունքներով արտայայտուեցին աշակերտ-ուհիներ Թինա Մինասքանեանը, Արփինէ Նազարեանը, Մարիսա Խան Մելիքեանը եւ Հայբերդ Մատթէոսեանը:

Վերջում բոլորը միասնաբար արտասանեցին Տէրունական եւ «Զգործս ձեռաց Մերոց …» աղօթքները, որից յետոյ Հայր Սուրբի ձեռամբ հնչեց ուսումնական տարեշրջանի առաջին զանգը:

Ծրագրի աւարտին կազմակերպուել էր համեստ ընդունելութիւն:

## ԶԲՕՍԱՆՔ՝ «ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ» ԵՒ «ՏԱՐԵՑՆԵՐԻ» ՕՐՈՒԱՅ ԱՌԻԹՈՎ



Չորեքշաբթի՝ 2017 թուականի հոկտեմբերի 11-ի առաւօտեան, «Մանուկների Համաշխարհային» եւ «Տարեցների»՝ երկու գեղեցիկ օրուայ առիթով, Շահինշահրի հայոց ազգ. «Նարեկ» մանկապարտէզ-նախակրթարանի տեսչութեան եւ ծնողական խորհրդի նախաձեռնութեամբ զբօսանք էր կազմակերպուել դպրոցի սաների, ծնողների, պապիկների եւ տատիկների համար:

Մասնակիցները պատասխանատուների ուղեկցութեամբ վայելեցին հաճելի պահեր՝ խանդավառութեամբ մասնակցելով կազմակերպուած խաղերին ու մրցոյթներին:

## «ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ» ՏՕՆԸ ՆՇՈՒԵՑ ՇԱՀԻՆՇԱՀՐՈՒՄ



Կիրակի՝ թուականիս հոկտեմբերի 15-ի առաւօտեան, «Սրբոց Թարգմանչաց» տօնի առիթով, Շահինշահրի «Սրբոց Վարդանանց» եկեղեցու սրահում մատուցուեց Ս. եւ անմահ Պատարագ՝ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանի ձեռամբ, արժն. Տ. Սահակ քհնյ. Մինասեանի մասնակցութեամբ եւ դպրաց դասի սպասարկութեամբ:



Օրուայ խորհրդին ներկայ էին Շահինշահրի Հայ համայնքի վարչութիւնը, «Նարեկ» մանկապարտէզ-նախակրթարանի եւ «Սրբոց Վարդանանց» դպրոցների պատասխանատուներն ու աշակերտութիւնը եւ նաեւ համայնքի անդամները:

Գերպ. Հայր Սուրբն արարողութեան ընթացքում հանգամանօրէն ներկայացնելով Ս. Մեսրոպ Մաշտոցի, Ս. Սահակ Պարթեւի եւ թարգմանիչ վարդապետների անգնահատելի դերը հայերէն տառերի գիւտի եւ Աստուածաշնչի թարգմանութեան նուիրական գործում՝ հայրաբար յորդորեց աշակերտներին գերազանց սովորեն՝ իրենց որպէս աւանդ հասած հայ լեզուն եւ այն գերադասեն ամէն ինչից վեր: Այնուհետեւ գեղեցկօրէն անդրադառնալով հայ ուսուցչի նշանակալից դերին՝ հայ աշակերտի հայեցի դաստիարակութեան եւ հայակերտման սրբազան գործում՝ շնորհաւորեց Հայ ուսուցչի տօնը եւ ոյժ ու կորով մաղթեց հայ մշակոյթի բոլոր երախտաւորներին:



Իր պատգամի աւարտին, Հայր Սուրբն իր օրհնանքն ուղղելով բոլոր ներկաներին Իր եւ Հայ համայնքի վարչութեան անունից շնորհաւորեց «Հայ Մշակոյթի» եւ

«Սրբոց Թարգմանչաց» բարեբաստիկ տօների կապակցութեամբ՝ մաղթելով բոլորին անսպառ ոյժ, եռանդ եւ զօրաւոր կամք հայ դպրութիւնն ու մշակոյթը անխափան պահպանելու եւ անվարան տարածելու առաքելութեան մէջ:

## ՇՐՋԱԳԱՅՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ՍՊԱՀԱՆԻ ՍՈՖԷ ՍԱՐԸ



Հինգշաբթի՝ 2017 թ. հոկտեմբերի 5-ի առաւօտեան ժամը 7:00-ին, Ն. Ջ. Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան Շահինշահրի մասնաճիւղի վարչութեան հովանաւորութեամբ եւ Երէցների միաւորի նախաձեռնութեամբ, շրջագայութիւն էր կազմակերպուել դէպի Սպահան քաղաքի Սոֆէ սարի զբօսայգին: Շրջագայող խումբն իր 30 մասնակիցով աշնանային այդ գեղեցիկ եւ արեւոտ օրը Սոֆէ սարի զբօսայգու հրաշագեղ բնութեան գրկում անցկացնելով, վայելեց նաեւ կազմակերպիչ խմբի միջոցով կազմակերպուած պատշաճ հիւրասիրութիւնը եւ ապրելով զւարճալի ու խանդավառ պահեր երեկոյեան վերադարձաւ Շահինշահր:

## Ն. Ջ. ՀԱՅ Մ. Մ. «ԱՐԱՐԱՏ» ՄԻՈՒԹԵԱՆ ՇԱՀԻՆՇԱՀՐԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻ ՆՈՐԱԿԱՌՈՅՑ ԿԵՆՏՐՈՆԱՏԵՂԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ



Ուրբաթ՝ 2017 թ. նոյեմբերի 3-ի երեկոյեան ժամը 7:30-ին, Շահինշահրում տեղի ունեցաւ Նոր Ջուղայի Հայ Մարզա-Մշակութային «Արարատ» միութեան Շահինշահրի մասնաճիւղի նորակերտ կենտրոնատեղիի բացման հանդիսութիւնը՝ ներկայութեամբ Սպահանի հայոց թեմի թեմակալ առաջնորդ Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանի, Շահինշահրի հոգեւոր տեսուչ Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանի, Տ. Սահակ քհն. Մինասեանի, Իսլամական խորհրդարանում Սպահանի եւ հարաւային իրանահայութեան պատգամաւոր Ժորժիկ Աբրահամեանի, թեմի ազգային իշխանութեան մարմինների եւ ենթամարմինների ներկայացուցիչների եւ հոծ թւով հայորդիների:

Ամենասկզբում տեղի ունեցաւ բացման արարողութիւնը թեմակալ առաջնորդի եւ համայնքի հոգեւոր տեսուչի ձեռամբ եւ ազգայինների մասնակցութեամբ:



Ողջոյնի խօսքով հանդէս եկաւ օրւայ հանդիսավար Մարիա Խուդավերդեանը, ով բեմ հրաւիրեց Թեմական խորհրդի ատենապետ Վարուժ Մինասեանին: Պրն. Մինասեանն իր խօսքում հակիրճ ներկայացնելով նորակերտ շէնքի կառուցման հանգամանքները՝ ընդգծեց համայնքում միութենական կեանքի աշխուժացման անհրաժեշտութիւնը, որը սերտօրէն կապուած է ժամանակակից յարմարութիւններով օժտուած համալիրի, որտեղ իրենց միութենական ստեղծարար գործունէութեամբ եւ խոհեմ ընթացքով զարկ կը տան համայնքի անդամները:



Նոր Ջուղայի Հայ Մարզա-Մշակութային «Արարատ» միութեան վարչութեան խօսքն արտայայտեց նախագահ Մասիս Մինասեանը, ով իր խօսքում նշեց.

«Այսօր անկիւնադարձային մի նոր էջ է բացւում Սպահանի հայոց թեմի եւ Շահինշահրի հայ համայնքի պատմութեան մէջ: Շահինշահրում համայնքային, մարզա-մշակութային, սկաուտական եւ ուսանողական կեանքի բոլոր ոլորտներում հնարաւորութիւնների ընդլայնումը, նրանց ակտիւ աշխատանքը, անխափանելիօրէն կապուած էր յարմարաւէտ մի տարածք ունենալուն: Սպահանի հայոց թեմի ազգային մարմինները իրենց գործունէութեամբ ձեռնամուխ եղան այս դժւար, սակայն կարեւոր եւ անխուսափելի աշխատանքի իրականացմանը: Անցել ենք երկար ճանապարհ եւ այսօր վայելում ենք այդ կատարած աշխատանքի արդիւնքն ու արդէն իսկ միասնաբար համախմբուած ենք հարազատ այս յարկի՝ Նոր Ջուղայի Հայ Մարզա-Մշակութային «Արարատ» միութեան Շահինշահրի մասնաճիւղի նորակառոյց շէնքում»:



Մասնաճիւղի վարչութեան անունից Արիս Դաւթեանը իր անհուն հրճւանքն ու անսահման երջանկութիւնը յայտնեց՝ համայնքի անդամների վաղեմի երազանքն ու բուռն ցանկութիւնը իրականացած տեսնելով,

որն էր՝ համայնքում ունենալ մարզա-մշակութային յարմարաւէտ եւ նորօրեայ կենտրոնատեղի, որտեղ անշուշտ պէտք է կենտրոնանան համայնքի ազգային եւ



մարզա-մշակութային աշխատանքները՝ յօգուտ հայ համայնքի կեանքի աշխուժացման ու բարգաւաճման: Նա իր երախտագիտական խօսքն ուղղեց ազգային իշխանութեանը՝ օրէնսդիր եւ գործադիր մարմիններով հանդերձ, որոնք նոր կենտրոնատեղին կառուցելու ուղղութեամբ չխնայեցին որեւէ ճիգ ու ջանք եւ շարունակ հովանաւորեցին եւ սատար հանդիսացան այդ կարեւոր նախագիծը գործադրուելու աշխատանքին:

Այնուհետեւ իր խօսքում շնորհակալութիւն յայտնեց Ն. Ջ. Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան բոլոր շրջանների վարչութիւններին, որոնք միշտ բարեցակամութեամբ իրենց նիւթա-բարոյական հովանաւորութիւնն են ցուցաբերել մասնաճիւղին:



Որպէս օրւայ հանդիսութեանն աւելի փայլ ու բուրմունք հաղորդող՝ իրենց գեղեցիկ երգ ու ասմունքով հանդէս եկան համայնքի Հ. Ազգ. «Սրբոց Վարդանանց» դպրոցի աշակերտ-ուհիները՝ երգուսոյց Նարբէ Տ. Գրիգորեանի գլխաւորութեամբ եւ Նոր Ջուղայի Հայ Մարզա-Մշակութային «Արարատ» միութեան Մշակութային միաւորի «Կռունկ» պարախումբը ղեկավարութեամբ՝ պարուսոյց Նունէ Մկրտչեանի:



Մասնաճիւղի վարչութիւնը օրւայ առիթը պատեհ համարելով, թեմակալ առաջնորդի ձեռամբ գնահատագրեր յանձնեց Թեհրանի Համահայկական 49-րդ շրջանի խաղերին մասնակցած եւ յաջողութիւններ արձանագրած մարզիկ-ուհիներին:

Ծրագրի պաշտօնական բաժնի աւարտին բեմ հրաւիրուեց թեմակալ առաջնորդն՝ իր հայրական պատգամն արտայայտելու համար:





Թեմակալ առաջնորդը բարձր գնահատելով օրւայ ելոյթը եւ հնչած արտայայտութիւնները յայտնեց. «Մեր բոլորի աղօթքները փափագների եւ իղձերի հետ միախառնուեցին եւ բարձրացան առ Աստուած եւ այդ աղօթքներին որպէս պատասխան Աստուածային օրհնաբեր լոյս ծագեց երկնքից եւ այդ լոյսի կենտրոնի պրիսմակը զետեղուեց Շահինշահրի այս կենտրոնում, ուր տարիներ առաջ հիմնօրհնէքը կատարուեց եւ ահա այս երեկոյ հայկական այս շքեղ, փառապանծ ապարանքի բացումը կատարեցինք: Եւ այս ապարանքին մուտք գործող իւրաքանչիւր հայորդի իրաւունք ունի իրեն զգալու դրա թագաւորը եւ իշխանը»:

Թեմակալ առաջնորդը եզրափակեց իր սրտի խօսքը՝ շնորհաւորելով թեմի ազգային իշխանութեանը, միութեան սեփականատիրոջը, «Արարատ» միութեան թէ Կենտրոնական եւ թէ մասնաճիւղի վարչութիւններին, ազգայիններին, ղեկավարներին, եւ մանաւանդ Շահինշահրի համայնքին ու հայորդիներին այս գեղեցիկ կենտրոնն ունենալու առիթով: Իր իւրայատուկ շնորհակալական եւ մանաւանդ երախտագիտական խօսքն ուղղեց թեմի ազգային իշխանութեանը, յատկապէս Պատգամաւորական ժողովին, որ իր հետեւողական աշխատանքով փորձեց խթանել այս աշխատանքը, Թեմական խորհրդին, որ ամբողջօրէն նեցուկ կանգնեց «Արարատ»-ի շրջանային վարչութեանը, ինչպէս նաեւ Շահինշահրի Հայ համայնքի վարչութեանը, որի համագործակցութեան շնորհիւ ի կատար ածուեց այս գործը եւ այսօր կարողացանք վայելել նրա համեղ պտուղը: Նա իր խօսքում ընդգծելով Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանի անգնահատելի դերն ու հեղինակութիւնը համայնքի ան-

դամներին ի մասնաւորի երիտասարդներին ճիշտ ուղղորդելու գործում՝ բարձր գնահատեց Հայր Սուրբի ցուցաբերած հովանաւորութիւնը :

Այնուհետեւ օրւայ հանդիսավարը շնորհակալութիւն յայտնեց գեղարուեստական բաժնի բոլոր կատարողներին, պատասխանատուներին, ծրագրի իրականացման գործընթացում իրենց անվերապահ աջակցութիւնը ցուցաբերած բոլոր մարմիններին եւ անհատներին:

Օրւայ հանդիսութիւնը եզրափակւեց ջերմ մթնոլորտում կազմակերպւած պատշաճ հիւրասիրութեամբ:

## «ԲԵԲԵԿՍ» ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆԸ՝ ՇԱՀԻՆՇԱՀՐՈՒՄ

Հինգշաբթի՝ 2017 թ. դեկ. 7-ի երեկոյեան ժամը 7-ին, Նոր Ջուղայի Հայ մարզա-մշակութային «Արարատ» միութեան Մշակութային միաւորի «Լեւոն Շանթ» թատերախումբը, հովանաւորութեամբ Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գումանեանի, ներկայացրեց Մորիս Հեննեկինի «Բեբեկս» կատակերգութիւնը՝ բազմավաստակ արւեստագէտ Գաբրիէլ Թիքիդջեանի բեմադրութեամբ՝ Նոր Ջուղայի Հայ մարզա-մշակութային միութեան Շահինշահրի մասնաճիւղի կենտրոնատեղիում:

Օրւայ ձեռնարկին ներկայ էին արժն. քհնյ. հայրեր Տ. Սահակ Մինասեանը եւ Տ. Խաչատուր Զարգարեանը, Նոր Ջուղայի Հայ մարզա-մշակութային «Արարատ» միութեան Կենտրոնական եւ Մշակութային միաւորի վարչութեան անդամները, Շահինշահրի հայ համայնքի վարչութիւնը եւ մեծ թւով ներկաներ:



Ողջոյնի խօսքով ելոյթ ունեցաւ Շահինշահրի մասնաճիւղի «Արարատ» միութեան Մշակութային միաւորի անդամ Վարդուհի Պօղոսեանը, ով շնորհակալութիւն յայտնեց կազմակերպիչներին եւ բարի բեմադրութիւն մաղթելով թատերախմբին՝ բեմը զիջեց օրւայ հաղորդավարուհի Ալինա Տէր- Սուքիասեանին: Հաղորդավարուհին ամփոփ ներկայացրեց ֆրանսահպատակ բելգիացի դրամատուրգ Մորիս Հեննեկինի կենսագրականն ու թատերական գործունէութիւնը եւ բարի վայելում մաղթելով հանդիսատեսին՝ բեմը տրամադրեց թատերախմբին, որը մեծ յաջողութեամբ ներկայացրեց կատակերգութիւնը՝ արժանանալով հանդիսատեսի գնահատանքին ու ծափողջոյններին:

Իրենց յանձնարարւած դերերում գեղեցկօրէն փայլեցին շնորհալի դերասաններ՝ Վաղօ Սէր Սուքիասեանը, Հայդուկ Վարդեւանեանը, Զարենուշ Աղուրեանը,Կարէն Խանլարեանը, Հրաչ Տէր-Յովհաննիսեանը, Յասմիկ Յովսէփեանը, Անասիկ Ծառուկեանը, Մարինէ Հայրապետեանը եւ Էդմոնդ Օրդուբէգեանը, իսկ երաժշտութեան եւ դիմայարդարման պատասխանատուներն էին Արտեոմ Ղարիբեանն ու Նայիրի Ղազարեանը:



Սոյն ձեռնարկը լուսանկարելու եւ նկարահանելու պատասխանատւութիւնը սիրողաբար յանձն առան Ռայմոնդ Թորոսեանն ու Էդւին Բաբումեանը:

Որպէս ձեռնարկի փակում խօսքը տրւեց գերպ. Հայր Սուրբին, ով բարձր գնահատելով իրականացւած ներկայացումը՝ թատրոնը որակեց մարդու ստեղծած ամենակատարեալ արւեստը, որտեղ միաձուլւած են ճարտասանութիւնը, երգը, պարը, գեղագիտական հայեացքը եւ ընդհանրապէս յուզական աշխարհը, որը դրսեւորում է դերակատարի ներկայացման ձիրքն ու տաղանդը: Հայր Սուրբն իր խօսքն աւարտեց շնորհաւորանքի, շնորհակալութեան եւ գնահատանքի խօսքերով՝ ուղղւած նախաձեռնողներին, կազմակերպիչներին եւ բեմադրութեան իրականացմանը աջակցող բոլոր մասնակիցներին եւ իր ձեռամբ թատերախմբին յանձնեց Շահինշահրի մասնաճիւղի Մշակութային միաւորի կողմից նւիրած ծաղկեկողովը:

## ՀԱՆԴԻՊՈՒՄ ՇԱՀԻՆՇԱՀՐԻ ՀՈԳԵՒՈՐ ՏԵՍՈՒՉ Տ. ԱՆԱՆԻԱ Ծ. ՎՐԴ. ԳՈՒՃԱՆԵԱՆԻ ՀԵՏ



Չորեքշաբթի՝ 2017 թւականի նոյեմբերի 9-ի երեկոյեան ժամը 7:00-ին՝ Նոր Ջուղայի Հայ մարզա-մշակութային «Արարատ» միութեան Շահինշահրի մասնաճիւղը քաղաքավարական այցով հանդիպում ունեցաւ Շահինշահրի հոգեւոր տեսուչ Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանի հետ:

Հայր Սուրբը գրկաբաց ընդունելով նշեալ մասնաճիւղի վարչութեան անդամներին՝ բարի գալուստ մաղթեց նրանց:

Մասնաճիւղի վարչութեան անունից նախագահ Արիս Դաւթեանը շնորհակալագիր յանձնելով գերպ. Հայր Սուրբին՝ շնորհակալութիւն յայտնեց նրան Շահինշահրի մասնաճիւղի «Արարատ» միութեան նկատմամբ ցուցաբերած յարատեւ հովանաւորութեան առիթով: Պրն. Դաւթեանը բարձր գնահատելով գերպ. Հայր Սուրբի մշտական ներկայութիւնը մասնաճիւղի անցեալի եւ ներկայ վարչութիւնների կողքին՝ ընդգծեց, որ Հայր Սուրբը ստանձնելով համայնքի անդամների հոգեւոր դաստիարակութիւնը՝ խթան հանդիսացաւ նրանց մէջ նաեւ ազգային գիտակցութիւնը ճշգրտօրէն ձեւաւորելու նուիրական գործում: Առ այդ մասնաճիւղի վարչութիւնը իր պարտքն համարեց իր երախտագիտութիւնը յայտնել Հայր Սուրբին: Մասնաճիւղի նորակերտ կենտրոնատեղիի բացումով, երբ արդէն աւելի պիտի ծաւալուեն միութենական աշխատանքները, նշեալ վարչութիւնը ինչպէս միշտ մեծ սիրով կընդունի Հայր Սուրբի օգտակար ցուցումները՝ ի շահ համայնքի միութենական կեանքի բարգաւաճման:

Գերպ. Հայր Սուրբը եւս իր հերթին շնորհակալութիւն յայտնելով մասնաճիւղի վարչութեանը կատարած այցելութեան համար՝ կրկին անգամ շնորհաւորեց մասնաճիւղի նորակերտ համալիրի բացման կապակցութեամբ եւ հաւաստիացրեց՝ սիրայօժար կը ցուցաբերի իր հովանաւորութիւնը՝ ինչպէս միշտ մասնաճիւղի գործունէութեան հանդէպ եւ անտարակոյս օգտակար կը հանդիսանայ միութենական աշխատանքների զարգացման գործում:

## ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՇԱՀԻՆՇԱՀՐԻ «ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ» ԴՊՐՈՑԻ ԳՐԱԴԱՐԱՆ



Չորեքշաբթի՝ 2017 թւականի նոյեմբերի 15-ի առաւօտեան ժամը 10:30-ին, «Գրքի եւ ընթերցանութեան» օրւայ առիթով, Շահինշահրի Հայոց ազգային «Նարեկ» մանկապարտէզ-նախակրթարանի սաները, դպրոցի տեսչութեան եւ ծնողական խորհրդի ուղեկցութեամբ այցելեցին «Սրբոց Վարդանանց» դպրոցի գրադարանը:

Դպրոցի գրադարանում նրանց դիմաւորեցին հայերէն բաժնի փոխտեսուչ Արիս Դաւթեանը եւ գրադարանավարուհի Անահիտ Այւազեանը, ով պատրաստել էր մի գեղեցիկ հեքիաթ եւ տիկնիկային պատմածք՝ սաներին ներկայացնելու համար:

Գրադարանում մի շարք մանկական հետաքրքիր գրքերի հետ ծանօթանալուց յետոյ, դպրոցի սաները հիւրասիրուեցին եւ ստացան գեղեցիկ նուէրներ՝ հիւրընկալ դպրոցի պատասխանատուների եւ ծնողական խորհրդի կողմից:

## ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻՆ



Հինգշաբթի՝ 2017 թւականի նոյեմբերի 16-ի առաւօտեան, Շահինշահրի «Հայ կանանց եկեղեցասիրաց» միութեան վարչութեան նախաձեռնութեամբ այցելութիւն էր կազմակերպւել Նոր Ջուղայի եկեղեցիներին: Նշեալ Միութեան անդամները Վարչութեան ուղեկցութեամբ առաւօտեան հանրակառքով մեկնեցին դէպի Նոր Ջուղա՝ այցելելու այնտեղի պատմական եկեղեցիները:

Նոր Ջուղայում, այցելուներին միացաւ արժ. Տ. Սահակ քհնյ. Մինասեանը, ով հանգամանօրէն ներկայացնելով այդ փառաւոր ու

հիասքանչ եկեղեցիների պատմականը օգտակար եւ հետաքրքիր տեղեկութիւններ փոխանցեց այցելու խմբին: Նրանք միասնաբար ջերմեռանդ աղօթեցին եւ մոմ վառեցին՝ ապրելով հոգեկան անդորր:

Միջօրէին խումբը քիչ դադարից յետոյ, շարունակեց իր այցելութիւնը մինչեւ յետկէսօրեայ ժամը 4-ը՝ այդ օրն այցելելով Նոր Ջուղայի վայելչաշէն բոլոր եկեղեցիները:

## ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ՝ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ Ս. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔ

Երեքշաբթի՝ 2017 թ. նոյեմբերի 28-ի առաւօտեան, Շահինշահրի «Սրբոց Վարդանանց» դպրոցի տեսչութեան նախաձեռնութեամբ եւ ուսուցչական կազմի ու ծնողական խորհրդի համագործակցութեամբ աշակերտ-ուհիների համար այցելութիւն էր կազմակերպուել Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանք:



Ամենասկզբում աշակերտ-ուհիները պատասխանատուների ուղեկցութեամբ, վանքի Ծաղկեայ դահլիճում ներկայացան Սպահանի թեմակալ առաջնորդ Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանին եւ Շահինշահրի հոգեւոր տեսուչ Տ. Անանիա ծ. վրդ. Գունճանեանին, ուր հիւրընկալ հոգեւոր հայրերը գրկաբաց ընդունեցին այցելու խմբին: Թեմակալ առաջնորդն իր ուրախութիւնն յայտնեց այս հանդիպման առիթով եւ օրհնելով աշակերտներին խրախուսեց նրանց, որ միշտ կառչած մնան ազգային եւ կրօնական արժէքներին: Այնուհետեւ խօսքը փոխանցեց Շահինշահրի հոգեւոր տեսուչին, ով իր հերթին ուսումնա-դաստիարակչական բնագաւառում բարեբեր ու բեղմնաւոր գործունէութիւն մաղթեց նրանց:

Դպրոցի անձնակազմի անունից արտայայտուեց փոխտեսուչ պրն. Արիս Դաւթեանը, ով յայտնեց, թէ սոյն ուսումնական տարեշրջանին հայերէն բաժնում մշակած դպրոցական աշխատանքների ծրագիրը նուիրած է Հայաստանի Առաջին Հանրապետութեան հիմնադրման 100-ամեակին, ուստի իբրեւ այդ ծրագրի սկիզբ՝ առաջին հերթին կազմակերպուել է Ս. Ամենափրկիչ վանքի այցելութիւնը, որտեղ մեր աշակերտները աւելի ծանօթանալով մեր ազգային-մշակութային եւ կրօնական արժէքներին աւելի կուղորդուեն իրենց ստանձնած պարտականութիւնները արդարացնելու ճանապարհին:

Դպրոցի տեսուչ պրն. Ղաջարին եւս իր շնորհակալութիւնն յայտնեց այս հանդիպման եւ պատմական վանքը այցելելու ընձեռուած առիթի կապակցութեամբ եւ յոյս յայտնեց, որ ազգային իշխանութեան հովանաւորութեամբ անշուշտ բարենպաստ պայմաններ կստեղծուեն դպրոցը կանգուն եւ ծաղկուն պահելու ուղղութեամբ:

Այնուհետեւ աշակերտները հոգեւոր հայրերի առաջնորդութեամբ այցելեցին վանքի «Ս. Յովսէփ Արեմաթացի» եկեղեցին եւ միասնաբար «Տէրունական աղօթքը» երգեցին: Եկեղեցին իր հրաշալի ճարտարապետութեամբ եւ խորհրդաւոր որմնանկարներով մեծ հետաքրքրութիւն առաջացրեց աշակերտների մօտ: Իսկ այդ հիասքանչ որմնանկարչութիւնների եւ պատկերների կապակցութեամբ հանգամանօրէն մեկնաբանութիւններ կատարեց պրն. Րաֆֆի Ղարիբեանը:

Յաջորդ տեսարժան վայրը, ուր աշակերտները այցելեցին վանքի զմայլելի թանգարանն էր իր պատմամշակութային մեծ արժէք ներկայացնող թանգարանային իրերով եւ պարագաներով: Այցելու խմբին յաջողուեց նաեւ այցելել Հայաստանի Առաջին Հանրապետութեան հիմնադրմանը նուիրուած տաղաւարը:

Թանգարանի աշխատակից Աուլետ Հայրապետեանը լիարժէք տեղեկութիւններ փոխանցեց նշեալ տաղաւարի եւ թանգարանում գտնուող ցուցանմուշների կապակցութեամբ:



Վանքի «Ս. Ներսէս Շնորհալի» գրադարանը յաջորդ հետաքրքիր ու տեսարժան վայրն էր, ուր աշակերտներին մատչելի լեզուով գեղեցիկ բացատրութիւններ տուեց գրադարանավարուհի Վերգինէ Միրզախանեանը՝ հին եւ նոր գրքերի տպագրման, եւ ընդհանրապէս գրքերի աշխարհի մասին: Գրադարանավարուհին աշակերտներին ծանօթացրեց մանկական գրքերի պատկերազարդ եւ գրաւիչ նոր նմուշների հետ:

Գրադարանում գրքերի կախարդական աշխարհին ծանօթւելուց բացի, աշակերտների համար կազմա-

կերպեւել էին մտաւոր հաճելի խաղեր՝ գրադարանավարուհու նախաձեռնութեամբ եւ ուղեկցող ուսուցչական կազմի համագործակցութեամբ, որոնց աշակերտները խանդավառութեամբ մասնակցեցին:

Այցելութեան աւարտին աշակերտները խմբովին նկարուեցին վանքի բակի կենտրոնում գտնուող խաչքարի մօտ եւ ծնողական խորհրդի միջոցով նախատեսուած համեստ հիւրասիրութիւնը վայելելուց յետոյ՝ գեղեցիկ եւ գունեղ տպաւորութիւններով վերադարձան տուն:

## ԱՄԱՆՈՐԵԱՅ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ-ՎԱՃԱՌՔ ՇԱՀԻՆՇԱՀՐՈՒՄ

Հինգշաբթի եւ ուրբաթ՝ 2017 թւականի դեկ. 14-15-ին, Շահինշահրի «Հայ կանանց եկեղեցասիրաց» միութիւնը կազմակերպել էր տօնական ցուցահանդէս-վաճառք համայնքի «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահում: Սոյն ցուցահանդէսի բացման արարողութեանը ներկայ էին համայնքի հոգեւոր տեսուչ Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանը, միութեան անդամուհիներն ու բազմաթիւ այցելուներ:

Ձեռնարկի հանդիսաւոր բացումը կատարեց գերպ. Հայր Սուրբի ձեռամբ, որից յետոյ իր բարիգալստեան խօսքով ելոյթ ունեցաւ միութեան նախագահուհի՝ տկն. Անահիտ Օհանեանը, ով շնորհակալութիւն յայտնեց գերպ. Հայր Սուրբին իր ցուցաբերած հովանաւորութեան, ինչպէս նաեւ Հայ համայնքի վարչութեանը՝ սրահը այս միջոցառմանը տրամադրելու համար:

Յաջորդիւ գերպ. Հայր Սուրբն իր ողջոյնի խօսքն ուղղելով բոլոր ներկաներին՝ շնորհաւորեց կազմակերպիչ միութեանը, այսպիսի շքեղ եւ ճոխ ցուցահանդէս կազմակերպելու կապակցութեամբ, որն անշուշտ միասնականութեան եւ միաբանութեան արգասիքն էր: Գերպ. Հայր Սուրբն ինչպէս միշտ բարձր գնահատեց հայ շնորհալի կնոջ ձեռարուեստն ու տաղանդը՝ արուեստի գեղեցիկ նմուշներ ստեղծելու գործում: Նա յատկապէս մեծ ուրախութեամբ յայտնեց, որ Շահինշահրի «Հայ կանանց եկեղեցասիրաց» միութեան նախաձեռնութիւնը՝ համայնքում աշխուժութիւն ստեղծելուց բացի, ինչպէս ամէն տարի իր հասոյթով պէտք է ծառայի ցանկացած մարդասիրական նպատակի եւ այս տարի՝ այս պարագային պէտք է օգտակար հանդիսանայ Արցախում զոհուած մի քաջարի զինուորի ընտանիքի: Այնուհետեւ օրհնելով բոլորին՝ մաղթեց բարի միութիւն եւ բարի գործունէութիւն:



Գերպ. Հայր Սուրբն իր խօսքի աւարտին շնորհաւորելով Ամանորեայ եւ Ս. Ծննդեան տօների կապակցութեամբ, աղօթեց Բարձրեալին, որ բոլոր հաւատացեալների սիրտը ջերմացնի լոյսով ու հաւատով եւ երջանկութիւնը թեւածի հայ օջախներում:

Յատկանշելի է, ինչպէս ամէն տարի, այս տարի եւս կազմակերպուած Ամանորեայ ցուցահանդէս-վաճառքը փայլեց իր վայելուչ դասաւորութեամբ եւ գունագեղ տաղաւարներով՝ ցանկացած այցելուի աչքը շոյելով եւ նրա մօտ գնահատանքի զգացում առաջացնելով:

## ԱՄԱՆՈՐԵԱՅ ՆԱԽԱՏՕՆԱԿ՝ ՇԱՀԻՆՇԱՀՐԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ «ՆԱՐԵԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ-ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՈՒՄ

Շաբաթ՝ 2017 թ. դեկտեմբերի 23-ի առաւօտեան ժամը 9-ից մինչեւ 11:30-ը, Շահինշահրի հայոց ազգային «Նարեկ» մանկապարտէզ-նախակրթարանի յարկի տակ տօնական էր: Առիթը բոլորի կողմից միշտ սիրուած մօտալուտ Ամանորն էր՝ իր նոր յոյզերով ու յոյսերով: Դպրոցի տեսչութեան եւ ծնողական խորհրդի նախաձեռնութեամբ կազմակերպուած այս գեղեցիկ նախատօնակին՝ սաները սրտի թրթիռով սպասում էին սիրելի ձմեռ պապի եւ ձիւնանուշիկի գալստեան, երբ յայտնեց ձիւնանուշն մանուկների ուրախ բացականչութիւնների ներքոյ եւ ի պատասխան փոքրիկ հիւրընկալներին ձմեռ պապի բացակայութեան մասին՝ յայտնեց, որ ձմեռ պապի սայլակը մնալով ձիւների մէջ, չի ստացել նրա ժամանակին տեղ հասնելն ու երբ ձիւները մի քիչ հալեն՝ նա կը շտապի փոքրիկների մօտ՝ իր հետ բերելով համեղ մրգեր ու գեղեցիկ նուէրներ:

Խրախճանքի ընթացքում, սաները կատարեցին Ամանորեայ ասմունքներ, երգեր ու պարեր եւ բոլորը միասին վայելեցին նախապատրաստուած հիւրասիրութիւնը:



## ՇԱՀԻՆՇԱՀՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ՝ ԱՄԱՆՈՐԵԱՅ ԵՒ ՍԲ. ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

Ամանորեայ եւ Ս. Ծննդեան տօների առիթով, երեքշաբթի՝ 2017 թուականի դեկտեմբերի 26-ի առաւօտեան ժամը 9-ին, «Սրբոց Վարդանանց» դպրոցի շրջափակում Շահինշահրի հայ համայնքի պատասխանատուներին այցելեցին Շահինշահրի քաղաքապետարանի եւ քաղաքային խորհրդի բարձրաստիճան պաշտօնեաներն եւ ներկայացուցիչները:

Շրջափակի սրահում հիւրերին ընդունեցին համայնքի հոգեւոր տեսուչ Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանը եւ հայ համայնքի Վարչութեան անդամները:






Վարչութեան անունից բարիգալստեան խօսքով հանդէս եկաւ Արիս Դաւթեանը, ով շնորհակալութիւն յայտնեց հիւրերին իրենց կատարած այցելութեան համար եւ խօսքը փոխանցեց քաղաքապետին: Քաղաքապետը շնորհաւորելով Ամանորեայ եւ Ս. Ծննդեան տօների կապակցութեամբ հանգամանօրէն ներկայացրեց այցելու պատուիրակութեանը: Նա բնութագրելով հայ համայնքը որպէս պարտաճանաչ, գործունեայ եւ յանձնառու խաւ՝ յոյս յայտնեց, որ միասնաբար ինչպէս միշտ ձեռնամուխ կը լինեն քաղաքի բարգաւաճման եւ բնակչութեան բարօրութիւնը ապահովելու գործին:

Յաջորդիւ ելոյթ ունեցաւ գերպ. Հայր Սուրբը, ով եւս իր հերթին իր ուրախութիւնը յայտնեց պետական պաշտօնէութեան եւ պատասխանատուների այցելութեան առթիւ, այն որակելով որպէս պետութեան եւ փոքրամասնութիւնների միջեւ առկայ համակրանքի, փոխհասկացութեան եւ համագործակցութեան արտայայտութիւններից մէկը: Գերպ. Հայր Սուրբն իր երախտագիտական խօսքն ուղղելով պետական այրերին՝ հայ համայնքի հանդէպ իրենց ցուցաբերած բարեացակամութեան եւ հոգատարութեան համար՝ աղօթեց առ Աստուած, որ 2018 թուականը լինի սիրոյ, յաղթանակի, խաղաղութեան եւ յաջողութեան տարի եւ Իրանի ժողովուրդը Աստծոյ հովանու ներքոյ ապրեն միշտ հաշտ ու համերաշխ եւ երկրի շէնացման ու բարգաւաճման նւիրական գործում ունենան նորանոր նւաճումներ ու ձեռքբերումներ:

Օրւայ բարեմաղթանքներին միանալով Քաղ-խորհրդի տնօրէնը բարձր գնահատեց հայ համայնքի դերը՝ որպէս ազնիւ ու օրինապահ քաղաքացիներ եւ շնորհաւորեց Քրիստոսի Ս. ծնունդն ու Մկրտութիւնը եւ մօտալուտ 2018 թուականը:

Օրւայ առիթով կազմակերպւել էր հիւրասիրութիւն, որը վայելեցին ներկաները շքեղօրէն զարդաւած դահլիճում՝ ջերմ ու հիւրընկալ մթնոլորտում: Աւարտին հայ համայնքի Վարչութիւնը յուշանւէրներ յանձնեց բոլոր հիւրերին, իսկ քաղաքապետարանը Վարչութեանը նւիրեց մի շքեղ տօնածառ:

## ԱՄԱՆՈՐԵԱՅ ՔԱՂԱՔԱՎԱՐԱԿԱՆ ԱՅՑ՝ ՇԱՀԻՆՇԱՀՐԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑ

Ամանորեայ եւ Ս. Ծննդեան տօների առիթով, չորեքշաբթի՝ 2017 թւականի դեկտեմբերի 27-ի առաւօտեան ժամը 10:30-ին, Շահինշահրի Քաղաքապետարանի եւ Ուսումնադաստիարակչութեան հիմնարկի պատասխանատուները եւ պաշտօնեաները շնորհաւորագրերով եւ նւէրներով այցելեցին համայնքի հայոց ազգ. «Սրբոց Վարդանանց» դպրոցը եւ տեսակցութիւն ունեցան Տ. Սահակ քհնյ. Մինասեանի, հայ համայնքի Վարչութեան ներկայացուցիչների, դպրոցի տեսչութեան եւ անձնակազմի հետ:

Իբրեւ սկիզբ դպրոցի տեսուչ պրն. Ղաջարին բարիգալուստ մաղթելով այցելու պատուիրակութեանը՝ ողջոյնի գեղեցիկ խօսքով եւ ըստ արժանւոյն բնութագրելով Աստուածամօրն ու Քրիստոսին որպէս սրբութիւններ՝ շնորհաւորեց Ամանորեայ եւ Սբ. Ծննդեան տօների կապակցութեամբ:

Յաջորդիւ Տ. Սահակ քհնյ. Մինասեանը իր եւ հայ համայնքի Վարչութեան անունից շնորհակալական խօսքն ուղղեց հիւրերին, ովքեր այս բարեբաստիկ տօնական օրերին իրենց ներկայութեամբ առաւել շուք ու խանդավառութիւն են հաղորդել ուսումնադաստիարակչական միջավայրին եւ շնորհաւորելով Ս. Ծննդեան տօների կապակցութեամբ՝ աղօթեց Բարձրեալին, որ 2018 թւականը բոլորի համար հանդիսանայ խաղաղութեան, յաջողութիւններով ու նւաճումներով լի տարի:

Շրջանի Ուսումնադաստիարակչութեան հիմնարկի անունից շնորհաւորանքի խօսքով ելոյթ ունեցաւ նոյն հիմնարկի տնօրէն պրն. Իսմաիլզադէն՝ ով իր գոհունակութիւնը յայտնեց հայոց դպրոցի բարեկարգ ու գործու-

նեայ կարգավիճակից եւ բարձր գնահատեց հայ պատասխանատուների դերը՝ դպրոցում ուսումնադաստիարակչական ծրագրերի իրականացման կարեւոր գործում:

Օրուայ բարեմաղթանքներին միանալով քաղաքապետարանի ներկայացուցիչը գնահատեց հայ համայնքի ազնիւ ու գործունեայ կեցուածքը եւ յայտնեց ինչպէս միշտ որեւէ ճիգ ու ջանք չեն խնայելու հայ համայնքին օգտակար հանդիսանալու գործում:



Ձեռնարկի ընթացքում ձմեռ պապը նաեւ աշակերտների համար նուէրներ բերելով՝ ներկայացաւ եւ խինդ ու ծիծաղ պարգեւեց ներկաներին:



Հիւրերը վայելեցին օրուայ առիթով կազմակերպուած համեստ հիւրասիրութիւնը եւ շնորհակալական խօսքերով հրաժեշտ տուեցին հիւրընկալներին, որից յետոյ սկսեց հայերէն բաժնի տեսչութեան եւ ծնողական խորհրդի նախաձեռնութեամբ կազմակերպուած դպրոցական Ամանորեայ խրախճանքը, որի ընթացքում աշակերտ-ուհիները ուրախ երաժշտութեան ներքոյ անցան ուրախ երգ ու պարի եւ վայելեցին տօնական կարկանդակն ու հիւրասիրութիւնը:

## ԱՄԱՆՈՐԵԱՅ ՀԱՆԴԷՍ՝ ՇԱՀԻՆՇԱՀՐԻ «ՆԱՐԵԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ-ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՈՒՄ

Չորեքշաբթի՝ 2017 թւականի, դեկտեմբերի 27-ի երեկոյեան ժամը 7:00-ին՝ Շահինշահրի հայոց ազգային «Նարեկ» մանկապարտէզ-նախակրթարանի տեսչութեան եւ ծնողական խորհրդի նախաձեռնութեամբ կազմակերպուել էր Ամանորեայ հանդէս: Սոյն ձեռնարկին ներկայ էին Սպահանի հայոց թեմի առաջնորդ Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը, համայնքի հոգեւոր տեսուչ Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանը, Տ. Սահակ քհն. Մինասեանը, թեմի ազգային մարմինների ներկայացուցիչներն ու սաների ծնողները:

Ողջոյնի խօսքով հանդէս եկաւ դպրոցի տեսչուհի Կարինէ Մինասաքանեանը, ով իր Ամանորեայ շնորհաւորման խօսքում բոլորին մաղթեց ուրախ, խաղաղ եւ յաջողութիւններով լի տարի: Նա յոյս յայտնեց, որ 2018 թւակնը հանդիսանայ բոլորի համար իղձերի իրականացման տարի եւ բոլորը կարողանան արձանագրել նորանոր նուաճումներ ու վերելքներ: Այնուհետեւ իր երախտագիտութիւնը յայտնեց ազգային իշխանութեանը՝ նրա ցուցաբերած անվերապահ հովանաւորութեան, եւ ապա ծնողներին՝ դպրոցական ծրագրերի իրագործմանը օգտակար հանդիսանալու համար:

Ինչպէս ամենամեայ Ամանորեայ հանդէս, շքեղօրէն զարդարուած տօնական բեմում, դպրոցի սաները ներկայացան վառ ու գունեղ զգեստներով եւ իրենց քաղցրահունչ ասմունքով, երգ ու տաղով եւ պարով տօնական տրամադրութիւն հաղորդեցին իւրաքանչիւր հանդիսատեսին:

Հանդէսում տիրող խանդավառութիւնը կրկնապատկւեց, երբ յայտնւեցին բոլոր մանուկների կողմից սիրուած ձմեռ պապն ու ձիւնանուշը, ովքեր պարզ ու մատչելի լեզւով իրենց բարեմաղթանքները յայտնեցին սաներին եւ նւիրեցին նրանց գունագեղ մրգեր:

Սաների ելոյթի աւարտին դպրոցի տեսչուհին իր շնորհակալական խօսքն ուղղեց սոյն ուսումնական տարեշրջանի նախօրէին հանգստեան կոչւած՝ դպրոցի դաստիարակչուհի Էմմա Օրդուբէգեանին, ով մեծ սիրով, երկար տարիներ սաների կողքին աշխատել էր հոգատարութեամբ ու նւիրւածութեամբ: Տեսչուհին շնորհակալութիւն յայտնեց նաեւ բոլոր այն անձանց, ովքեր իրենց համագործակցութիւնն են ցուցաբերել ամանորեայ ձեռնարկի իրականացման գործում:



Հանդէսի եզրափակիչ խօսքն արտայայտեց Տ. Սիփան ծ. վրդ. Գուճանեանը, ով իր հիացմունքն յայտնեց մանուկների պարզ ու անպաճոյճ աշխարհի մասին, որտեղ կան գեղեցիկ երազանքներ եւ դիւթիչ հեքիաթներ

եւ որտեղ մանուկների համար անկարելին անգամ դառնում է կարելի եւ մատչելի: Այնուհետեւ Հայր Սուրբն իր խօսքն ուղղելով դպրոցի անձնակազմին՝ բարձր գնահատեց նրա ստանձնած առաքելութիւնը՝ հայ մանկանը կրթելու եւ հայեցի դաստիարակելու նւիրական գործում եւ շնորհաւորելով Ամանորեայ եւ Ս. Ծննդեան տօների կապակցութեամբ՝ օրհնեց բոլորին եւ մաղթեց նրանց քաջառողջութիւն, հոգեկան անդորր, երազանքների իրականացում, ույժ ու եռանդ եւ խաղաղ ու բարեբեր տարի:

Ծրագրի աւարտին բոլոր ներկաների համար կազմակերպւել էր համեստ հիւրասիրութիւն:

## ՇԱՀԻՆՇԱՀՐԻ «ՆԱՐՕՏ» ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԵՐԳՉԱԽՄԲԻ ԱՄԱՆՈՐԵԱՅ ՀԱՄԵՐԳԸ

Բարձր հովանաւորութեամբ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանի եւ ղեկավարութեամբ Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանի՝ կայացաւ համայնքի «Նարօտ» երիտասարդական երգչախմբի Ամանորեայ համերգը՝ ուրբաթ՝ 2017 թւականի դեկտեմբերի 29-ի երեկոյեան ժամը 7:30-ին՝ Ն. Ջ. Հայ մարզա-մշակութային «Արարատ» միութեան Շահինշահրի մասնաճիւղի սրահում: Ձեռնարկին ներկայ էին թեմի ազգային մարմինների եւ ենթամարմինների ներկայացուցիչները, երգչախմբի անդամների ծնողներն ու հարազատները եւ զգալի թիւ կազմող մասնակիցներ:

Ամենասկզբում Պարոյր Սեւակի Ամանորեայ ողջոյնի խօսքով ելոյթ ունեցաւ Վիոլետ Յարութիւնեանը, ով իր խօսքում մօտալուտ Նոր տարում  ցանկացաւ բոլորին սէր, երջանկութիւն, ջերմութիւն, յաջողութիւն, խաղաղութիւն եւ յաղթանակ:



Այնուհետեւ բեմը տրամադրւեց «Նարօտ» երիտասարդական երգչախմբին, որն իր գեղեցիկ Ամանորեայ երգերի շարանով հանդէս գալով, հանդիսատեսին հաղորդեց խանդավառութիւն, նոր շունչ եւ թարմութիւն: Այնուհետեւ խմբի անդամները գեղեցկօրէն կատարեցին իրենց վստահւած ելոյթը՝ արժանանալով հանդիսատեսի բուռն ծափողջոյններին:

Երգացանկի ընտրութիւնը կատարւել էր մեծ խնամքով ու ճաշակով:

Համերգի աւարտին օրւայ բեմավարը «Նարօտ» երիտասարդական երգչախմբի անունից երախտագիտական եւ շնորհակալական խօսք յայտնեց Թեմակալ Առաջնորդին ձեռնարկը հովանաւորելու, համայնքի հոգեւոր տեսուչին՝ խումբը ղեկավարելու համար, համայնքի Վարչութեանը՝ իր անվերապահ եւ մնայուն աջակցութեան, Շահինշահրի մասնաճիւղի Հայ մարզա-մշակութաին «Արարատ» միութեան վարչութեանը՝ սրահը տրամադրելու, «Նարեկ» մանկապարտէզ-նախակրթարանի տեսչութեանը, Վիոլետ Յարութիւնեանին, Սերինէ Աղախանեանին իրենց ցուցաբերած համագործակցութեան, Նարբէ Գրիգորեանին՝ վոկալի պարապմունքների, Հարմա Կարապետեանին՝ երաժշտութիւնների գործիքաւորման, Անդրէ Պարսամեանին օրւայ համերգի մաքուր ու յստակ ձայնը ապահովելու, Էդւին Բաբումեանին եւ Ռայմոնդ Թորոսեանին համերգի նկարահանման եւ տեսագրման եւ երգչախմբի ծնողական խորհրդին իր ցուցաբերած հոգատարութեան համար:

Համերգի եզրափակիչ խօսքն հանդիսացաւ Թեմակալ Առաջնորդի Ամանորեայ պատգամը, որով Առաջնորդն իր հիացմունքն արտայայտեց այսպիսի շնորհալի եւ եռանդուն երիտասարդ-ուհիների ոգեւորիչ ներկայութեան կապակցութեամբ, ովքեր իրենց Ամանորեայ երգերով պատգամեցին սէր, միաբանութիւն, հաշտութիւն եւ համերաշխութիւն համայն մարդկութեան:



Թեմակալ Առաջնորդը երիտասարդ-ուհիների երգչախմբին մասնակցելու գլխաւոր ազդակը համարեց Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանի բեղուն գործունէութիւնը համայնքում եւ նրա՝ երիտասարդութեանը զօրավիգ հանդիսանալու գործօնը: Նա բարձր գնահատեց ղեկավար Հայր Սուրբի դերը  այդպիսի որակեալ եւ յաջող համերգ կազմակերպելու գործում: Հայր Սուրբն իր խօսքը եզրափակեց Ամանորեայ բարեմաղթանքով եւ ցանկացաւ 2018 թւականը բոլորի համար հանդիսանայ սիրոյ, համերաշխութեան եւ խաղաղութեան տարի:

Աւարտին երգչախմբի անդամները մի գեղեցիկ ծաղկեփունջով իրենց երախտագիտութիւնը յայտնեցին Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանին:

# ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

Հանգուցեալ Նոր Ջուղայեցի Մարտին Բահարեանի յիշատակին, Կրօնական խորհուրդը իր զաւակներից ստացել է 80.000.000 ռիալ, որը համաձայն իրենց ցանկութեան, նուիրւելու է Արցախի մարդասիրական օգնութեան ծրագրին

Ն.Ջ. Հայոց Առաքելական Եկեղեցեաց Վարչութիւն

***Զանազան նուիրատուութիւններ***

-500,000 ռիալ. Մալուս Սիմոնեան՝ իր կնոջ Հռիփսիկ Սիմոնեանի յիշատակին

***Ս. Գէորգ եկեղեցի***

-2,500,000 ռիալ. Աքրամ

-2.000.000-ական ռիալ. Գայանէ Գէորգեան, Աքրամ

-1.500.000 ռիալ. Մինաս Գէորգեան

-1,000,000-ական ռիալ. Արէն Պարսամեան, Մանէ Բարսեղեան,

-500,000-ական ռիալ. Աքրամ Արիան Ֆար, Լէյլա Ռաջաբի, Ռաջայի, Ոմն

-100,000-ական ռիալ. Արաքս Տէր-Մարտիրոսեան, Սիլւա Ղարիբեան, Իւսէֆի

***Խաչի զոյգելու համար***

-300,000-ական ռիալ. Սիլվա Ղարիբեան, Յովիկ Ծատուրեան, Վահէ Քեշիշեան

-200,000-ական ռիալ. Սեդա Յովհաննիսեան, Ռիմա Թորոսեան, Մոնթէ, Այլին Պետրոսեան, Սելէնա Գրիգորեան

-150,000 ռիալ. Արարատ Շահիջանեան

-100,000-ական ռիալ. Սիլվարդ Թորոսեան, Սլիվա Ղարիբեան, Սիլվա Միրզախանեան, Նայիրի Թորոսեան

***Ս. Ստեփանոս եկեղեցու տօնի առթիւ***

-500,000 ռիալ. Սիլվարդ Թորոսեան

-300,000 ռիալ. Թենի եւ Թոմիկ Բաղրամեաններ

-200.000 ռիալ. Մհեր եւ Վեհանուշ Խուդաբախշեաններ

***Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի***

-500,000 ռիալ. Երան Խուդավերդեան

***Ս. Գէորգ եկեղեցու անուանակոչութեան տօն***

**-Մատաղացու գառների նուիրատուներ.** Վրէժ Մինասեան, Մասիս Յովհաննիսեան, Նոր Ջուղայի Հայոց Առաքելական Եկեղեցեաց վարչութիւն, Նարեկ Թորոսեան, Խոջամալ ընտանիք, Ոմն

-2,000,000 ռիալ. Ռեբեկա Կարապետեան

-1,500,000-ական ռիալ. Հրատ Ղուկասեան, Ջանի եւ Թակուշ Բաղդասարեաններ, Շիրակ Յովսէփեան, Ֆաթեմէ Նասիրի, Շահրամ Արբաբզադէ Ջոլֆայի

-1,000,000-ական ռիալ. Տ. Մեսրոպ Աւ. քհնյ. Գալստանեան, Տ. Վազգէն քհնյ. եւ երէցկին Սեւան Քէօշկէրեաններ, Վարդանէս Մկրտչեան, Սերոժ Շահիջանեան, Յոլակ եւ Արաքս Յարութիւնեաններ, Մեղմիկ եւ Համիկ եւ Թանգիկ Միրզախանեաններ, Արաքս Առաքելեան, Արմենուհի Բարֆեան, Արարատ Մելիքեան, Սոնիա Քամարզարեան, Գագիկ եւ Գիւլնազ Հայրապետեաններ, Հայդուկ Մովսիսեան, Միրօ Աբդալեան, Օֆֆիկ Բլբուլեան, Նազիկ Մանուկեան, Հայկազ եւ Ծաղկուշ Դաւթեաններ, Հերոս Տէր-Մարտիրոսեան, Ոմն

-700,000 ռիալ. Վազրիկ եւ Անուշ Մարկոսեաններ

-600,000 ռիալ. Մինաս Թահմազեան

-500,000-ական ռիալ. Ռիթա Մինասեան, Մարինէ Մինասեան, Արծիւ Ղազարեան, Մինասեան, Արուսեակ Շահբազեան, Ժանէթ Խուդավերդեան, Տիգրանուհի Մանուրեան, Սաքօ Յակոբեան, Մհեր եւ Վեհանուշ Խուդաբախշեաններ, Թէօ Շահիջանեան, Էդնա Փուլադեան, Միրօ Խաչիկեան, Նապիկ եւ Լալա Մելիքեաններ, Արմոնդ Վարդանեան, Գեւիկ եւ Անդրիա Խաչատրեաններ, Գեւիկ եւ Յուսինէ եւ Գեղանի Ղարիբեաններ, Նարբէ Խաչիկեան, Սարօ Ալումեան, Ասպետ եւ Լորէթա Վարդանեաններ, Ժերմէն Մինասեան, Խորէն եւ Անահիտ Մինասեաններ, Սերոժ եւ Մարօ Ոսկաններ, Այւազեան ընտանիք, Հանրի Ղոյումջեան, Մարգօ Միրզայեան, Հայկազ Պետրոսեան, Մանուրեան ընտանիք, Ալֆրեդ Միրզայեան, Գեւիկ եւ Լուսինէ Ասատրեաններ, Ալբերթ եւ Կարէն եւ Սելին Ղարիբեաններ, Վարուժ եւ Ստելա Վարդանեաններ, Ալվարդ Զարգարեան, Սաքօ Մարկոսեան, Մայեա Նահապետեան, Ռադիկ Նահապետեան, Վարդան եւ Կարինէ Մկրտչեաններ, Արա Թորոսեան, Ռուբինա Դաւթեան, Արշամ Ղազարեան, Ուղաբեր Մանուկեան, Վայլեթ Հայրապետեան, Արա եւ Արին Մկրտչեաններ, Հրանուշ Փանոսեան, Գարեգին Մարկոսեան, Նայիրի եւ Սեւակ Ղազարեաններ, Նոէլ Աբգարեան, Ոմն (2 պարագայ)

-400,000 ռիալ. Ալենուշ եւ Սերժիկ Աստուրեաններ
-300,000-ական ռիալ. Տ. Վարդան քհնյ. Աղաբաբյեան, Մարօ Բաղումեան, Հայդուկ եւ Սիլւա Կարապետեաններ, Ծահմիրզայեան, Մարգարիտ Ալեքսանդրեան, Յարութիւնեան ընտանիք, Էլսիկ Թահմազեան, Ժանէթ Աղախանեան, Մանուէլ Սիմոնեան, Անի եւ Թենի Ծահիջանեաններ, Մինուշ Մելիքեան, Թումանեան ընտանիք, Վարդուշ Յովսէփեան, Վարդուշ Զարգարեան, Գառնիկ Բաղդասարեան
-250,000-ական ռիալ. Էդնա Մանուկեան, Համասփիւռ Մարգարեան, Արփինէ եւ Գառնի Իսայեաններ, Արամէ Նավասարդեան, Փայլիկ Քալանթար Օհանեան, Արթուր եւ Միգանուշ Սարգսեաններ, Րաֆֆի եւ Անի Մինասքանեաններ
-200,000-ական ռիալ. Նայիրի Միրզայեան, Հիլդա Թահմազեան, Երան Միրզայեան, Էլմա Սիմոնեան, Արփա եւ Արէն Մարգարեաններ, Մարօ Ծատուրեան, Մատթէոս Ծահբազեան, Վազգէն եւ Վանուհի Խուդավերդեաններ, Հիլդա Բաբայեան, Արփա Ամիրխանեան, Գառնիկ եւ Նինէթ Միրզախանեաններ, Նորվան Աբդալեան, Սեդա Այվազեան, Լէօ Ծահիջանեան, Զվարդ Թահմազեան, Բալասան Դիլանչեան, Ռիմա Դիլանչեան, Նայիրի Ծահիջանեան, Երուանդ Դաւթեան, Մուշեղ եւ Թալին Մովսիսեաններ, Սոնիկ Սուքիազեան, Վանէ Յովսէփեան, Լուսիկ Ծատուրեան, Գէորգ Յովսէփեան, Ռայմոնդ Մինաս Խաչիկեան, Աբբաս Գիհահ Չին, Ոմն
-150,000-ական ռիալ. Բագրատ Բարղեան, Ջաւէն Կիրակոսեան, Գայիանէ Մինասեան, Աբգար Ղազարեան, Սերինէ Յակոբեան, Վարդուշ Սարուխանեան
-100,000-ական ռիալ. Ովսան Այվազեան, Լորիկ Բաղդասարեան, Անի Յակոբեան, Ծողիկ Քեշիշեան, Խաթունիկ Խաչիկեան, Թահմազեան ընտանիք, Քարլօ Խաչիկեան, Պետրոս Յովսէփեան, Շուշան Թահմազեան, Մեղեդի Մանուկեան
-60,000 ռիալ. Ոմն
-50,000-ական ռիալ. Մասիս Յովսէփեան, Կարօ Դաւթեան, Երուանդ Խաչիկեան, Սեդա Քեշիշեան, Զարդիկ Սուքիազեան

***Հանգուցեալ Արամ Վարդանեանի մահուան քառասունօրեակի առթիւ***

-150,000 ռիալ. Գրիգոր եւ Անահիտ Օհանեաններ

***Հանգուցեալ Եղիա Ծատուրեանի յիշատակին***

-500,000 ռիալ. Ն. Ջ. Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան Երէցների միաւոր, Վազրիկ եւ Անուշ Մարկոսեաններ, Ասպետ եւ Լորէթա Վարդանեաններ, Սեւակ եւ Նայիրի Ղազարեաններ, Մանան Ղազարեան
-300,000 ռիալ. Ս. Մինաս եկեղեցու կանանց յանձնախումբ
-200,000-ական ռիալ. Քլար Խաշաքի, Սարօ Այվազեան, Ալբերթ եւ Մարինէ Մայիլեաններ, Ծանթ Աբգարեան, Ջաւէն Խաչիկեան, Գեւիկ եւ Ժուլիէթ Կարապետեաններ, Սոնիկ Կիրակոսեան
-50,000 ռիալ. Սամուէլ Աստուրեան

***Հանգուցեալ Թումաս Սիմոնեանի յիշատակին***

-500,000 ռիալ. Նոր Ջուղայի Հայուհեաց Բարեգործական ընկերութիւն
-300,000-ական ռիալ. Մարօ եւ Մելինա Սիմոնեաններ, Վիգէն Մարգարեան, Բիանքա Ծահբազեան
-200,000-ական ռիալ. Կարօ եւ Մարօ Պետրոսեաններ, Ռոբերտ եւ Անժել Պետրոսեաններ
-150,000 ռիալ. Համասփիւռ Մարգարեան
-50,000 ռիալ. Սամուէլ Աստուրեան

***Հանգուցեալ Գրիգոր Մինասեանի յիշատակին***

-1,000,000-ական ռիալ. Յասմիկ Ներսիսեան, Երուանդ Մինասեան, Մարջիկ Մինասեան, Սուրէն եւ Նունէ Մինասքանեաններ, Ասպետ Իսաղուլեան
-500,000-ական ռիալ. Յակոբ Մարկոսեան, Կարօ եւ Այդա Յովսէփեաններ, Վրէժ եւ Ծաղկուշ Խաչատրեաններ, Ադրինէ եւ Արարատ Մելիքեաններ
-400,000 ռիալ. «Անի» համալիրի բնակիչներ
-300,000-ական ռիալ. Գալստան Ղազարեան, Ռոզիկ Մինասեան, Մելքոմ Ծիրվանեան, Հայկ եւ Սիրանուշ Յովսէփեաններ, Արսէն եւ Վանուհի Ղազարեաններ, Նորիկ եւ Ռոզան Թահմազեաններ
-250,000 ռիալ. Անդրէ Մարկոսեան
-200,000-ական ռիալ. Մասիս Քեշիշեան, Ջաւէն Խաչիկեան, Զօրիկ Յովսէփեան, Արաքս Թահմազեան, Րաֆֆի Պարսամեան, Վանիա եւ Մարօ Առաքելեաններ, Անէթ Ղազարեան, Երանուշ Թահմազեան
-150,000-ական ռիալ. Սիլվարդ Թորոսեան, Մասիս եւ Վարդուհի Մկրտչեաններ, Իշխան Թահմազեան
-100,000-ական ռիալ. Բալասան Ղարիբեան-Դիլանչեան, Վարդանուշ Զարգարեան, Վահիկ Այվազեան

***Հանգուցեալ Եղսաբէթ Շահբազեան-Ներսիսեանի յիշատակին***

-1,000,000 ռիալ. Քնար եւ Էլմա եւ Սեդիկ եւ Սաթօ եւ Արմինէ

-500,000 ռիալ. Արմենակ Ծատուրեան

-300,000 ռիալ. Անահիտ Թէյմուրեան

-200,000-ական ռիալ. Մինաս Թահմազեան, Զաւէն Մուրադեան, Մասիս Քեշիշեան

***Հանգուցեալ Վազրիկ Բեգիջանեանի յիշատակին***

-1,000,000 ռիալ. Սէյեդ Մոռթեզա Մադանի եւ իր տիկինը

-500,000 ռիալ. Արթին Դաւթեան

-300,000 ռիալ. Վաչիկ Խուդաբախշեան, Սերժիկ եւ Ալենուշ Ասատրեաններ

-250,000-ական ռիալ. Մեհրդոխտ Առհամ Մեհր, Վենուս Թահերեան, Փարինազ Սոհրաբի

-200,000-ական ռիալ. Նայիրի Շահիջանեան, Արսէն եւ Վարդանուշ Ղարիբեաններ, Արա Սարգսեան, Գրիշ եւ Փլոր Թորոսեաններ, Մուսիկ Խաչիկեան, Սերոժ եւ Շաքէ Խանլարեաններ

-150,000 ռիալ. Արուսեակ Պօղոսեան

***Հանգուցեալ Միրանուշ Բաղալեան-Բեգիջանեանի յիշատակին***

-300,000 ռիալ. Սալբիկ Խաչիկեան

-200,000 ռիալ. Եզնիկ եւ Ռազմիկ Մարկոսեաններ

***Հանգուցեալ Տիգրան Ղազարեանի յիշատակին***

-500,000 ռիալ. Անդրէ Ղազարեան

-100,000 ռիալ. Շուշան Թահմազեան

***Հանգուցեալ Էլիզա Մարտիրոսեանի յիշատակին***

-1,000,000 ռիալ. Ռոբերտ Հազարմալեան

-500,000 ռիալ. Սարօ Տէր-Սուքիազեան

-200,000-ական ռիալ. Եղիշ Վարդումեան, Օֆֆիկ Եաղգարեան, Այդա Ղարիբեան, Մայրա Զարգարեան, Սոֆիկ Պօղոսեան

-150,000 ռիալ. Արսէն Շահբազեան

-100,000-ական ռիալ. Պերճիկ Քամարզարեան, Ժենիկ Յակոբեան

***Հանգուցեալ Աբգար Դաւթեանի յիշատակին***

-1,000,000 ռիալ. Խաշաքի ընտանիք

-500,000-ական ռիալ. Հրաչ եւ Ժանէթ Դաւթեաններ, Յարութ եւ Սիրան Բաղդասարեաններ, Հայկազ եւ Ծաղկուշ Դաւթեաններ, Յակոբ Մարկոսեան, Արարատ Մելիքեան, Էդին Յովսէփեան

-300,000-ական ռիալ. Վազրիկ Մարկոսեան, Կայծակ եւ Դիանա Կարապետեաններ

-200,000-ական ռիալ. Գալստան Ղազարեան, Հայկազ Դաւթեան, Խաչատուր Ղազարեան, Գրիգոր Մինասեան, Լուսիկ եւ Մալուս Յովսէփեաններ, Կարինէ Իսրայէլեան, Յովսէփ Աւետեան, Բարսեղ Յովսէփեան

-100,000-ական ռիալ. Երուանդ Խաչիկեան, Երանուշ Դաւթեան

***Հանգուցեալ Ալիս Զարգարեան-Գէորգեանի յիշատակին***

-100,000 ռիալ. Վահիկ Այլազեան

***Հանգուցեալ Ցամիկ Շահբազեան-Հազարմալեանի յիշատակին***

-1,000,000 ռիալ. Վարուժ Մատթէոսեան

-500,000-ական ռիալ. Արսեն Շահբազեան, Այլազեան ընտանիք, Հրաչ եւ Ժանետ Դաւթեաններ

-200.000 ռիալ. Արա եւ Հռիփսիկ Սիմոնեաններ

-150,000 ռիալ. Մասիս Շահբազեան

-100,000 ռիալ. Տիգրան Քեշիշեան

***Հանգուցեալ Մարիամ Իսաղուլեան-Բաղումեանի յիշատակին***

-500,000-ական ռիալ. Սարօ Ալումեան ընտանեօք, Յամիկ Իսայեան, Գառնիկ Զարգարեան

-300,000 ռիալ. Վարուժ եւ Ստելա Վարդանեաններ

-200,000-ական ռիալ. Ռազմիկ եւ Աստղիկ Դիլանչեաններ, Ռիմա Դիլանչեան, Թովլուզ Մինասեան

-150,000-ական ռիալ. Հայկազ Շահնազարեան, Ոմն

-100,000-ական ռիալ. Բալաս Դիլանչեան-Ղարիբեան, Մարիամ Զարգարեան, Մարօ Բաղումեան

***Հանգուցեալ Ռոզիկ Մկրտչեանի յիշատակին***

-500,000-ական ռիալ. Սերժիկ եւ Արմինէ Վարդանեաններ, Թաթուլ Օհանեան

-150,000 ռիալ. Վազգէն Օհանեան

-100,000-ական ռիալ. Նարմենազ Մայիլեան, Ժենիկ Յակոբեան

***Հանգուցեալ Արամ (Արմենակ) Աղախանեանի յիշատակին***

-500,000-ական ռիալ. Մի խումբ ընկերուհիներ, Ն. Ջ. Հայուհեաց Բարեգործական ընկերութիւն
-300,000-ական ռիալ. Հայկազ Ղազարեան, Նորիկ Յարութիւնեան
-200,000 ռիալ. Արաքս Միրզայեան
-150,000 ռիալ. Ռազմիկ Խուդավերդեան
-100,000 ռիալ. Վահիկ Այւազեան

***Հանգուցեալ Երանուհի Իսնիքեան-Տէր Գալստեանի յիշատակին***
-500,000 ռիալ. Էդիկ եւ Սեդա Այւազբալեաններ
-200,000 ռիալ. Քլար Խաչաքի

***Հանգուցեալ Հրաչ Դեհքաչեանի յիշատակին***
-500,000-ական ռիալ. Հերմինէ Թահմազեան, Մասիս եւ Վանուհի Ղազարեաններ
-300,000 ռիալ. Եղիա եւ Նարմիկ Թորոսեաններ

***Հանգուցեալ Մելքոմ Ղարիբեանի յիշատակին***
-3.000.000 ռիալ. Աստղիկ եւ Վանիկ եւ Վահիկ Մարկոսեաններ
-2.000.000-ական ռիալ. Ս. Ա. Վանքի պաշտօնեաներ, Հայկազ եւ Անարոն Շիրվանեաններ
-1.000.000-ական ռիալ. Ալֆրեդ Պօղոսեան, Վրէժ Մինասեան, Մոհամմադ Ռէզա Բահերան, Բաբաք Ամին Ջաւահերի
-900.000 ռիալ. Մահդաւի եղբայրներ
-700.000 ռիալ. Վարուժ Ղարիբեան
-500.000-ական ռիալ. Արթին Դաւթեան, Բաղդասար Շահնազարեան, Ստեփան Մինասեան, Գառնիկ Թորոսեան, Ռազմիկ Անդրիասեան, Զօրիկ Յարութիւնեան, Սեւակ եւ Արմինէ Խաչատրեաններ, Ժիրայր Խոսրովեան, Վազգէն եւ Վանուհի Խուդավերդեաններ, Անդրէ Մարկոսեան, Գառնիկ Զարգարեան, Ժորժիկ Խուդավերդեան, Սարօ Պօղոսեան, Մոհամմադ Ռէզա Մոսաֆա, Բաբաք Քալանթարի, Իման Հաւայի, Փայամ Բէյգի, Փէժման Ահմադ Մուռի, Էլհամ Սէյէդ Շահի, Գիթի Խալիլի
-400.000 ռիալ. Հերմիկ Ղարիբեան, Փէժման Ահմադ Մուռի
-300.000-ական ռիալ. Քլար Խաչաքի, Հայկազ Ղարիբեան, Գրիգոր Մինասեան, Յովսէփ եւ Մագդաղինա Ղարիբեաններ, Նորիկ Միրզայեան, Ժորժիկ Յակոբեան, Սաթենիկ եւ Սօնա Զարգարեաններ, Արմոնդ եւ Սոնիա Փանոսեաններ, Ալի Րէզա Խուզանի
-250.000 ռիալ. Մինաս Թահմազեան
-200.000-ական ռիալ. Եզնիկ Ղարիբեան, Իշխան Թահմազեան, Հայրապետ Եսայի, Վահիկ Այւազեան, Սաթօ Կիրակոսեան, Արա եւ Հռիփսիկ Սիմոնեաններ
-150.000 ռիալ. Երանուհի Շահբազեան
-100.000 ռիալ. Հենրիկ Գրիգորեան

***Հանգուցեալ Թեմրազ Ղազարեանի յիշատակին***
-1.000.000-ական ռիալ. Մարօ Ղազարեան իր զաւակներով, Մասիս եւ Վանուհի Ղազարեաններ
-500.000 ռիալ. Լուսիկ Ղազարեան-Յովսէփեան
-350.000 ռիալ. Արսէն Շահբազեան
-250.000 ռիալ. Աֆօ Միրջանեան
-200.000-ական ռիալ. Վարդգէս Պետրոսեան, Խաչիկ Յովսէփեան, Հայկազ Ղազարեան, Վահիկ Մկրտչեան
-150.000 ռիալ. Գէորգ եւ Արմինէ Յովսէփեաններ

***Հանգուցեալ Հայկուշ Թունեան-Այւազեանի յիշատակին***
-500.000-ական ռիալ. Կարօ եւ Անահիտ Խուդաբախշեաններ
-300.000 ռիալ. Քարլօ եւ Արսինէ Խուդաբախշեաններ
-200.000-ական ռիալ. Ալբերտ Թահմազեան, Գառնիկ Մարկոսեան, Գեղամ Զաքարեան

***Հանգուցեալ Աննիկ Սիմոնեանի յիշատակին***
-1.000.000 ռիալ. Հայ Կանանց Գթութեան միութիւն
-500.000-ական ռիալ. Ն.Ջ. Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան Երէցների միաւոր, Տիգրանուհի Մանուրեան
-300.000-ական ռիալ.Հայ Ուսում. Չհարմահալ միութեան վարչութիւն, Վահիկ Այւազեան, Սոնիա Միրզաբէգեան
-200.000-ական ռիալ. Սաթենիկ Միրզաբէգեան, Արա եւ Հռիփսիկ Սիմոնեաններ, Սեդիկ Բալեան

***Հանգուցեալ Օֆֆիկ Ոսկանեան-Խուդավերդեանի յիշատակին***
-500.000 ռիալ. Ալէմ Զադէ
-300.000 ռիալ. Թելմա Հայրապետեան
-200.000-ական ռիալ. Սեդա եւ Ժիրայր Խոսրովեաններ, Ասուկ եւ Սանդրա Խուդաբախշեաններ

***Հանգուցեալ Յարութիւն Դանիէլի յիշատակին***
-300.000-ական ռիալ. Հայդուկ Մարգարեան, Կարօ Ծատուրեան

***Հանգուցեալ Ազնիւ Ճարիճանեան-Քալանթար Օհանեանի յիշատակին***

-1.000.000 ռիալ. Հերոս եւ Արմինէ Քալանթար Օհանեան

-500.000-ական ռիալ. Տ. Կոմիտաս քհնյ. Թորոսեան, Ժան Աբգարեան, Ծաղկալադեան ընտանիք

-300.000-ական ռիալ. Լուսիկ Իսախանեան, Հայկազ եւ Հրանուշ Ղարիբեաններ, Վոլգա Թահմազեան, Էդիսոն Ղազարեան

-250.000 ռիալ. Անուշիկ Յովհաննիսեան

-200.000-ական ռիալ. «Շուշանիկ» երգչախումբ եւ Կանանց հոգեւոր լսարան, Սոնիկ Կիրակոսեան, Գրիշ եւ Ֆլոր Թորոսեան, Վարուժ եւ Վալերիկ Թորոսեաններ, Էլմա Թահմազեան

-100.000-ական ռիալ. Լալա Բաղդասարեան, Լորիկ Բաղդասարեան

***Հանգուցեալ Դերենիկ Թորոսեանի յիշատակին***

-500,000-ական ռիալ. Ն. Ջ. Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան Երէցների միաւոր, Արմենուհի Էյւազի, Հելէն եւ Հերմինէ Էյւազի, Ռազմիկ Յովսէփեան, Հրաչ Շիրվանեան, Խոսրովեան ընտանիք, Արթին Դաւթեան, Ջօրիկ Յարութիւնեան, Նորիկ Մարկոսեան, Արարատ Մելիքեան, Վաչիկ Խուդաբախշեան, Կարօ Ծատուրեան, Րաֆֆի Խուդավերդեան, Գալօ եւ Տաթեւիկ Բաղդասարեաններ

-400,000 ռիալ. Բարսեղ Յովսէփեան

-300,000-ական ռիալ. Կարին Ասատրեան, Վազրիկ եւ Քառոլին Վարդանեաններ, Վրոյր ու Սիլվա Պետրոսեաններ, Արա Զարգարեան, Ռազմիկ եւ Ժանէթ Իլնիքեաններ, Վահիկ Փանոսեան

-200,000-ական ռիալ. Արա Ամրանեան, Արարատ Աղախանեան, Ալվարդ Զարգարեան, Երանուշ Թահմազեան

-150,000 ռիալ. Վաչէ եւ Հերմինէ Խաչատրեաններ

-100,000 ռիալ. Լուսիկ Թորոսեան, Էդիկ Յակոբեան

<u>**Ծեր Հիւանդների Հիմնադրամ**</u>

***Հանգուցեալ Դերենիկ Թորոսեանի յիշատակին***

-2,500,000 ռիալ. Դերենիկի սկաուտ ընկերներ

***Հանգուցեալ Մելքոմ Ղարիբեանի յիշատակին***

-2.000.000 ռիալ, «Քանանեան» եւ «Կատարինեան» դպրոցների տեսչութիւն, ուսուցչական կազմ եւ ծնողական խորհուրդ

-500.000 ռիալ. Արաքս Բաղումեան

-300.000 ռիալ. Նորիկ եւ Արսինէ Աբդալեաններ

<u>**Գերեզմանատան Բարեզարդման Յանձնախումբ**</u>

-1.000.000 ռիալ. Լորետա եւ Նարեկ Միրզայեաններ՝ Մասիս Միրզայեանի յիշատակին

<u>**Ս. Ա. Վանքի «Տաթեւ» երգչախումբ**</u>

***Տարեկան համերգի առթիւ***

-1.000.000-ական ռիալ, Ն. Ջ. Հայ Կանանց Գթութեան (Կարմիր Խաչ) միութեան վարչութիւն, Տ. Խաչատուր Քհնյ. Զարգարեան, Դիանա Ղազարեան, Զարեհ Թորոսեան, Հուրիկ Մկրտչեան, Խորէն եւ Անահիտ Մինասեաններ

-700.000 ռիալ. Նարէ Սիմոնեան, Էլէնա Յովսէփեան

-500.000-ական ռիալ. Ն. Ջ. Հայոց Առաքելական Եկեղեցեաց վարչութիւն, «Շուշանիկ» Երգչախումբ եւ Կանանց Հոգեւոր Լսարան, Ս. Ա. Վանքի «Կոմիտաս» Երգչախմբի վարչութիւն, Ն. Ջ. Հայոց Ազգ. Մանկապարտէզ-Նախակրթարնի տեսչութիւն եւ ուսուցչական կազմ եւ Ծնողական խորհուրդ, Փերիոյ Կրթասիրաց միութեան Կենտրոնական վարչութիւն, Հայ Ուս. Չհարմահալ միութեան Ն. Ջուղայի Մասնաճիւղի վարչութիւն, Ն. Ջ. Հայուհեաց Բարեգործական ընկերութեան վարչութիւն, Չահրնշահրի Հայ Կանանց Եկեղեցասիրաց միութեան վարչութիւն, Ռիմա Սիմոնեան, Փարելի Թհմազեան, Արգինէ Յովսէփեան, Արփի Դիլանչեան, Քրիստինէ Օհանեան, Վեհանուշ Խուդաբախշեան

-400,000-ական ռիալ. Անդռէ Պարսամեան, Ալինա Ալեքսանդրեան, Սեւանա Խաչատրեան

-350.000 ռիալ. «Շուշանիկ» Երգչախմբի ղեկավար՝ Անուշ Յովհաննիսեան

-300,000-ական ռիալ. Տ. Վարդան Քհնյ. Աղաբաբյեան, Զարսանեթ Պարսամեան, Լիլիան Ալեքսանդրեան, Արեգա Յարութիւնեան, Քառոլին Վարդանեան, Անասիկ Յովսեփեան, Նայիրի Այւազեան

-200.000-ական ռիալ. Արազ Զարգարեան, Անի Նովշադեան

<u>**Ն. Ջ. Հայ Կանանց Գթութեան Միութիւն (Կարմիր Խաչ)**</u>

-10,000,000 ռիալ. Մելքոմ եւ Զեփիւռ Մարտիրոսեաններ իրենց զաւակներով՝ ի յիշատակ Էլիզ Մարտիրոսեանի, Մարջան Խուդավերդեան՝ Էլիզ Մարտիրոսեանի

յիշատակին
-3,000,000 ռիալ. Անուշ Եարիջանեան՝ իր ծնողների՝ Յարութիւն եւ Փերիջան եւ իր քրոջ ու եղբօր՝ Արաքս եւ Մասիս Եարիջանեանների յիշատակին
-2,000,000 ռիալ. Անդրէ Յակոբեան՝ իր մօր Աննիկ Ջոհրաբեանի յիշատակին
-1,000,000-ական ռիալ. Վարդգէս Պետրոսեան՝ Վազրիկ Բեգիջանեանի յիշատակին, Ոմն պարսկուհի
-500,000-ական ռիալ. Ռիմա Դիլանչեան, Վարդգէս Պետրոսեան՝ Խանում Խուդավերդեանի յիշատակին, Խանում Խուդավերդեանի յիշատակին՝ իր զաւակների կողմից, Մահմուդիէ
-250,000 ռիալ. Մասիս եւ Հրաչիկ Դիլանչեաններ՝ Արամ Վարդանեանի յիշատակին
-200,000 ռիալ. Ռազմիկ եւ Աստղիկ Դիլանչեաններ
-Տիկնիկ Փերիոյ տարազով. Լուսիկ Ղազարեան՝ իր ամուսնու Մարտիրոս Յովսէփեանի յիշատակին
-Վիլչեր. Կակաչ Ծատրեանի յիշատակին
-Հոգեճաշ. Հնազանդ Փաթաթանեանի յիշատակին, Էլիզ Մարտիրոսեանի յիշատակին
-Ճաշ. Վոլգա Յակոբեան, Մինէ Մինասեան
-Ճիտի խորոված. Այէն Բաբումեան
-Հաւ. Ֆարահանի
-Հաւ, ձուկ եւ բրինձ. Շահին Ռահաւարդ
-Քաղցրաւենիք. Տ. Կոմիտաս քհնյ. Թորոսեան, Սաթօ
-Սուրճ եւ թխւածք. Մարջան Խուդավերդեան, Մարօ Թորոսեան, Էլիզ Մարտիրոսեանի յիշատակին
-Թխւածքներ. Վալերիկ Թորոսեան, Դերենիկ Թորոսեան, Ծաղկուշ Մինասեան, Ոմն պարսկուհի

***Արցախին նւիրւած դաշտահանդէսի առթիւ***
-5,000,000 ռիալ. Սպահանի Հայոց Թեմի Կրօնական խորհուրդ
-100 ԱՄՆ Դոլար. Ժորժիկ Աբրահամեան
-2,500,000 ռիալ. Գայիանէ Եղիազարեան
-1,000,000 ռիալ. Հայ Ուսում. Չհարմահալ միութիւն

Հայ Ուս. Չհարմահալ Միութիւն
-500,000 ական ռիալ. Սաքօ Սիմոնեան, Սերոժ Վարդանեան՝ Արամ Վարդանեանի յիշատակին
-300,000 ռիալ. Վարդուհի Ղարախանեան
-200,000 ռիալ. Սոնիա Մկրտչեան

***«Մեղեդի» մանկապատանեկան երգչախմբի համերգի առթիւ***
-1,500,000 ռիալ. Սպահանի Հայոց Թեմի Կրօնական Խորհուրդ
-1,000,000 ռիալ. Շահինշահրի Հայ Համայնքի վարչութիւն
-500,000-ական ռիալ. Փերիոյ Կրթասիրաց միութիւն, Ն. Ջ. Հայուհեաց Բարեգործական ընկերութիւն, Ն. Ջ. Հայոց Ազգային «Քանանեան» եւ «Կատարինեան» դպրոցներ, Ն. Ջ. Հայոց Ազգային «Արմէն» կրթահամալիր, Ս. Ա. Վանքի «Տաթեւ» երգչախումբ, Ռիմա Օհանեան, Լիոնթին Աբրահամեան, Վարդան Ալեքսանդրեան, Սոնիա Միրզաբէգեան, Հրանտ Խուդաբախշեան, Հայդուկ Մարգարեան, Եսայի Թորոսեան, Սեդիկ Բաբայեան, Սիրանոյշ Բաբումեան, Հրաչ Ղարախանեան, Արմինէ Ղարախանեան, Կարօ եւ Մարօ Պետրոսեաններ, Վեհանոյշ Խուդաբախշեան, Արսինէ Անդրիասեան, Արփինէ Մովսիսեան, Արթուր Քամարզարեան, Լիլիթ Մարկոսեան, Էմանուէլ Ասատրեան, Մանէ Բարսեղեան, Լուսիկ Ղազարեան
-400,000 ռիալ. Անուշ Յովհաննիսեան
-300,000-ական ռիալ. Ն.Ջ Հայոց Ազգային Մանկապարտէզ-Նախակրթարան, «Շուշանիկ» երգչախումբ, Խաթունիկ Ալեքսանդրեան, Մկրտիչ Աւետումեան, Լիդա Յակոբեան, Վաչէ Շահիջանեան, Ռիթա Մինասեան, Գայիանէ Սարգսեան, Արման Ալեքսանդրեան, Ռայեա Խուդավերդեան, Նազելի Փանոսեան, Անի Մինասեան, Ադելինա Յարութիւնեան, Մենուա Մարկոսեան, Սիսիան Մարկոսեան,Նայիրի Այազեան
-200.000-ական ռիալ. Պերճիկ Քամարզարեան, Սաթենիկ Միրզաբէգեան, Ֆլորա Ալլահվերդեան, Լորէթա Միրզայեան, Ալինէ Յարութիւնեան, Ալֆրեդ Ղարախանեան, Սեւակ եւ Արմինէ Խաչատրեաններ, Սելինէ Օրդուբէգեան, Մինելիա Մարկոսեան, Մարալ Մարկոսեան, Սելին Մարութեան, Նելին Մարութեան, Վարդուհի Ղարախանեան, Իւետ Բալեան, Սելինէ Օրդուբէգեան
-150,000 ռիալ. Լուսիկ Միրզախանեան
-100,000-ական ռիալ. Ֆրիդա Ալլահվերդեան, Գեղանի Ղարիբեան, Վահէ Խաչատրեան

***Միութեան 87-ամեակի առթիւ***
-500.000-ական ռիալ. Աղասի Դաւթեան, Լէօ Շահիջանեան
-300,000 ռիալ. Սոնիա Մկրտչեան

<u>Փերիոյ Կրթասիրաց Միութիւն</u>

-2,000,000-ական ռիալ. Խաչիկ Դաւթեան, Վազրիկ Մարկոսեան, ոմն
-700,000-ական ռիալ. Յովհաննէս Սիմոնեան՝ Էդուարդ Նազարեանի յիշատակին
-650,000-ական ռիալ. Բագրատ Սիմոնեան
-500,000-ական ռիալ. Սոնիկ Կիրակոսեան, Հրանուշ Թահմազեան
-400,000 ռիալ. Վարդգէս Ղուկասեան
-300,000 ռիալ. Մինաս Թահմազեան
-250,000 ռիալ. Ռուբինա Յովսէփեան
-200,000-ական ռիալ. Մարգարիտ Սիրջանեան, Սիրան Ասատրեան, Լուսիկ Առաքէլեան, Քլար Յարութիւնեան
-150,000-ական ռիալ. Հայրօ Քեշիշեան, Հիլդա Ծառուկեան, Անահիտ Իսմայիլեան

<u>Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Շահինշահրի մասնաճիւղ</u>

***Նորակառոյց կենտրոնատեղիի բացման հանդիսութեան առթիւ***

-8.000.000 ռիալ. Ն.Ջ. Հայ Կանանց Գթութեան միութիւն
-1.000.000-ական ռիալ. Շահինշահրի Հայ Կանանց Եկեղեցասիրաց միութիւն,Ն.Ջ. Հայուհեաց Բարեգործական ընկերութիւն, Արմոնդ Հախնազարեան
-500.000-ական ռիալ. Հայ Ուս. Չհարմահալ միութեան Ն.Ջ. մասնաճիւղ, Վարդուշ Մկրտչեան, Շահինշահրի Հայոց Ազգ. «Նարեկ» Մանկապարտէզ-Նախակրթարան, Կարօ Ղարախանեան
-300.000 ռիալ. Վարդան Փանոսեան

***«Լեւոն Շանթ» թատերախմբի «Բեբեկս» կատակերգութեան առթիւ***

-1.000.000 ռիալ. Շահինշահրի Հայ համայնքի Վարչութիւն
-500.000 ռիալ. Տէր Խաչատուր Քհնյ. Զարգարեան

---

*Առաջնորդարանին եւ ազգային կառոյցին առնչւող լուրերն ու թղթակցութիւնները պատրաստում է Ազգային Առաջնորդարանի Հանրային Կապի գրասենեակը, համայնքային եւ կրօնական արարողութիւնների՝ «Ալիք»-ի թղթակիցները, «Արարատ» Միութեան՝ Երանուչ Թահմազեանը, Շահինշահրի հայ համայնքինը եւ տեղի «Արարատ» Միութեան մասնաճիւղինը՝ Վիոլեթ Յարութիւնեանը եւ Աիդա Մուրադեանը։*

*Որոշ լուսանկարներ տրամադրում են Գեւիկ եւ Անդրէ Խաչատրեաններն ու Ֆոտո Հայկը։*

ՄԵՐ ՀԱՍՑԷՆ
خلیفه گری ارامنه اصفهان و جنوب ایران
صندوق پستی ۸۱۷۳۵/۱۱۵
Armenian Cathedral - P.O.Box 81735-115
New - Julfa, Isfahan, Iran
WWW.Norjugha.ir
WWW.Vank.ir
E-mail: Sourbv@Yahoo.com
**Tel:** **+98-31-36243471-2**
**Fax:** **+98-31-36270999**